Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի

«ՍԵՐՎԻՍ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՌԿԱ ԲԱԺՆԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը.....4

Ծրագրի նկարագիրը 5

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ... .23

ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 49

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ..... 49

Պարտադիր դասընթացներ 49

Կամընտրական դասընթացներ 65

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ 68

Պարտադիր դասընթացներ 68

Կամընտրական դասընթացներ 71

3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 74

Պարտադիր դասընթացներ 74

Այլ կրթական մոդուլներ..... 116

5. Դասընթացների քարտեզագրում..... ....Հավելված

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսանողներ,

XXI դարում գիտելիքը մեծ արժեք է: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և ձեռք բերեք տեսական ու գործնական խորը գիտելիքներ, կայանաք որպես որակյալ ու մրցունակ մասնագետներ:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

2007 թվականից Գավառի պետական համալսարանում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ «Սերվիս» մասնագիտության գծով որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի (240 կրեդիտ՝ բակալավրիատում) կուտակման արդյունքում:

Կրթական համակարգի ընդհանուր բարեփոխումների գործընթացում կարևորվում է մասնագիտական կրթության բարեփոխումը, բազմակողմանի զարգացած, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող մասնագետների պատրաստումը: Մասնագիտական ուսուցումն ընթանում է՝ ըստ կրթական չափորոշիչների, որակավորումների ներբուհական շրջանակի և Գավառի պետական համալսարանի բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում գործող՝ «Սերվիս» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ: «Սերվիս» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում լեզվաբանական, ընդհանուր հումանիտար գիտելիքներ, միաժամանակ, խորացնում օտար լեզուների (անգլերեն, ռուսերեն, գերմաներեն) իմացությունը, տիրապետում են համակարգչային տեխնիկային, ճիշտ հաղորդակցման հմտություններին, տիրապետում են ժամանակակից սերվիսին վերաբերող կարևոր խնդիրներին, ստացած գիտելիքները և հմտությունները կարող են օգտագործել ժողտնտեսության տարբեր բնագավառներում:

Սկզբունքորեն փոխվել է դասավանդման ձևը, հարստացել բովանդակությունը: Ավանդական ուսուցումը զուգորդվում է կրթական արդի տեխնոլոգիաների, համագործակցային, անձնակողմնորոշիչ, զարգացնող ուսուցման հետ, որն իրականացվում է բազմաթիվ արդյունավետ մեթոդներով:

Կարևորվել են կրթության ելքային արդյունքները, սովորողների ինքնուրույն աշխատանքները, ակտիվությունը գործնական, սեմինար աշխատանքների ժամանակ: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքներին:

«Սերվիս» մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել սոցիալ-տնտեսական ծառայությունների ոլորտում, զբոսաշրջային ընկերություններում,պետական ծառայության ոլորտներում, ինչպես նաև ուսումը շարունակել հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում:

Համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ որակյալ և մրցունակ մասնագետներ պատրաստելու համար:

Մաղթում եմ հաջողություն մասնագիտության ձեռքբերման ճանապարհին:

ԳՊՀ ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Զբոսաշրջությունը տնտեսության զարգացման անհրաժեշտ և կարևոր ոլորտներից մեկն է: Ոլորտի կազմակերպման և կայացման գործին օգնելու համար անհրաժեշտ է գրագետ ու բանիմաց կազմակերպիչներ: Այդ հրամայականով պայմանավորված Գավառի պետական հալսարանում զբոսաշրջության մասնագետների պատրաստման նպատակով իրականացվել են գործնական աշխատանքներ մասնագիտական կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ:

ՀՀ տարածքը գլոբալ և տեղական առումով զբոսաշրջային դրախտ է: Բացառիկ բնական պայմանները, բնության գեղատեսիլ վայրերը, հուշարձանները, մարդկային հազարամյակների խորքից մեզ հասած պատմամշակութային ժառանգությունը, նոր ու նորագույն մշակութային գոհարները զբոսաշրջության զարգացման համար ստեղծում են լավ պայմաններ:

Հանրապետությունում առկա է բավարար մակարդակի ենթակառուցվածքներ զբոսաշրջության զարգացման համար:

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված կրթական ելքային արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ամփոփիչ ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական ելքային արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

«ՍԵՐՎԻՍ»

Մասնագիտական կրթական ծրագրի /այսուհետ Ծրագիր/ նկարագիրը

Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	**«ՍԵՐՎԻՍ»** 101801.01.6
Բուհը	**Գավառի պետական համալսարան**
Ծրագիրը հավատարմագրված է	**-**
Շնորհվող որակավորումը	**Սերվիսի բակալավր**
Կրթական աստիճանը	**բակալավր**
Ուսումնառության լեզուն	**հայերեն**
Ուսուցման ձևը	**առկա**
Ծրագրի ընդունելության չափանիշները.	**Ծրագրի դիմորդը պետք է ունենա. միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթություն**, • **Ընդունելությունը կատարվում է մրցույթային կարգով՝** աշխարհագրություն կամ օտար լեզու /պարտադիր/, հայոց լեզու և գրականություն /պարտադիր/, առարկաներից գրավոր քննությունների արդյունքի հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

1. 240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը:

Ծրագրի ելքային կրթական արդյունքները ներառում են հետևյալ մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները.

(Գիտելիք)

- Գիտենա սերվիսագիտության տեսական հիմունքները, դրա պատմական զարգացումը և արդի միտումները:
- Տիրապետի սերվիսային գործունեության կազմակերպման իրավական, տնտեսական և էթիկական կարգավորումներին:
- Գիտենա մենեջմենթի, մարքեթինգի, հաղորդակցության և հաճախորդամետ մոտեցումների հիմնական սկզբունքները:
- Գիտենա սպառողական վարքագծի, շուկայի պահանջարկի և սպասարկման հոգեբանական առանձնահատկությունները:
- Տիրապետի տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին սերվիսային գործընթացներում:
- Գիտենա որակի կառավարման և սպասարկման միջազգային և ազգային ստանդարտները:

(Կարողություն)

- Կարողանա ստացած գիտելիքները կիրառել իրականացնելու պրակտիկ մասնագիտական գործունեություն սերվիսի և զբոսաշրջության ոլորտներում, իրենց տեսական գիտելիքներով և գործնական կարողություններով ու հմտություններով:

- Կարողանա կազմակերպել և արդյունավետ ղեկավարել տարբեր սերվիսային գործընթացներ:
- Վերլուծել շուկայի պահանջարկը և առաջարկը, մշակել զարգացման ռազմավարական ծրագրեր:
- Կիրառել հաճախորդամետ և միջմշակութային հաղորդակցական մոտեցումներ:
- Մշակել և իրականացնել մարքեթինգային և PR ռազմավարություններ սերվիսային ոլորտում:
- Իրականացնել ծառայությունների գների ձևավորում, ֆինանսական վերլուծություն և ռիսկերի կառավարում:
- Կիրառել ժամանակակից SS լուծումներ և ավտոմատացված գործիքներ բիզնես գործընթացների կառավարման համար
- Տիրապետել համայնքների աջակցության և ներգրավվածության ծրագրերին՝ տեղական մարմինների կողմից տուրիզմի կառավարչական գործունեությունում լիարժեք մասնակցություն ունենալու, նվազեցնելով բնապահպանական խնդիրները՝ կապված աղքատության և գործազրկության հաղթահարման հետ:

(Հմտություն)

- Գնահատի զբոսաշրջության դրական և բացասական ազդեցությունները, օպտիմալ ձևով օգտագործի շրջակա միջավայրի այն ռեսուրսները, որոնք զբոսաշրջության զարգացման համար բաղադրիչներն են՝ պահպանելով կարևորագույն բնապահպանական գործընթացները, բնական ժառանգությունը, կենսաբազանությունը՝ որպես եկամտի աղբյուր, որը նպաստում է ներդրումների ներհոսքին և ենթակառուցվածքների զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը, արժևորի հյուրընկալող համայնքների սոցիալ-մշակութային ինքնույուլնությունը, պահպանի նրանց նյութական և ոչ նյութական

մշակութային ժառանգությունը ու ավանդական արժեքները և նպաստի միջմշակութային փոխըմբռնմանն ու հանդուրժողականությանը:

- Տիրապետի սերվիսային գործունեության մեջ կիրառվող մասնագիտական էթիկային և գործարար հաղորդակցության մշակույթին:
- Կիրառի տվյալների հավաքագրման, վերլուծության և հետազոտության մեթոդներ՝ հիմնավորված առաջարկներ մշակելու նպատակով:
- Տիրապետի ժամանակակից սերվիսային մոդելներին և նորարարական գործիքներին մրցունակ ծառայությունների ստեղծման համար:
- Կիրառի որակի կառավարման ստանդարտներ և ապահովի ծառայությունների համապատասխանությունը միջազգային և տեղական նորմերին:
- Տիրապետի խնդիրների վերլուծության, իրավիճակային որոշումների կայացման և ստեղծագործական լուծումների մշակման հմտություններին:
- Տիրապետի միջմշակութային հաղորդակցության և բազմազանության կառավարման գործելակերպերին՝ գլոբալիզացված շուկայում:

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել սերվիսի գծով մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտների համար:

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

Ծրագրի նպատակն է.

Սերվիսագիտության մասնագիտության նպատակն է հանդիսանում պատրաստել տեղական և միջազգային աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ, որոնք տիրապետում են սերվիսային գործունեության տեսական հիմունքներին, ժամանակակից տեխնոլոգիաներին և պրակտիկ հմտություններին՝ ապահովելով հյուրընկալության, հանրային սննդի, զբոսաշրջության և այլ սերվիսային ոլորտների կայուն զարգացումը, բարձր որակի ծառայությունների մատուցումը:

Կրթական նպատակներ

Տեսական գիտելիքների ձևավորում

- **Ապահովել** սերվիսի տեսության, հյուրընկալության և զբոսաշրջության ինդուստրիաների հիմնարար գիտելիքների համակարգված ուսուցումը
- **Զարգացնել** սերվիսային մարկետինգի, կառավարման և տնտեսագիտության բնագավառներում խորը իմացություն:

Պրակտիկ կարողությունների զարգացում

- Ձևավորել օպերացիոն գործունեության կազմակերպման և համակարգման մասնագիտական հմտություններ
- Զարգացնել հաճախորդների սպասարկման և հաղորդակցության բարձր մակարդակի կարողություններ:

Մասնագիտական կոմպետենցիաների ձեռքբերում

- Պատրաստել մասնագիտական էթիկայի, պատասխանատվության և ազնվության բարձր չափանիշներով առաջնորդվող մասնագետներ, ձևավորել միջանձնային հարաբերությունների կառավարման կոմպետենցիաներ,
- Պատրաստել մասնագետներ, որոնք համապատասխանում են սերվիսային ինդուստրիայի ներկայիս և ապագայի պահանջներին
- Խթանել նորարարական և ձեռնարկատիրական մտածողության ձևավորումը
- Ապահովել սերվիսային բիզնեսի գործարկման և կառավարման համալիր գիտելիքներ
- Ձևավորել ռիսկերի կառավարման և ռազմավարական պլանավորման կոմպետենցիաներ:

Կառավարչական կարողությունների զարգացում

- **Պատրաստել** միջին և բարձրագույն կառավարչական դիրքեր զբաղեցնելու ունակ մասնագետներ
- **Զարգացնել** ռեսուրսների պլանավորման, բաշխման և օպտիմալացման հմտություններ
- Ձևավորել անձնակազմի ընտրության, զարգացման և մոտիվացիայի կարողություններ
- Ապահովել որակի կառավարման համակարգերի ներդրման և վերահսկման կոմպետենցիաներ:
- Ձևավորել գիտական հետազոտությունների իրականացման մեթոդաբանական հիմքեր, ապահովել վիճակագրական մեթոդների և հետազոտական գործիքների կիրառման հմտություններ, կայուն զարգացման սկզբունքների և կանաչ տեխնոլոգիաների կիրառման մոտեցումներ:

Սոցիալական պատասխանատվության ձևավորում

- Զարգացնել էթիկական գործարարության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հասկացողություն

Ապահովել ներառական սպասարկման և սոցիալական արդարության սկզբունքների պահպանում, սոցիալական և էկոլոգիական պատասխանատվության գիտակցում

Մշակութային ժառանգության պահպանում և զարգացում

- Խթանել տեղական մշակութային ավանդույթների և գաստրոնոմիական ժառանգության գնահատումը
- Ձևավորել ազգային և տարածաշրջանային զբոսաշրջության զարգացման նպատակաուղղվածություն
- **Զարգացնել** մշակութային տուրիզմի և ծառայությունների արժեքային առաջարկի ստեղծման կարողություններ
- Ապահովել միջմշակութային երկխոսության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված սպասարկման մոտեցումներ

Այսպիսով, ՍԵՐՎԻՍ մասնագիտությունը նպատակ ունի պատրաստել ոչ միայն սպասարկման պրակտիկ գիտելիքներ ունեցող, այլև դրանք վերլուծելու, բարելավելու և ղեկավարելու կարողություն ունեցող լիդերներ, որոնք կարող են նպաստել սպասարկման ոլորտի զարգացմանը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում:

Մասնագիտության նպատակն է ձևավորել շրջանավարտներ, որոնք ի վիճակի կլինեն.

- **Հասկանալ ծառայությունների տնտեսագիտական էությունը**. Տարբերակել ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները և կիրառել դրանց կառավարման արդիական մեթոդներ՝ ապահովելով տնտեսական արդյունավետություն:
- **Կազմակերպել և ղեկավարել սպասարկման գործընթացները**. Ծրագրել, իրականացնել և վերահսկել ծառայությունների մատուցման բոլոր փուլերը՝ սկսած պահանջարկի վերլուծությունից մինչև հաճախորդի բավարարվածության գնահատում:
- **Մշակել և իրականացնել որակի կառավարման համակարգեր**. Բարձրացնել ծառայությունների որակը և հաճախորդների բավարարվածությունը՝ կիրառելով միջազգային ստանդարտներ և նորարարական մոտեցումներ:
- **Զարգացնել հաղորդակցման և միջանձնային հմտություններ**. Արդյունավետորեն շփվել հաճախորդների, ենթակաների և գործընկերների հետ, լուծել կոնֆլիկտային իրավիճակները և ձևավորել հաճախորդակենտրոն մշակույթ:
- **Կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ**. Օգտագործել տեղեկատվական և կառավարման համակարգեր՝ սպասարկման գործընթացների օպտիմալացման և արդյունավետության բարձրացման համար:

Ելնելով բուհի առաքելությունից՝ Կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները.

Կրթություն.

- Ստեղծել համագործակցային միջավայր՝ իրականացնելու բակալավրի պատրաստման կրթական ծրագրի որակի ապահովման ազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն,

- Տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ սերվիսի բնագավառում հիմնարար պատրաստվածություն ձեռք բերելու համար,
- Ձևավորել սերվիսի ոլորտին անհրաժեշտ ընդհանրական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ,
- Նպաստել շրջանավարտների մրցակցությանը աշխատաշուկայում և նրա՝ որպես հասարակության վերլուծական մտածողություն ունեցող անդամի ձևավորմանը,
- Զարգացնել ուսանողների մոտ սովորելու, նորն ընդունելու և անընդհատ կատարագործվելու հմտություններ:

Հանրային ծառայություն.

- Նպաստել ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ ներգրավելով նրանց արտաքին շահակիցներին մատուցվող մասնագիտական ծառայությունների տրամադրման գործընթացին:

11. Սերվիսի բակալավր Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Ա1. Գիտի բնական գիտությունների, ժամանակակից տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների և կիրառման հնարավորությունները սպասարկման գործընթացներում, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի կիրառման հնարավորությունները սերվիսի ոլորտում:

Ա2. Ճանաչի սերվիսի տեսության, սերվիսագիտության և հյուրընկալության, Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձանների և ՀՀ զբոսաշրջային ռեսուրսների, սերվիսի, ռեկրեացիոն, Հայկական սփյուռքի աշխարհագրության հիմնական սկզբունքները: Ունենա սկզբունքների և մեթոդների վերաբերյալ հիմնարար գիտելիք:

Գիտի սերվիսագիտության տեսական և գործնական հիմքերի, զարգացման փուլերի և արդի միտումների մասին, տիրապետի ժամանակակից սերվիսային մոդելներին և նորարարական գործիքներին՝ մրցունակ ծառայությունների մատուցելու համար, սերվիսային ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները:

Ա3. Սերվիսային գործունեության, զբոսավարության կազմակերպման միջազգային չափորոշիչները և ստանդարտները, տուրիզմի հիմնախնդիրները, տուրիզմի հատուկ տեսակները՝ գործունեության կազմակերպման սկզբունքների վերաբերյալ գիտելիք (ագրոտուրիզմ, էկոլոգիական տուրիզմ):

Գիտի սպասարկման ծառայությունների նախագծման, կազմակերպման և վերլուծության գործընթացները, սպասարկման ոլորտի միջազգային և ազգային չափանիշները, իրավական և էթիկական նորմերը, բանավոր և գրավոր հաղորդակցական

հմտությունները, զբոսաշրջային արդյունաբերության կառուցվածքի, դեստինացիայի կառավարման, զբոսաշրջության հատուկ ձևերի առանձնահատկությունները:

Ա4. Գիտի զբոսաշրջության ոլորտների համակարգային կառուցվածքը, հյուրընկալության, հանրային սննդի և զբոսաշրջության ոլորտների արդյունավետ կառավարման առանձնահատկությունները:

Ա5. Գիտի հաճախորդների պահանջների վերլուծության, սպասարկման որակի գնահատման և հետազոտական մեթոդների առանձնահատկությունները, կիրառելով՝ ժամանակակից մենեջմենթի և որակի ապահովման գործիքներ:

Ա6. Գիտի կառավարման, մարքեթինգի, բիզնես հաղորդակցության և կառավարման հոգեբանության սկզբունքները, տուրիստական, հյուրանոցային, ռեստորանային և այլ սպասարկման ենթաոլորտների առանձնահատկությունները, հյուրանոցային ծառայությունների տեսակները, միջազգային հյուրանոցային ցանցերի կառավարման համակարգերը, կայուն զարգացման և կայուն տուրիզմի առանձնահատկությունները:

Ա7. Գիտի սերվիսային կազմակերպությունների կառավարման և ռազմավարական պլանավորման հիմնական սկզբունքները, ֆինանսատնտեսական գործիքները, թիմային աշխատանքի, առաջնորդության և կառավարման մեթոդները:

Ա8. Գիտի սերվիսային գործունեության կազմակերպական և իրավական հիմքերը, իրավական ակտերը և կարգավորող նորմերը, սպառողների իրավունքների պաշտպանության օրենսդրական դաշտը:

Ա9. Գիտի մասնագիտական էթիկայի և կորպորատիվ պատասխանատվության սկզբունքները, սերվիսային մշակույթի, էթիկայի և հաղորդակցական հմտությունների տեսական հիմքերը:

Ա10. Գիտի էկոհամակարգերի գործունեության հիմնական սկզբունքները, պոպուլյացիաները, գեոոսֆերայի և էկոսֆերայի կապը մարդու՝ գեոսֆերայի վրա ունեցած ազդեցության գեոէկոլոգիական հետևանքները, կանաչ տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը, Տուրիստական երկրագրության, Հայաստանի ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության փոխկապվածությունը երկրի բնառեսուրսային ներուժը գնահատելու համար, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնության հիմնահարցերը:

Բ. Կրթական ծրագրի գործնական մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը

Բ1. Կարող է սերվիսային գործընթացներում Ժամանակակից տեխնոլոգիաների, աշխարհագրական տեղեկատվական համակարգերի թվային գործիքների արդյունավետ կիրառմամբ մշակել տեխնիկական փաստաթղթեր (տեխնիկական առաջադրանք,

նկարագրություն, հրահանգ), ինչպես նաև մասնակցել իրականացվող գիտահետազոտական և փորձանախագծային աշխատանքներին:

Բ2. Կարող է Սերվիսագիտության տեսական և մեթոդաբանական հիմքերը ճիշտ համադրել՝ ապահովելով ծառայության որակի բարձրացումը, հաճախորդի բավարարվածության և հավատարմության ձևավորումը, հաճախորդակենտրոն մշակույթի յուրացումը՝ միջազգային և ազգային սերվիսային ստանդարտներին համապատասխան, հաճախորդի հետ արդյունավետ, բարեհամբույր և նպատակաուղղված շփումը՝ ներառելով մի քանի առանցքային բաղադրիչ՝ բարեկիրթ և հստակ խոսք, վստահություն և իմացություն, ողջախոհ վերաբերմունք, մասնագիտական էթիկայի պահպանում:

Բ3. Ժամանակակից սերվիսային մոդելներին և նորարարական գործիքներին, բիզնես գործընթացների կառավարման, մրցունակ ծառայությունների ստեղծման, տվյալների հավաքագրման, վերլուծության և հետազոտության մեթոդներին տիրապետելու գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է ստեղծել սերվիսային մոդելներ, որոնք վերաբերվում են հաճախորդներին՝ արժեք ստեղծելու նպատակով ծառայություններ մատուցմանը, նորարարական գործիքներ, որոնք օգնում են բարելավել ծառայությունների որակը, արդյունավետությունը:

Բ4. Սերվիսային գործընթացներ կազմակերպելու և արդյունավետ ղեկավարելու, ծառայությունների գների ձևավորեու, ֆինանսական վերլուծություն և ռիսկերի կառավարում, սերվիսային ոլորտում մարքեթինգային և PR ռազմավարություններ իրականացնելու գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է Վերլուծել սպասարկման ոլորտի տարբեր համակարգերի կառուցվածքն ու գործունեության առանձնահատկությունները, կազմակերպել և ղեկավարել սպասարկման գործընթացները՝ ապահովելով ծառայությունների արդյունավետությունն ու որակը, կիրառել մարքեթինգային, կառավարման և ֆինանսատնտեսական գործիքներ՝ սերվիսային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Բ5. Խնդիրների վերլուծության, իրավիճակային որոշումների կայացման և ստեղծագործական լուծումների մշակման, միջմշակութային հաղորդակցության և կառավարման գործելակերպերի, սպառողական վարքագծի, շուկայի պահանջարկի և սպասարկման հոգեբանական առանձնահատկությունների վերաբերյալ գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է կատարել իրավիճակային վերլուծություն, որոշումների կայացման պրոֆեսիոնալ կարողությունների դրսևորում, սերվիսային ոլորտում հետազոտություններ իրականացնելու, տվյալների հավաքագրելու և վերլուծության և կոնֆլիկտների կառավարման ունակություններ, սպասարկման հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն:

Բ6. Սերվիսագիտության տեսական ու մեթոդաբանական սկզբունքների, սերվիսային գործունեության կազմակերպման իրավական, տնտեսական և էթիկական կարգավորումների, մենեջմենթի, մարքեթինգի, հաղորդակցության և հաճախորդամետ մոտեցումների հիմնական սկզբունքների վերաբերյալ գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է կատարել սերվիսագիտության տեսական ու մեթոդաբանական, իրավական և էթիկական նորմերի, մենեջմենթի, մարքեթինգի հիմնական սկզբունքների գործնական կիրառում սպասարկման գործընթացում, կիրառել բանավոր և գրավոր հաղորդակցական հմտություններ, արդյունավետ գործակցել բազմամշակութային միջավայրում, վերահսկել և գնահատել սպասարկման որակը՝ համադրելով այն միջազգային ստանդարտներին, կիրառել գիտական վերլուծության մեթոդներ սպասարկման ոլորտի զարգացման միտումների գնահատման և հիմնավոր լուծումների առաջարկման համար:

Բ7. Սերվիսային գործունեության կառավարման, կազմակերպման և որակի ապահովման հիմնարար մոդելների ու մեթոդների, հետազոտություններ իրականացնելու, տվյալների հավաքագրելու, վերլուծելու, սպասարկման ոլորտի զարգացման միտումները գնահատելու, սերվիսի ոլորտում սպասարկման որակի գնահատման և հետազոտական մեթոդների առանձնահատկությունների, սպասարկման միջազգային և ազգային ստանդարտների վերաբերյալ գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է պլանավորել և կազմակերպել ծառայությունները, մշակել սպասարկման գործընթացի պլաններ, արդյունավետորեն բաշխել աշխատանքային պարտականությունները թիմի անդամների միջև և կոորդինացնել գործընթացները, կիրառի տվյալների հավաքագրման, վերլուծության և հետազոտության մեթոդներ, որակի կառավարման ստանդարտներ և ապահովել ծառայությունների համապատասխանությունը միջազգային և ազգային ստանդարտներին, իրականացնել ծառայությունների գների ձևավորում, ֆինանսական վերլուծություն և ռիսկերի կառավարում:

Բ8. Սպասարկման ոլորտի տարբեր համակարգերի կառուցվածքն ու գործունեության առանձնահատկությունների, հաճախորդների պահանջների ուսումնասիրություն և բավարարության գնահատման: Գիտելիքահեն տնտեսության հիմնական սկզբունքների, ռազմավարական պլանավորման և որոշումների ընդունման գործընթացների գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է Կատարել շուկայական հետազոտություններ, գնահատել մրցակցային միջավայրը և մշակել շուկայական դիրքավորման ռազմավարություններ, գնահատել մատուցվող ծառայությունների որակը, հայտնաբերել թերությունները և մշակել դրանք շտկելու միջոցառումներ, ինքնուրույն բացահայտել մասնագիտական խնդիրները, առաջարկել դրանց լուծման նորարարական և արդյունավետ ուղիներ:

Իրականացնել սերվիսային կազմակերպությունների ռազմավարական պլանավորում՝ ըստ հիմնական սկզբունքների մասնակցել ռազմավարական պլանավորման և զարգացման նախագծերին, վերլուծել շուկայի պահանջարկը և առաջարկը:

Բ9. Սերվիսի տեսության և հյուրընկալության ինդուստրիայի հիմնական հայեցակարգերի, սկզբունքները և զարգացման պատմական փուլերի, հաճախորդների սպասարկման գործընթացների տեսական մոդելներին և մեթոդաբանության, հաճախորդների պահանջների ուսումնասիրություն և բավարարության գնահատման գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է գնահատել սերվիսային և հյուրընկալության ինդուստրիայի արդի միտումները, հայեցակարգերն ու սկզբունքները, զարգացման պատմական փուլերը, հաճախորդների սպասարկման գործընթացների տեսական մոդելները և մեթոդաբանությունը, բավարարվածության չափման գործիքները, հասկանալ հաճախորդների պահանջները, սպասելիքները և վարքագիծը:

Բ10. էկոհամակարգերի վրա զբոսաշրջության դրական և բացասական ազդեցությունների, ենթակառուցվածքների զարգացման և զբոսաշրջային դեստինացիաների փոխադարձ կապի, սերվիսի տարածքային կազմակերպման կատարելագործման և զարգացման հիմանական ուղղությունների վերաբերյալ գործնական գիտելիք և կարողություն:

Կարող է խթանել էկոլոգիական կրթությանը և բարձրացնել էկոգիտակցությունը բնապահպանական արժեքների վերաբերյալ, ստեղծել եկամուտ և աշխատատեղեր, որոնք կպահպանեն համայնքները և կնվազեցնեն անօրինական կամ բնությանը վնասող գործունեությունը, ենթակառուցվածքների զարգացման և զբոսաշրջային դեստինացիաների փոխադարձ կապի ամրապնդմանը, որը հնարավորություն է տալիս բնության պահպանությանը, տեղական համայնքների աջակցությանը և կայուն զբոսաշրջությանը: Այս վայրերում այցելուները հնարավորություն ունեն վայելելու բնությունը առանց այն վնասելու այն:

Գ. Կրթական ծրագրի ընդհանրական կոմպետենցիաների շրջանակը

Գ1. Հասկանալի ու գրագետ գրավոր և բանավոր խոսք հայերեն և օտար լեզուներով. ինֆորմատիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների տերմինների և համապատասխան միջոցների օգտագործում՝ մտքերը սահուն ձևով արտահայտելու, հիմնավորված եզրակացություններ, դատողություններ անելու և դրանք բանավոր և գրավոր ձևերով պատշաճ ներկայացնելու կարողություն:

Կարող է

- գրավոր և բանավոր ներկայացնել հասարակ տեքստեր և ցուցադրություններ, ինչպես նաև առավել բարդ և գիտական տեքստեր՝ ավարտական տարում օգտագործելով հաղորդակցման տարբեր հմտություններ:

- ամփոփել և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հարցերի վերաբերյալ ներկայացնել գրավոր և բանավոր դիրքորոշումներ, պարզ և հստակ խորհրդատվություն:
- հաղորդակցվել առնվազն երկու մասնագիտական օտար լեզուներով,
- կազմել և թարգմանել պարզ տեքստեր մասնագիտական թեմայի շուրջ, ունենալ հաղորդակցվելու ունակություն:
- կարդալ և ուսումնասիրել հայերեն և օտարալեզու մասնագիտական գրականություն, կազմել ակնարկներ, ստեղծել անձնական էլեկտրոնային գրադարան և օգտագործել աշխատանքային գործընթացում:

Տիրապետում է

- մասնագիտության համապատասխան ոլորտում կիրառվող եզրույթներին, արտահայտություններին, գործնական միջոցներին:
- սեփական աշխատանքի արդյունքների ներկայացման, տեղեկատվության պատկերավորման ժամանակակից մոտեցումներին:

Գ2. Առաջնորդություն, թիմային աշխատանք և պատասխանատվություն. թիմում ներդրում ունենալու և աշխատելու, միջառարկայական համագործակցություն իրականացնելու և այլ մասնագիտական բնագավառների ներկայացուցիչների հետ որպես փորձագետ աշխատելու, աշխատանքի համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Գիտի

- Թիմում աշխատելու հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունները և միջոցները:

Կարող է

- Արդյունավետորեն կատարել որոշակի գործառույթներ թիմում, հանդես գալ նախաձեռնություններով, մասնակցել ընդհանուր թիմային որոշման կայացմանը, ստանձնել և կատարել առաջադրանքներ:
- Յուրացնել և արդյունավետ կերպով կիրառել ժամանակի կառավարման, համագործակցության և թիմային աշխատանքի նոր եղանակները օգտագործելով մատչելի թվային գործիքները և ծառայությունները:
- Տրամադրել խորհրդատվական-փորձագիտական օգնություն թիմի անդամներին:

Գ3. Համակարգչային հմտություններ և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործում. մասնագիտական ոլորտում աշխատանքները դյուրացնելու, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվություն որոնելու, մշակելու և վերլուծելու կարողություն, մաթեմատիկական բնույթի խնդիրներ լուծելու կարողություն:

Գիտի

- տվյալների հավաքման, պահպանման և մշակման հիմնական սկզբունքները և մեթոդները:

- տվյալների անվտանգության և պաշտպանության ժամանակակից մեթոդները:

Կարող է

- հավաքել, վերլուծել և մշակել տվյալներ՝ օգտագործելով քանակական և որակական վերլուծության մեթոդներ,
- կիրառել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ և գործիքներ տվյալների վերլուծության և խնդիրների լուծման համար,
- օգտագործել համագործակցային առցանց գործիքներ և հարթակներ:

Տիրապետում է

- համակարգչային հիմնական ծրագրերին (Microsoft Office փաթեթ՝ Word, Excel, PowerPoint),
- համացանցային տեխնոլոգիաներին և որոնողական համակարգերին,
- էլեկտրոնային գրադարանների և տեղեկատվական համակարգերի օգտագործման հմտություններին,
- տվյալների վերլուծության և մշակման գործիքների կիրառման միջոցներին,
- վիրտուալ հանդիպումների և հեռավար աշխատանքի հարթակների (Zoom, Teams, Slack) կիրառման գործիքներին,
- տվյալների պատկերավորման (վիզուալիզացիա) ժամանակակից գործիքներին:

Գ4.Հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, բնագիտական բնագավառի դասընթացների, հոգեբանական հասկացութիունների, հայ եկեղեցու պատմության, տուրիզմի սոցիոլոգիայի հիմնական դրույթների իմացություն:

Գիտի

- հումանիտար, բնագիտական և տնտեսագիտական գիտությունների ոլորտներում կիրառվող ընդհանուր հասկացությունները, սահմանումները:

Կարող է

- կիրառել սեփական գիտելիքները տարբեր ոլորտներում, պահպանելով տեխնիկական, տնտեսական, իրավական, հոգեբանական, սոցիալական, հոգևոր, էկոլոգիական, կենսագործունեության անվտանգության պահանջները,
- դրսևորել քննադատական և հիմնավորված վերլուծական մոտեցում՝ մասնագիտական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար:
- հաշվի առնել մասնագիտական աշխատանքի հնարավոր հետևանքները:
- մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում:

Տիրապետում է

- վերոնշյալ բնագավառների ուսումնասիրության մեթոդներին ու մոտեցումներին:
- սերվիսի ոլորտի սոցիալ-էթիկական սկզբունքներին:

Գ5. Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողություն և անհրաժեշտության դեպքում 1-ին բուժօգնության ցուցաբերելու, ֆիզիկական դաստիարակության նորմերի տիրապետում:

Գիտի

- Անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները:
- Բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները:
- Արտակարգ իրավիճակներում անվտանգ վարվելակերպը և բնակչության պաշտպանության հիմունքները:

Կարող է

- Ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում, զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին:
- Իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահիդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին անհետաձգելի բժշկական օգնություն:

Տիրապետում է

- կայուն զարգացման ռազմավարությանը, անվտանգության կառավարման համակարգերին,
- անհատական պաշտպանական միջոցների կիրառության սկզբունքներին և կոլեկտիվ պաշտպանության հիմունքներին,

արտակարգ իրավիճակների ժամանակ շտապ բժշկական օգնության կազմակերպման ձևերին ու եղանակներին:

Գ6. Շարունակական կրթություն. ինքնուրույն սովորելու կազմակերպական կարողություն:

Կարող է

- ինքնուրույն պլանավորել և կազմակերպել աշխատանքը, նպատակաուղղված շարունակել ուսումնառությունը,
- պարբերաբար բարձրացնել մասնագիտական որակավորումը,
- ուսումնասիրել սերվիսագիտությունը և դրա կիրառման պրակտիկան, մասնագիտական գրականությունը, բարելավել մասնագիտական գործունեությունը և ինտեգրվել հարափոփոխ և պահանջկոտ աշխատանքային միջավայրին,

Տիրապետում է

- բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության բնագավառում ուսումնառությունը շարունակելու համար:

12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական կրթական ծրագրի իրականացման ընթացքում կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ընդհանուր մեթոդները.

12.1. Դասավանդման մեթոդներ.

- Դասախոսություն
- Գործնական աշխատանք
- Սեմինար պարապմունք
- Բանավեճ-քննարկում, հարց ու պատասխան,
- Հեռահար ուսուցման մեթոդներ
- Խորհրդատվություններ
- Վերլուծություններ
- Պրոբլեմային ուսուցման մեթոդ
- Իրավիճակային վերլուծություններ /case-study/:

12.2. Ուսումնառության մեթոդներ

- Դասախոսության նյութի յուրացում
- Գրականության ուսումնասիրում
- Հետազոտական մեթոդ
- Որոնողական մեթոդ
- Ինքնուրույն հետազոտության մեթոդ
- Նախագծային բնույթի աշխատանք (անհատական կամ խմբային)
- Անհատական աշխատանքի կատարում
- Գործնական-կիրառական ուղղվածություն ունեցող հանձնարարականների կատարում
- Խնդիրների և վարժությունների լուծում
- Առարկայական տիրույթի մոդելավորում
- Առարկայական խնդիրների ձևայնացում և լուծման համապատասխան ալգորիթմի ընտրություն (մշակում)
- Առարկայական խնդրի ելման տվյալների հավաքում, ձևայնացում և մուտքագրում
- Առարկայական խնդրի լուծում և արդյունքների համեմատական վերլուծություն:

13.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների Ա1-Ա7 գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.

- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների Բ1-Բ3 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ
- ավարտական աշխատանքի պաշտպանություն:

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.

Ուսանողների Գ1-Գ6 ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ.
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի կատարում
- ակտիվության գնահատում
- ստուգարքներ:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:

Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- տեսալսողական կաբինետ,

- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- ուսումնամեթոդական կաբինետներ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները պետք է ապահովվեն ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/ կամ էլեկտրոնային հրատարակություններով:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավաժական կադրերով, ովքեր, որպես կանոն, ունեն դասավանդվող առարկային համապատասխան մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի որակավորում) և իրականացնում են գիտական կամ գիտամեթոդական գործունեություն:

Մասնագիտական դասընթացների ուսումնական գործընթացը ապահովող դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում, այդ թվում՝ «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության մասնագիտական առարկաների գծով: Կրթական գործընթացի մեջ կարող են ընդգրկվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային հանրակրթական դպրոցների, պրոֆիլային կազմակերպությունների, հիմնարկությունների, ձեռնարկությունների աշխատակիցների համակազմից:

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինֆորմատիկայի բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու ինֆորմատիկայի մագիստրոսի որակավորման աստիճան,
- ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ, ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնագավառներն են.

- Համակարգիչներ, տեղային և տարածքային համակարգչային ցանցեր,
- Ինֆորմացիոն համակարգեր, տվյալների բազաներ,
- Կառավարման տեղեկատվական համակարգեր,
- Մեծ տվյալների մշակման և արհեստական բանականության համակարգեր,

Ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտներն են.

- Համակարգիչներ, տեղային և տարածքային համակարգչային ցանցեր,
- Ինֆորմացիոն համակարգեր, տվյալների բազաներ,
- Կառավարման տեղեկատվական համակարգեր,
- Մեծ տվյալների մշակման և արհեստական բանականության համակարգեր,
- Նշված համակարգերի տեխնիկական, մաթեմատիկական, ծրագրային, ինֆորմացիոն, լեզվաբանական, էրգոնոմիկական, կազմակերպական և իրավական ապահովումը,

Ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության տեսակներն են.

- Նախագծակոնստրուկտորական
- Նախագծատեխնոլոգիական
- Գիտահետազոտական
- Գիտամանկավարժական
- Մոնտաժակարգաբերական
- Սերվիսշահագործողական

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում այդ մասնագիտության նկատմամբ եղած պահանջարկը, տարածաշրջանում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը,

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի ընդլայնումը, բազմաթիվ պետական և մասնավոր ձեռնարկություններում աշխատելու հնարավորությունը, ԳՊՀ շրջանավարտների՝ այդ մասնագիտությամբ աշխատելու փորձը, գործատուներից ստացված դրական կարծիքները, ԳՊՀ գործընկեր եվրոպական բուհերում ուսանողների սովորելու հնարավորությունը, համալսարանի առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը, բակալավրի որակավորմամբ ճարտարագետների՝ մագիստրատուրայի կրթական աստիճանում սովորելու հնարավորությունը, բուհի «Ինֆորմատիկա և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» ամբիոնի կադրային համալրվածությունը, հաշվողական տեխնիկայի և ծրագրավորման ոլորտի պրակտիկ ներիտասարդ մասնագետներին ուսումնական գործընթացի մեջ ներգրավումը, սովորողների համար պրակտիկայի բազայի առկայությունը՝ ի դեմս Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի, Վիվասել ՄՏՍ և ՅՈՒՔՈՄ ընկերությունների, «Ինսթիգեյթ» ուսումնական կենտրոնի, «Luseen Mobile» ընկերության, «Luseen Technologies» ՏՏ կենտրոնի, ԳՊՀ «Ինֆորմատիկա և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ» բաժնի շրջանավարտներին համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրումը, ինֆորմատիկայի մասնագետներին գործատուների կողմից ներկայացվող պահանջների և կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանեցման շարունակական աշխատանքը, ՀՀ Սահմանադրության, օրենքների փոփոխություններին համապատասխան կրթական ծրագրի բովանդակության վերանայումն ու արդիականացումը, ԳՊՀ-ում համակարգչային լսարանների առկայությունը, ԳՊՀ-ում էլեկտրոնային ուսուցման՝ «E-Learning.GSU» համակարգի, էլեկտրոնային գրադարանի՝ «E-Library.GSU» առկայությունը:

Միաժամանակ, կրթական ծրագիրը զերծ չէ ռիսկայնությունից: Բացասական գործոններ են «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտության գծով պետպատվեր (անվճար) տեղերի սակավությունը և այդ մասնագիտության գծով ԳՊՀ-ում ասպիրանտուրայի բացակայությունը: Ծրագրի կայունությանը սպառնում են ուսանողների մեծ մասի ընտանիքների սոցիալական անապահով վիճակը, ուսման վարձը վճարելու դժվարությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզի ժողովրդագրական բացասական միտումները, դիմորդների թվի զգալի նվազումը, Ինֆորմատիկայի բաժնի ուսանողների՝ եվրոպական ծրագրերին մասնակցելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացության ցածր մակարդակը:

Մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը հաղթահարելու և կայունությունը ապահովելու միջոցներ ենք համարում ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցումը ԳՊՀ-ի և տարբեր հիմնադրամների կողմից, ուսանողների համար կազմակերպվող օտար լեզվի լրացական դասընթացները, հեռավար դասերի անցկացումը, օգտակար էլեկտրոնային պաշարների օգտագործումը, վեբինարներին ուսանողների մասնակցությունը, «Համակարգչային ճարտարագիտություն»

մասնագիտական կրթական ծրագրի բարելավման նպատակով բենչմարքինգի գործիքների կիրառումը:

ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտայի համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով

արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

<u>ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.</u>

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատածավալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 30-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 15 շաբաթը հատկացվում է ուսումնական լսարանային պարապմունքներին, 1 շաբաթը՝ առաջին միջանկյալ քննությանը, 1 շաբաթը՝ երկրորդ միջանկյալ քննությանը և ստուգարքներին, իսկ 3 շաբաթը նախատեսված է գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 28-34 ժամ:

Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է:

3. Դասընթացները և կրթական մոդուլները

Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

բ) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

ա) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ՝ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամաս	**Կրեդիտներ**	**Դասընթաց-մոդուլների քանակը**
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	*38*	*15*
Պարտադիր Կամընտրական	*36* *2*	*14* *1*
Ընդհանուր	*9*	*3*

մաթեմատիկական և բնագիտական		
Պարտադիր Կամընտրական	*6* *3*	*2* *1*
Ընդհանուր մասնագիտական Կուրսային աշխատանքներ	*173* *2*	*45* *2*
Կրթական այլ մոդուլներ	*20*	*4*
Ընդամենը	*240*	*63*

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

4.1.2. Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍՏ պարտադիր դասընթացներ.

ՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 2

Մոդուլ-դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային ժամ (դ/գ/լ)**[2]	**Կիսամյակ**	**Գնահատ-ման ձևը**
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1	3	40 (10/30/0)	1	ստուգարք
Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2	3	40 (10/30/0)	2	քննություն
Ռուսաց լեզու – 1	3	30 (0/30/0)	1	ստուգարք
Ռուսաց լեզու – 2	3	30 (0/30/0)	2	ստուգարք
Ռուսաց լեզու – 3	3	30 (0/30/0)	3	քննություն
Հայոց պատմության հիմնահարցեր-1	3	30 (20/10/0)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր-2	3	30 (20/10/0)	2	քննություն
Ֆիզիկական դաստիարակություն-1	-	30 (0/30/0)	1	ստուգարք

Ֆիզիկական դաստիարակություն-2	-	30 (0/30/0)	2	ստուգարք
Հետազոտության մեթոդաբանություն	3	30 (20/10/0)	5	ստուգարք
Քաղաքագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Տնտեսագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	3	ստուգարք
Իրավագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	ստուգարք
Փիլիսոփայության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	քննություն

[2] Այսուհետ՝ **դ** - դասախոսություն, **գ** - գործնական կամ սեմինար պարապմունք, **լ** – լաբորատոր աշխատանք:

[3] Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

ՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Աղյուսակ 3

Մոդուլ-դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային ժամ (դ/գ/լ)**	**Կիսամյակ**	**Գնահատ-ման ձևը**
Կրոնագիտության հիմունքներ	2	30(20/10/0)	3	ստուգարք
Վիճակագրության ընդհանուր տեսություն				ստուգարք

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ 4

Մոդուլ-դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային ժամ (դ/գ/լ)**	**Կիսամյակ**	**Գնահատ-ման ձևը**
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3	30(20/10/0)	1	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3	30(20/10/0)	2	ստուգարք

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ 5

Մոդուլ-դասընթաց	**Կրեդիտ**	**Լսարանային ժամ (դ/գ/լ)**	**Կիսամյակ**	**Գնահատ-ման ձևը**
Կայուն տուրիզմի հիմունքներ	3	30(20/10/0)	2	ստուգարք
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր				ստուգարք

4.1.3. Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթամաս

Բնագիտական ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Սերվիս» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

Աղյուսակ 6

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Օտար լեզու /անգլերեն/-1	5	96 (0/96/0)	1	ստուգարք
Օտար լեզու /անգլերեն/-2	5	72 (0/72/0)	2	քննություն
Օտար լեզու /անգլերեն/-3	5	96 (0/96/0)	3	քննություն
Օտար լեզու /անգլերեն/-4	5	72 (0/72/0)	4	քննություն
Մասնագիտության ներածություն	4	30(20/10/0)	1	ստուգարք
Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ	4	44(24/20/0)	1	քննություն
Սերվիսագիտության հիմունքներ	8	40(30/10/0)	2	քննություն
Սերվիսի աշխարհագրություն	2	44(30/14/0)	2	ստուգարք
Զբոսաշրջային ծառայություններ	4	60(40/20/0)	1	քննություն
Հայ եկեղեցու պատմություն	2	30(20/10/0)	3	ստուգարք
Տուրիստական երկրագրություն	6	90(60/30/0)	3	քննություն
Տուրիստական երկրագրություն /կուրսային աշխատանք/	1	-	3	քննություն
Մասնագիտական էթիկա և էթիկետ	4	30(20/10/0)	4	ստուգարք
Կայուն զարգացման հիմունքներ	5	48(30/18/0)	4	քննություն
Տուրիզմի հիմունքներ	5	60(40/20/0)	3	քննություն
Տուրիզմի հատուկ տեսակներ	5	48(30/18/0)	4	ստուգարք
Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ռեսուրսներ	3	36(20/16/0)	4	ստուգարք
Հյուրընկալության հիմունքներ	4	48(30/18/0)	4	քննություն
Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն	8	90(60/30/0)	5	քննություն
Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն /կուրսային աշխատանք/	1	-	5	քննություն
Հայկական սփյուռքի աշխարհագրություն	8	90(70/20/0)	5	քննություն
Տուրիզմի սոցիոլոգիա	5	30(20/10/0)	5	ստուգարք
Զբոսավարության հիմունքներ	4	36(20/16/0)	6	ստուգարք

Ագրոտուրիզմ	5	36(20/16/0)	6	ստուգարք
Հայաստանի տնտեսական աշխարհագրություն	6	90(60/30/0)	6	ստուգարք
Գեոէկոլոգիայի հիմունքներ	7	90(60/30/0)	6	քննություն
Օտար լեզու (գերմաներեն)-1	4	36(0/36/0)	6	ստուգարք
Օտար լեզու (գերմաներեն)-2	7	90(0/90/0)	7	քննություն
Զբոսաշրջային ընկերությունների ռազմավարական կառավարում	3	30(20/10/0)	7	ստուգարք
Էկոլոգիական տուրիզմ	8	90(50/40/0)	7	քննություն
Հայաստանի բնական և պատմաճարտարապետական հուշարձաններ	6	60(44/16/0)	7	ստուգարք
Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը սերվիսում	6	60(30/30/0)	7	քննություն
Հոգեբանություն	5	30(20/10/0)	8	ստուգարք
Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ	7	90(60/30/0)	8	քննություն
Ռեկրեացիոն աշխարհագրություն	6	30(20/10/0)	8	քննություն

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2 կրեդիտ աշխատածավալով կուրսային աշխատանքների կատարում, որի արդյունքների ստուգումն իրականացվում է կրեդիտային եղանակով:

4.1.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ 7

Մոդուլ	**Կրեդիտ**	**Կիսամյակ**	**Գնահատման ձևը**
Ուսումնական պրակտիկա	4	4	ստուգարք
Արտադրական պրակտիկա	4	6	ստուգարք
Նախաավարտական պրակտիկա	4	8	քննություն
Ամփոփիչ ատեստավորում	8	8	քննություն

5.Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների ‹կուրսղեկների› ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրին քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ընդունվում է ներքոհիշյալ աղուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

Աղյուսակ 8

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A + A A -	4,0 4,0 3,7	95-100 87-94 81-86
Լավ	B+ B B-	3,3 3,0 2,7	75-80 67-74 61-66
Բավարար	C+ C C-	2,3 2,0 1,7	55-60 46-54 40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

ա) Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 9

h/h	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	1-ին միջանկյալ քննություն	20
3	2-րդ միջանկյալ քննություն	20
4	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	20
5	Վերջնական հանրագումարային քննություն	12-30
Ընդամենը		**100**

բ) Ստուգարքով ավարտվող մոդուլների համար *Աղյուսակ 10*

h/h	**Գործոններ**	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	40
3	Վերջնական հանրագումարային ստուգում	20-50
Ընդամենը		**100**

գ) Կուրսային աշխատանք *Աղյուսակ 11·*

h/h	**Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները**	**Միավորը**
1	Բովանդակության ամբողջականությունը /լիարժեքությունը/	20

2	Կատարման ինքնուրույնությունը	15
3	Ձևակերպման որակը	25
4	Ներկայացման և պաշտպանության որակը	40
Ընդամենը		**100**

դ) Նախաավարտական պրակտիկա /քննություն/ *Աղյուսակ 12*

h/h	**Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները**	**Միավորը**	**Ցուցում՝ գնահատման մասին**
1	Հաճախում	30	գնահատման ժամանակ 30 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Աշխատանքային պլանի կատարում	30	գնահատումը իրականացվում է կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և պաշտպանություն	40	

ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 13

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100
2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+ /1,7 – 4,0/

h/h	Գործոններ	Միավոր
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	30

6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված

հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6.2.3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի բովանդակությունը հարստացնելու և արդիականացնելու, մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքներ, հանձնարարում ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

՛6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6.2.7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: ‹‹Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյուների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 1.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**25,2=26**

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը.= 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				12,8=13

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

6.4. Հանրագումարային ստուգում

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը

հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերոնշյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն

արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները ՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$\text{ՈԿ} = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum \text{Կրեդիտ} \quad \text{Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$ՄՈԳ = \frac{ՎՄ}{ՈԿ}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

8.1 Լուծարք

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է հինգ գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում:

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ի և պակաս՝ 40–ից:

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, իսկ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:

9.3 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:

9.4 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:

9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

10. Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ և/կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ ատեստավորման քննությամբ (քննություններով), որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

10.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

10.4. Ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ9-ի և Աղյուսակ 14-ի:

11. Ծրագրի ավարտական պահանջները

11.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ և/կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ ատեստավորման քննությամբ (քննություններով), որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

11.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:

11.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,

բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,

գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,

դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:

11.4. Ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 9-ի և Աղյուսակ 14-ի:

12. Կրեդիտների փոխանցումը

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,

- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,

- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,

- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,

- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,

- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,

- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025-2026 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

Աղյուսակ 14

03 սեպտեմբերի 2025թ. – 28 դեկտեմբերի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	03 սեպտեմբեր
1-ին միջանկյալ քննություն	29 հոկտեմբերի -02 նոյեմբերի
2-րդ միջանկյալ քննություն	24 դեկտեմբերի - 28 դեկտեմբերի
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	18 դեկտեմբերի -22 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	24 դեկտեմբերի - 28 դեկտեմբերի
Ուսուցման ավարտ	28 դեկտեմբերի
Քննաշրջան	7 հունվարի - 25 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	30 դեկտեմբերի – 07 հունվարի

<u>Գարնանային կիսամյակ</u>

Աղյուսակ 15

04 փետրվարի 2026 թ. – 24 մայիսի 2026թ.	
Ուսուցման սկիզբ	04 փետրվարի
1-ին միջանկյալ քննություն	01 ապրիլի - 05 ապրիլի
2-րդ միջանկյալ քննություն	29 մայիսի - 01 հունիսի
Ինքնուրույն հետազոտական	06 մայիսի -10 մայիսի

աշխատանքների հանձնում	
Գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	20 մայիսի – 24 մայիսի
Կուրսային աշխատանքների և ստուգարքների հանձնում	03 հունիսի - 07 հունիսի
Ուսուցման ավարտ	24 մայիսի
Քննաշրջան	03 հունիսի – 21 հունիսի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	06 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	30 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

1.1 Պարտադիր դասընթացներ

1.1.1. Հայոց լեզու և խոսքի մշակույթ

22/Բ39 Հայոց լեզու և խոսքի մշակույթ-1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի հնչյունական կազմի, ուղղագրության և ուղղախոսության, իմաստաբանության, բառապաշարի, բառակազմության, դարձվածաբանության, բառարանագրության, ձևաբանական իրողությունների վերաբերյալ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները (գիտելիք, կարողություն, հմտություն).

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը,
2. ուղղագրության, ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը, նրանց գործածության առանձնահատկությունները,

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. ներկայացնել հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը,
2. պահպանել ուղղագրության, ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները,
3. հասկանալ հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը, նրանց կիրառական առանձնահատկությունները,

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը ներկայացնելու,
2. բառերը ճիշտ գրելու, արտասանելու,
3. հայերենի բառագիտական, ձևաբանական նորմերը գործնականում ճիշտ կիրառելու, հմտությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Զարգացման փուլերը, բարբառներ: Հայերենը որպես ազգային, պետական և գրական լեզու: **Թեմա 2.** Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունական համակարգը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Երկհնչյուններ: Ուղղագրության և ուղղախոսության օրինաչափություններն ու առանձնահատկությունները: **Թեմա 3.** Վանկը և շեշտը հայերենում: Վանկատման և տողադարձի օրինաչափություններն ու առանձնահատկությունները: **Թեմա 4.** Շեշտից կախված հնչյունափոխություն: **Թեմա 5.** Հայերենի բառապաշարի դասակարգումը, հարստացման ուղիները, բառապաշարային շերտեր, մասնագիտական բառապաշար: Տերմիններ. նորակազմություններ և օտարաբանություններ **Թեմա 6.** Իմաստափոխություն. Հոմանիշ, համանուն, հարանուն, հականիշ բառերի գործածության առանձնահատկությունները: **Թեմա 7.** Բառակազմություն: Բառերի տեսակներն ըստ կազմության: Բառակազմական կաղապարների վերլուծություն: Բառի կազմության սխալ ընկալում: **Թեմա 8.**Բարդությունների տեսակները. Բառերի գծիկով, անջատ, միասին գրության կանոնները. Բառերի գրության ձևերի հիմնավորումը. հապավական բարդություններ և համառոտագրություններ: **Թեմա 9.**Դարձվածքների տեսակները, գործածության առանձնահատկությունները. **Թեմա 10.** Խոսքի մասեր, դրանց դասակարգման հիմունքները: Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասեր: **Թեմա 11.** Բառագործածության և քերականական սխալներ: **Թեմա 12.** Գոյականի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները /անձնանիշ և իրանիշ, հավաքական, անեզական, հոգնակերպ գոյականներ/, Գոյականի հոգնակի թվի կազմության սկզբունքները, հոլովական տարբերակային ձևեր, որոշյալ և անորոշ առումներ: **Թեմա 13.** Ածականի, թվականի, դերանվան, մակբայի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները: **Թեմա 14.** Ածականի, թվականի, դերանվան, մակբայի գործածության տարբերակային ձևեր: **Թեմա 15 .** Բայի խոսքիմասային և գործածության առանձնահատկությունները: **Թեմա 16.** Քերականական և վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերի /կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն/գործածության առանձնահատկությունները: **Թեմա 17.** Բառագործածության և քերականական սխալներ:

22/Բ40 Հայոց լեզու և խոսքի մշակույթ-2 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի տեսական, գործնական-կիրառական ուղղվածություն: Նպատակն է ամրապնդել ուսանողների գիտելիքները ժամանակակից հայոց լեզվի շարահյուսական իրողությունների, փոխակերպվող կառույցների և փոխակերպման ձևերի, կետադրության կանոնների վերաբերյալ, ծանոթացնել խոսքի դրսևորման ձևերին, զարգացնել ուսանողների՝ քերականորեն և ոճական առումով ճիշտ խոսք կառուցելու կարողությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, դրանք խմբագրելու, սեղմելու, վերաշարադրելու կարողությունների զարգացմանը:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ իրազեկությունները <u>(գիտելիք, կարողություն, հմտություն).</u>

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. հայերենի շարահյուսական նորմերը, նրանց գործածության առանձնահատկությունները, կետադրական կանոնները, կիրառական առանձնահատկությունները,
2. նախադասությունների փոխակերպումների ձևերն ու յուրահատկությունները,
3. ոճերի տեսակները և նրանց գործածության առանձնահատկությունները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, նրանց առանձնահատկությունները, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները,
4. գործնական գրությունների կազմման ձևերը,
5. բառագործածության և քերականական սխալները,
6. մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, սրբագրելու, վերաշարադրելու, սեղմելու սկզբունքներն ու ձևերը

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

/Կարողություն/.

1. հասկանալ հայերենի շարահյուսական նորմերը, կետադրական կանոնները, նրանց կիրառական առանձնահատկությունները,
2. ցույց տալ նախադասությունները փոխակերպելու ձևերն ու յուրահատկությունները
3. տարբերել ոճերի տեսակները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները,
4. կազմել գործնական գրություններ,
5. գտնել բառագործածության և քերականական սխալները
6. աշխատել մասնագիտական տեքստերի հետ, սրբագրել, վերաշարադրել, սեղմել տեքստերը

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

/Հմտություն/.

1. հայերենի շարահյուսական նորմերը գործնականում ճիշտ կիրառելու, ճիշտ կետադրելու,
2. նախադասությունների փոխակերպելու,
3. ոճերի տեսակները, խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները գործնականում տարբերելու,
4. գործնական գրություններ կազմելու,
5. բառագործածության և քերականական սխալները բացառելու,
6. մասնագիտական տեքստերի հետ աշխատելու, սրբագրելու, վերաշարադրելու, սեղմելու հմտությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Շարահյուսություն. կապակցման միջոցների և եղանակների յուրահատկությունները: Համաձայնության, խնդրառական և շարադասական սխալներ; **Թեմա 2.** Նախադասությունների կառուցվածքային տեսակները և գործածության առանձնահատկությունները: Պարզ և բարդ նախադասություններ, փոխակերպման ձևերն ու հնարավորությունները, դերբայական դարձվածով կառույցներ: **Թեմա 3.**Ուղղակի և անուղղակի խոսք: Փոխակերպման ձևերն ու հնարավորությունները:

Կետադրության սկզբունքները: **Թեմա 4.**Խոսքի տեսակները, դրսևորման ձևերը, նրանց առանձնահատկությունները: Խոսքի հատկանիշները, արժանիքներն ու թերությունները:

Խոսքի գործառական տարբերակները: Գիտական, պաշտոնական, խոսակցական, գեղարվեստական, հրապարակախոսական ոճեր, կիրառական առաձնահատկությունները: Գործնական գրությունների կազմման ձևերը: **Թեմա 5.** Տեքստերի շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադում, սեղմում/: Տեքստերի վերաշարադրման և սեղմման ձևերը; Աշխատանք մասնագիտական տեքստերով:

1.1.2. Ռուսաց լեզու

Նպատակը.

1. Զարգացնել ուսանողների գրավոր և բանավոր խոսքի հմտությունները ռուսաց լեզվով:
2. Ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը ռուսաց լեզվով:
3. Կատարելագործել վերլուծական մտածողությունը՝ զարգացնելով ռուսերենով վերլուծելու, համադրելու և տրամաբանական դատողություններ կառուցելու կարողությունը:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Ռուսաց լեզվի լեզվական կառուցվածքի, քերականական կանոնների և ոճական միջոցների վերաբերյալ համակարգված իմացություն;
2. Խոսքային միավորների կիրառման առանձնահատկությունները՝ կախված հաղորդակցման իրավիճակի և նպատակից;
3. Մասնագիտական տեքստերը գործնականորեն թարգմանելու հիմնական սկզբունքներն ու մեթոդները:

Կկարողանա՝

1. ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը
2. մեկնաբանել տեքստի իմաստը,
3. փոխակերպել տեքստի ոճը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել,
5. տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի,
6. լուծել իրավիճակային խնդիրներ,
7. կատարել թարգմանություններ:

Կտիրապետի՝

1. սերվիսագիտության տերմինաբանությանը
2. մասնագիտության, սոցիալ-քաղաքական, սոցիալ-մշակութային բնագավառում հարց-պատասխան բնույթի զրույցին մասնակցելու, հաղորդակցվելու կարողություններին,
3. բանավեճեր, քննարկումներ վարելու հմտություններին,
4. թարգմանություններ կատարելու հմտություններին:

24/Բ65 Ռուսաց լեզու-1 (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Բովանդակությունը.

Тема 1.

Работа над текстами по специальности : **Выбор и оформление тура. Лечебно-оздоровительный туризм.**
Информирование о специализации турфирмы.
Советы, как выбрать страну для отдыха.
Консультация по разным видам отдыха.
Помощь в оформлении тура.
Решение проблем с аннулированием тура.
Ситуация: Разговор в офисе турагентства о возможностях того или иного вида отдыха в разных странах.
Ситуация: Разговор сотрудника турфирмы с потенциальными туристами в офисе турфирмы о возможностях отдыха в разных странах.
Ситуация: ответы сотрудника турфирмы на телефонные звонки потенциальных туристов о специализации фирмы.
Ситуация Разговор в офисе турфирмы с туристом, который аннулирует тур.

Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: фонетические, **орфоэпические нормы языка .**

Лексика и фразеология по теме. Лексико – грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

Тема 2

Работа над текстами по специальности. **Прибытие к месту отдыха. Встреча туристов. Пляжный туризм**.
Встреча туристов в аэропорту / на вокзале. Знакомство.
Проверка приехавших по списку и их паспортов.
Решение возможных проблем с багажом.
Сопровождение туристов к автобусу.
Рассказ сопровождающего о своих обязанностях.

Ситуация- Первая встреча сопровождающего с туристами.
Ситуация -Проверка сопровождающим документов у туристов.
Ситуация- Помощь сопровождающего туристам при получении багажа.
Ситуация -Разговор сопровождающего с туристами по пути следования к месту отдыха.

Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: **лексические.**нормы языка.

Лексика и фразеология по теме. Лексико – грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

24/Բ66 Ռուսաց լեզու-2 (3 Կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 գործնական)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Բովանդակությունը.
Тема 3.
Работа над текстами по специальности. **Размещение туристов в гостинице, туристском центре. Научно-деловой туризм.**

Приезд туристов в гостиницу. Заполнение анкеты
Оформление индивидуальных туристов
Информация о номерах в гостинице, их местоположении и оборудовании
Решение проблем с расселением.
Удовлетворение претензий по поводу номеров и их оборудования.

Ситуация: разговор с дежурным администратором после прибытия в гостиницу
Ситуация: Прибытие в гостиницу индивидуальных туристов, разговор с дежурным администратором по поводу их размещения

Ситуация: Разговор туристов с дежурным администратором о номерах и их оборудовании.
Ситуация: Изменение заказанных условий тура
Ситуация:Предъявление туристами претензий дежурному администратору**.**

Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: словообразовательные нормы языка.

Лексика и фразеология по теме. Лексико – грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

Тема 4.
Работа над текстами по специальности **Туристский комплекс, отель. Предоставляемые услуги. Горнолыжный туризм.**

Информация о структуре туркомплекса.
Рассказ о предоставляемых услугах.
Информирование туристов о полученных на их имя сообщениях.
Выполнение просьб и заявок.
Расчёт за проживание в гостинице .

Ситуация: Беседа сопровождающего с туристами о туркомплексе.
Ситуация: Разговор сопровождающего с туристами о разных возможностях активного отдыха на курорте.
Ситуация: Выполнение дежурным администратором заявок туристов (отправить факс, сообщить о получении корреспонденции и т. п.).
Ситуация: Расчет туриста с дежурным администратором за пребывание в гостинице.

Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: морфологические нормы языка

Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы.
Упражнения на развитие коммуникативных умений.

24/Բ67 Ռուսաց լեզու-3 (3 Կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Բովանդակությունը.
Тема 5.

Работа над текстами по специальности: **Спорт и активный туризм. Экстремальный туризм**

Информация о спортивных программах в отеле, на курорте.
Предложение туристам различных видов активного отдыха.
Рассказ инструктора об экстремальных видах спорта.
Советы и рекомендации туристам, желающим заниматься спортом.
Объяснение условий занятий спортом в спорткомплексе.

Ситуация: Беседа спорторганизатора с туристами о возможностях занятий спортом.
Ситуация: Разговор туриста с инструктором относительно занятий спортом.
Ситуация:Разговор туристов с инструктором о рафтинге и дайвинге.
Ситуация:Разговор туристов с инструктором об игровых видах спорта и о рафтинге для подростка.
Ситуация: Выступление спортинструктора перед туристами Разговор туристки с инструктором.
Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: морфологические нормы языка.

Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы, стихи. Упражнения на развитие коммуникативных умений

Тема 6.

Работа над текстами по специальности**: Отъезд и проводы туристов.**

Информирование туристов о времени отъезда и месте сбора.
Решение возможных проблем с билетами.
Выражение благодарности.
Прощание. Выражение напутствий.
Оказание туристам помощи в аэропорту.

Ситуация: Информация сопровождающего о времени и месте сбора для отъезда
Ситуация: Потеря туристом авиабилета
Ситуация: Выражение туристами благодарности перед отъездом.
Ситуация: Отъезд туристов. Прощание с сопровождающим в аэропорту
Ситуация: Помощь сопровождающего туристам в заполнении декларации и решении проблем с багажом
Грамматический материал: Язык как инструмент сервиса. Культура речи и деловое общение. Нормы современного русского литературного языка: синтаксические нормы языка

Лексика и фразеология по теме. Лексико - грамматические упражнения, переводы. Упражнения на развитие коммуникативных умений.

1.1.3 Հայոց պատմության հիմնահարցեր

Դասընթացի նպատակը.

- Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության հին, միջին, նոր և նորագույն շրջանի վերաբերյալ,
- ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ,
- դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի,
- որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում,
- որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում,
- հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում,
- Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտենա- ուսանողը խորը և համակողմանի գիտելիքներ ունենա մեր ժողովրդի բազմադարյան պատմության վերաբերյալ:
Կարողանա- քննական և ինքնուրույն մոտեցումներ ցուցաբերի պատմական երևույթները գնահատելու առումով:
Տիրապետի- երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, հասկանա ու արժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը պատմական զարգացումների հետ:

23/Բ19- Հայոց պատմության հիմնահարցեր -1 (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը.

Կիմանա - ուսանողը պետք է համակողմանի ու խոր գիտելիքներ ունենա հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի վերաբերյալ:
Կկարողանա - քննական ու ինքնուրույն մոտեցումներ ձևավորել հին և միջնադարյան ժամանակաշրջանի պատմական երևույթները գնահատելու առումով:
Կտիրապետի - հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, հասկանա ու արժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը հետագա պատմական զարգացումների հետ:
Բովանդակությունը.
Թեմա 1. Հայոց հայրենիքը և հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 2.** Վանի թագավարություն: **Թեմա 3.** Երվանդունիների պետությունը: **Թեմա 4.** Արտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 5.** Արշակունիների թագավարությունը: **Թեմա 6.** Հայկական մշակույթը 4-9-րդ դդ.: **Թեմա 7.** V դարի ազգային ազատագրական շարժումները: **Թեմա 8.** Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 9.** Հայաստանը Զաքարյանների օրոք: **Թեմա 10.** Կիլիկիայի հայկական պետությունը:

23/Բ20 Հայոց պատմության հիմնահարցեր-2 (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն
Բովանդակությունը.
Թեմա 1. Հայ ազգային ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Հայկական հարցի առաջացումը: **Թեմա 3.** Հայ ազգային-քաղաքական կուսակցություններ: **Թեմա 4.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին. հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում: **Թեմա 5.** Հայոց ցեղասպանությունը: **Թեմա 6.** Հայաստանի առաջին հանրապետությունը (1918-1920թթ.): **Թեմա 7.** Խորհրդային Հայաստան: **Թեմա 8.** Հայաստանի անկախության գործընթացը. ՀՀ հռչակումը: **Թեմա 9.** Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

<u>1.1.4. Ֆիզիկական դաստիարակություն</u>

Դասընթացի նպատակը.
Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին սովորել առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժությունների կատարման տեխնիկա-տակտիկական միջոցները և օգնելու ստանալ հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա՝ ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, թեթև ատլետիկայի դերը ֆիզիկական դաստիարակման համակարգում, մարմնամարզության տարբեր վարժությունները, կարճ տարածության վազքերի և եռացատկի տեխնիկան, կատարել վազք 2000-3000 մ, մարմնամարզության տարբեր վարժություններին,
Կկարողանա՝ կատարել վազք 60 մ «Ցածր մեկնարկից», կատարել հեռացատկ տեղից,
Կտիրապետի՝ վազքի տեխնիկային, կատարել շարային և ընդհանուր վարժություններ, սովորած վարժությունները կատարել մրցակցային պայմաններում, վոլեյբոլ խաղի տեխնիկային, մարմնամարզության վարժությունների տեխնիկաներին:

13/Բ57- Ֆիզիկական դաստիարակություն – 1 (0 Կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, ստուգարք
Բովանդակությունը.
ԹԵՄԱ 1 . Տեսական տեղեկություններ: **ԹԵՄԱ 2.** Կարճ տարածության վազքեր: **ԹԵՄԱ 3.** Վազք 60մ, 100մ, ստարտը և եզրագծի հատումը: **ԹԵՄԱ 4.** Հեռացատկ տեղից, սպորտային թափավազք: **ԹԵՄԱ 5.** Միջին տարածության վազք: **ԹԵՄԱ 6.** Երկար տարածության վազք: **ԹԵՄԱ 7.** Ակրոբատիկա, եռացատկ տեղից: **ԹԵՄԱ 8.** Հենացատկ այծի վրայից, ձգումներ կախ դրությունից: **ԹԵՄԱ 9.** Հեռացատկ տեղից, հեռացատկ այծի վրայից: **ԹԵՄԱ 10.** Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժեր, ցատկեր ցանցի մոտ: **ԹԵՄԱ 11.** Սկզբնահարված, դաշտի տարբեր մասերը: **ԹԵՄԱ 12.** Սկզբնահարվածի ընդունում, հարձակողական հարված: **ԹԵՄԱ 13.** Հարձակողական հարվածի շրջափակում: **ԹԵՄԱ 14.** Երկկողմանի խաղ: **ԹԵՄԱ 15.** Ստուգարքային նորմաների ընդունում:

13/Բ58- Ֆիզիկական դաստիարակություն – 2 (0 Կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Բովանդակությունը.
ԹԵՄԱ 1. Գնդակի վերգցումով սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցումը և ամրապնդումը: **ԹԵՄԱ 2.** Կտրված հարված աջից և ձախից: **ԹԵՄԱ 3.** Հարված աջից և ձախից գլորումով: **ԹԵՄԱ 4.** Հաշվով խաղ: **ԹԵՄԱ 5.** Գնդակի փոխանցում վերևից, ներքևից, 2 ձեռքով ցանցի վրայից: **ԹԵՄԱ 6.** Ցանցի մոտ գնդակի ետ մղում բռունցքով: **ԹԵՄԱ 7.** Վերին ուղիղ սկզբնահարված: **ԹԵՄԱ 8.** Հանդիպակաց փոխանցումից ուղիղ հարձակողական հարված: **ԹԵՄԱ 9.** Երկկողմանի խաղ: **ԹԵՄԱ 10.** Փոքր գնդակի նետում հորիզոնական և ուղղահայաց նպատակին: **ԹԵՄԱ 11.** Փոքր գնդակի նետում աջով և ձախով կամավոր թափավազքից: **ԹԵՄԱ 12.** Վազք 1500-2000մ: **ԹԵՄԱ 13.** Վազք 800-1000մ: **ԹԵՄԱ 14.** Կարճ տարածության վազքեր, արագացումներ: **ԹԵՄԱ 15.** Նռնակի նետում:

<u>1.1.5. Հետազոտության մեթոդաբանություն</u>
23/Բ29 <u>Հետազոտության մեթոդաբանություն</u> (3 Կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)
5-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը.
Դասընթացի նպատակն է ուանողներին փոխանցել գիտելիքներ գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման, դրա փուլերի, գիտական հետազոտությունների մեթոդաբանության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել խորհրդատվություն գիտական հոդվածներ, ավատական աշխատանք, մագիստրոսական թեզ և այլ գիտական հրապարակումներ պատրաստելու համար:
Կրթական արդյունքները.
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.
Գիտենա (գիտելիքներ).

- ✓ Գիտական գիտելիքի չափանիշները, նրա հիմնական բնութագրիչները ժամանակակից գիտական մտածողության մեջ, գիտության ծագման սոցիալ-մշակութային տեսանկյունը, գիտական և ոչ գիտական /առօրեական/ գիտելիքների հարաբերակցությունը:
- ✓ Հասարակական և բնագիտական գիտակարգերում հետազոտության պլանավորման հիմնական սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները:
- ✓ Հասարակական և բնագիտական ոլորտում հետազոտության ինչպես դասական, այնպես էլ արդի մեթոդները:

Կարողանա (կարողություններ).

- ✓ Մեկնաբանել մեթոդի հիմնահարցը՝ էմպիրիզմ և ռացիոնալիզմ նոր ժամանակների գիտության զարգացման համատեքստում, բացատրել գիտական գիտելիքի մակարդակները:
- ✓ Օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հասարակական և բնագիտական գիտակարգերում ուսումնասիրություններ կատարելիս:

Տիրապետի (հմտություններ).

- ✓ Կտիրապետի գիտական բնույթի աղբյուրների հավաքման, պահպանման և մշակման մեթոդներին:
- ✓ Փաստարկման ընդհանուր տրամաբանությանն ու մեթոդաբանությանը, գիտական աշխատանք կատարելիս գիտական վարկածներ կառուցելու, ընդհանուր գիտական մեթոդները կիրառելու հմտություններին, ստացած տեսական գիտելիքները կիրառելու կարողություններին:

Բովանդակություն

Թեմա 1.Գիտական հետազոտության մեթոդաբանաություն առարկան և խնդիրը:

Թեմա 2.Գիտական ճանաչողություն:

Թեմա 3.Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանություն:

Թեմա 4. Գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը և տարատեսակները:

Թեմա 5. Փաստարկման ընդհանուր տրամաբանությունն ու մեթոդաբանությունը գիտական աշխատանք կատարելիս:

Թեմա 6. Հղումները գիտական հրապարակումներում:

Թեմա 7. Ակադեմիական անազնվություն, գրագողություն, հեղինակային իրավունք:

Թեմա 8. Հիմնահարց:

<u>1.1.6. Քաղաքագիտության հիմունքներ</u>

23/Բ55 Քաղաքագիտության հիմունքներ (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական հասկացություններին, քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին:
Նպաստել ուսանողների մոտ քաղաքական իրականության, քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծական մտքի ձևավորմանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա՝

Գիտելիք.

1. Քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը,
2. քաղաքական գիտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը,
3. քաղաքական իշխանության էությունն ու բովանդակությունը, կառուցվածքը, լեգիտիմությունն ու լեգալությունը,
4. քաղաքական համակարգի էությունը և կառուցվածքը,
5. ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությունն ու բնորոշ գծերը,
6. իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները,
7. քաղաքական կուսակցության էությունը, գործառույթները: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը,
8. քաղաքական գաղափարախոսության հասկացությունը, գործառույթները, հիմնական գաղափարախոսական հոսանքները,
9. քաղաքական կոնֆլիկտի էությունը, տիպերը, հաղթահարման ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/

Կարողություն.

1. կատարել քաղաքագիտական վերլուծություններ,
2. կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում,
3. պատկերացում կազմել քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին
4. արտահայտել սեփական քաղաքական կարծիքը, անհրաժեշտության դեպքում միավորվել որևէ քաղաքական գաղափարի շուրջ:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Հմտություն.

1. Քաղաքագիտության առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
2. քաղաքագիտության տեսության և պատմության հիմնական հասկացություններին, սկզբունքներին,
3. հասարակական, քաղաքական ոլորտներում առկա տարբեր հիմնախնդիրներին, դրանք ներկայացնելու, բացահայտելու, վերլուծելու, քննարկելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: Թեմա 2. Քաղաքագիտության տեսական-գաղափարական ակունքները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 4.**Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5.**Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 6.**Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 7.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 8.** Քաղաքական կոնֆլիկտներ: **Թեմա 9.** Քաղաքական գաղափարախոսություն: **Թեմա 10.** Քաղաքական լիդերություն:

1.1.7. Տնտեսագիտության հիմունքներ

11/ Բ51 Տնտեսագիտության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ
30 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը.

«Տնտեսագիտության հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողներին տալ անհրաժեշտ գիտելիքներ տնտեսագիտության հիմնարար սկզբունքների վերաբերյալ, նրանց ներկայացնելով ժամանակակից շուկայական տնտեսության գործառնության օրինաչափությունները և առանձնահատկությունները: Այս պարագայում ուսանողները ձեռք են բերում հասարակական գործընթացները, տնտեսական հիմնախնդիրները վերհանելու, հասկանալու և վերլուծելու հմտություններ, ժամանակակից տնտեսագիտական տեսությունների, դրանց մեկնաբանություն-ների իմացություն, հետազոտության նորագույն մեթոդներին ու միջոցներին տիրապետելու, տեսության և պրակտիկայի զարգացումներին, զարգացման միտումներին քննադատաբար վերաբերվելու և ակտիվ սուբյեկտի դեր ստանձնելու կարողություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

1. տնտեսագիտության զարգացման ուղղությունները,
2. «տնտեսական մարդ» մոդելի դասական դպրոցի, քեյնսյան և նոր դասական մոտեցումները,
3. տնտեսական համակարգի տիպերը, կառուցվածքը և հիմնական բնութագրիչները,
4. ձեռնարկատիրական գործունեության կազմակերպաիրավական ձևերը,
5. ազգային արդյունքի հոսքերն ապահովող մեխանիզմը,
6. ապրանքների և ծառայությունների պահանջարկի բովանդակությունը,
7. զբաղվածության պետական ծառայության լիազորությունները,
8. գործազրկության բնական մակարդակի հաշվարկման մեթոդաբանությունը,
9. մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը,
10. դրամաշրջանառության օրենքը՝ փողի քանակական տեսության մեկնաբանությամբ,
11. գնողունակության համարժեքության օրենքի իրագործման կարևորությունը,
12. մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման օրինաչափությունները և սկզբունքները,
13. հարկերի և պետական ծախսերի բազմապատկիչը՝ որպես հարկաբյուջետային քաղաքականության իրականացման գործիքներ:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/

1. տարանջատել տնտեսական վերլուծության միկրո և մակրո մակարդակները,
2. դասակարգել պահանջմունքները և լուսաբանել պահանջմունքների բավարարման տնտեսական հիմնախնդիրը,
3. մեկնաբանել շուկայական մեխանիզմի դրական և բացասական հատկանիշները,
4. վերհանել աշխատանքի շուկայի և դրա ենթակառուցվածքների առանձնահատկու-թյունները,
5. գնահատել տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունները դրամական հոսքերը կառավարելիս,

6. կատարել պետության վարած մակրոտնտեսական քաղաքականության իրավիճակային և համեմատական վերլուծություններ,
7. վերլուծել կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները,
8. մեկնաբանել ազգային եկամտի բաշխումն ըստ արտադրության գործոնների,
9. ներկայացնել ինֆլյացիայի և տոկոսադրույքի փոխառնչությունը,
10. բացահայտել տնտեսական տատանումների առաջացման պատճառները,
11. մեկնաբանել և վերլուծել ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխությունները կարճատև և երկարատև ժամանակահատվածներում:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի՝

1. շուկայական տնտեսության առանձնահատկություններին,
2. պետական կարգավորման գործիքների կիրառման մեխանիզմներին,
3. ՀՆԱ- ի ըստ ծախսերի, եկամուտների և ըստ ավելացված արժեքի հաշվարկման մեթոդներին, տնտեսության զարգացման օրինաչափություններին,
4. տնտեսական աճի ապահովման սկզբունքներին,
5. ֆինանսական շուկայի հավասարակշռության վրա տնտեսական քաղաքականության ազդեցության սկզբունքներին,
6. բնակչության զբաղվածության պետական կարգավորման սկզբունքներին,
7. փողի առաջակի և պահանջարկի հավասարակշռության ձևավորման մեխանիզմին՝ իրացվելիության նախընտրության տեսության մեկնաբանությամբ,
8. տնտեսական տատանումների կանխման մեխանիզմներին,
9. հարկման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տնտեսագիտության առարկան, գործառույթները և ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Տնտեսական հարաբերությունների համակարգը: Տնտեսական պահանջմունքներ և շահեր: **Թեմա 3**. Շուկայական տնտեսության էությունը, ձևավորման նախադրյալները: Պահանջարկի և առաջարկի տնտեսական օրենքները: **Թեմա 4.** Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և դրանց հաշվարկման կարգը: **Թեմա 5.** Հասարակական արտադրության հիմքերը: Արտադրական ֆունկցիան: **Թեմա 6.** Փողի էությունը և ֆունկցիաները: Ինֆլյացիայի առաջացման պատճառները և հետևանքները: **Թեմա 7**. Աշխատանքի շուկայի առանձնահատկությունները: Գործազրկության ձևերը: **Թեմա 8**. Ֆինանսական համակարգի հիմնական բնութագրիչները: **Թեմա 9**. Ամբողջական պահանջարկ, ամբողջական առաջարկ: Հավասարակշռությունը կարճ ժամկետում:

<u>1.1.8. Իրավագիտության հիմունքներ</u>

21/Բ10 Իրավագիտության հիմունքներ (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, սպուգարք

Դասընթացի նպատակը.

Դասընթացի նպատակն է ապահովել իրավագիտության հիմնարար դրույթների, պետության և իրավունքի ծագման ու գործառույթների, պատմական տիպերի և ձևերի, իրավունքի հիմնական ճյուղերի հիմունքների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետաիրավական վերնաշենքի, սոցիալական կյանքի կազմակերպման պետաիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի բազմաթիվ ու բազմաբնույթ առնչությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մարդու իրավունքների և ազատությունների հասարակության պետաիրավական վերնաշենքի կառուցվածքի և գործառույթների իմացություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա՝

1. իրավունքի և պետության ծագումն ու հիմնական հատկանիշները
2. իրավունքի և պետության գործառույթները
3. իրավունքի և պետության պատմական տիպերը
4. իրավունքի հիմնական ձևերը (աղբյուրները)
5. պետության ձևերը
6. մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները
7. հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքը և պետության դերը քաղաքական համակարգում
8. իրավունքի համակարգը կազմող ճյուղերի հիմունքները:

Կարողանա՝

1. սահմանել "իրավունք", "պետություն", "պետության պատմական տիպ", "պետության ձև", "իրավունքի համակարգ", "իրավանորմ", "իրավահարաբերություն" հասկացությունները
2. ներկայացնել իրավունքի և պետության ծագման նախադրյալները
3. բնութագրել իրավունքի և պետության հիմնական հատկանիշները
4. դասակարգել իրավունքի և պետության պատմական տիպերը
5. տարբերակել իրավունքի աղբյուրները
6. ներկայացնել պետության հիմնական ձևերը
7. դասակարգել իրավունքի և պետության գործառույթները
8. վերլուծել իրավունքի հիմնական ճյուղերը:

Տիրապետի՝

սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտներին

2. վարչական իրավունքի հիմունքներին

3. քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմունքներին

4. աշխատանքային իրավունքի հիմունքներին

5. բնապահպանական իրավունքի հիմունքներին

6.ընտանեկան իրավունքի հիմունքներին

7.ֆինանսական իրավունքի հիմունքներին

8.քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմունքներին

9. միջազգային իրավունքի հիմունքներին

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Իրավագիտության ուսումնասիրման առարկան և մեթոդները: **ԹԵՄԱ 2.** Պետության և իրավունքի ծագումը: **ԹԵՄԱ 3**. Պետության ծագման մասին հիմնական ուսմունքները: **ԹԵՄԱ 4.** Պետության հիմնական տարբերիչ հատկանիշները: **ԹԵՄԱ 5.** Պետության և իրավունքի պատմական տիպերը: **ԹԵՄԱ 6.** Պետության և իրավունքի ձևերը: **ԹԵՄԱ 7**. Պետության և

գործառույթները: **ԹԵՄԱ 8**. Պետական ապարատի հասկացությունը և կառուցվածքը: **ԹԵՄԱ 9.** Սահմանադրական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 10**. Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ.11** Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի հիմունքներ: հիմունքներ: **ԹԵՄԱ 12.** Աշխատանքային իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 13.** Ընտանեկան իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 14**. Վարչական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 15**. Ֆինանսական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 16**. Բնապահպանական իրավունքի հիմունքներ: **ԹԵՄԱ 16**. Ազգային և միջազգային իրավունք:

1.1.9. Փիլիսոփայության հիմունքներ

23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

«Փիլիսոփայության հիմունքներ» դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է ընձեռում խորությամբ ընկալելու և վերլուծելու շրջակա միջավայրն ու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմել հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջմունքների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ:

Սովորողը ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

Գիտելիք.

1. Որպես գիտություն փիլիսոփայությունը գոյություն ունի ավելի քան 2500 տարի և գոյություն կունենա այնքան ժամանակ քանի դեռ կլինի մարդն ու մարդկային հասարակությունը:
2. Փիլիսոփայությունը մարդու կողմից իր կեցության ու գոյության գլխավոր հարցերի որոնումն ու դրանց պատասխանների հավերժ փնտրտուքն է:
3. Փիլիսոփայությունը ուսմունք է իրականության զարգացման համընդհանուր օրինաչափությունների մասին:
4. Փիլիսոփայական բազմաթիվ ուսմունքներից առանձնացնել մասնավորապես Է. Կանտի ընբռնումը փիլիսոփայության ոլորտի շրջանակների վերաբերյալ, որը հրատապ է բոլոր ժամանակներում.

ա/ Ես ի՞նչ կարող եմ անել

բ/ Ես ի՞նչ պետք է անեմ:

գ/ Ինչի՞ վրա կարող եմ հույս դնել:

դ/ Ինչ է մարդը:

5. Բնական գիտություններն ու արտադրությունը աշխարհ են ստեղծում մարդու համար, փիլիսոփայությունը որպես հումանիտար գիտելիք մարդ է նախապատրաստում աշխարհի համար:
6. Փիլիսոփայական խորհրդածությունների օբյեկտը ոչ թե կեցության որևէ կողմն է, այլ ողջ գոյավորը իր բովանդակության և իմաստի ամբողջության մեջ:
7. Եթե աշխարհն իրոք լիներ այնպիսին, ինչպիսին այն երևում է մարդուն նրանց գործնական կյանքում, թերևս փիլիսոփայության կարիքը չլիներ: Մինչդեռ աշխարհը որքան ակնհայտ, նույնքան առեղծվածային է մարդու համար: Փիլիսոփայությունը ծնվում է երևույթի և էության այդ հակադրությունից:
8. Մարդու կողմից աշխարհը ճանաչելու հնարավորույթունների ու կարողությունների սահմանների և հարակից այլ ճշմատության այլ տեսակների՝ ստի, մոլորության, ճշմարտության չափանիշի ու դրանց առնչվող մյուս խնդիրների մասին:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի /կկարողանա/

Կարողություն.

1. Պնդել, որ փիլիսոփայության կարիքը միշտ էլ զգացվում է, առանց որևէ պարտադրանքի, այն մեր հոգևոր կյանքի մի մասն է, բաղկացուցիչ մասը, հոգևոր պահանջմուքնի բավարարման ձև, որ փիլիսոփայական գիտելիքի զարգացման գրավականը մտքի ազատությունն է:
2. Մեկնաբանել, որ փիլիսոփայությունը միայն անձնական գործ չէ, փիլիսոփայական ուսմունքներում արտացոլվում են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց մտածմունքները, իդեալները և նպատակները:
3. Եզրահանգումներ կատարել կոնկրետ ոիլիսոփաների ուսմունքների հենքի վրա՝ այդ թվում Հեգելի «Փիլիսոփայությունը դարաշրջանի հոգևոր խտացումն է» կարգախոսի փիլիսոփայությունը, տվյալ դարաշրջանիմարդկանց մտածմուքների, իդեալների և նպատակների հանրագումարն է:
4. Ընդհանրացնել, որ փիլիսոփայության շնորհիվ մենք իրատես ենք դառնում մեր ճանաչողական հնարավորությունների գնահատման մեջ:
5. Բացահայտելու, որ փիլիսոփայությունը թե՛ անձնական և թե՛ հասարակական կյանքի կողմնակի ուղեկիցը չէ, այլ հենց կյանքը որպես «ապրում» և կենսադիրքորոշում, այն ծնվում է կյանքի էությունից:
6. Բացահայտելու փիլիսոփայության չափազանց տարողունակ, ընդգրկուն իմաստները, փիլիսոփայության «հավերժական հարցերի» բովանդակությունը:
7. Ճանաչել առավել խորությամբ և բազմակողմանիորեն հասարակական հարաբերությունները: Հասարակական կյանքի նկատմամբ ցուցաբերել քննախույզ և խորքային մոտեցում:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Հմտություն.

5. Ներկայացնելու, որ փիլիսոփայությունը գոյություն ունի ոչ այլ կերպ քան հանուն մարդու, քանզի փիլիսոփայական խորհրդածությունների կենտրոնում միշտ եղել ու մնում է մարդը, որպես կեցության բարձրագույն որժեքն ու նպատակը:
6. Աջակցելու մարդկանց, դասընկերներին, դրսևորելու չափազանց ուշադիր վերաբերմունք հանդեպ մարդ արարածի:

7. Ցուցաբերելու վերլուծական, ինքնուրույն և քննադատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի իր մասնագիտության ուղղությամբ, ոլորտում, փիլիսոփայական հարցերի փոխառնչության կապակցությամբ:
8. Բացահայտել իր համար և փոխանցել մյուսին, որ մարդու համար իր իսկ սեփական գոյության առեղծվածը այն ճանապարհն է, որ նրան տանում է դեպի տիեզերքի առեղծվածը:
9. Պատկերավոր ներկայացնել, որ ձգտելով բացահայտել իր իսկ սեփական էությունը, մարդը փորձում է դա անել բնության իմաստավորման միջոցով և վերջին հաշվով հանգում այն մտքին, որ տիեզերքը հրաշք է մարդու մեջ, մարդը հրաշք է տիեզերքում:
10. Գործնականում իրականացնել փիլիսոփայական տիեզերքի յուրահատկությունը, շեշտելով գիտություն լինելու հանգամանքը, ստվերում չթողնել զգացական-գեղագիտական կողմնորոշումը դեպի արվեստն ունեցած հակվածությունը:
11. Դրսևորել քննական և վերլուծական մոտեցում հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային ոլորտների փոխկապակցության վերաբերյալ, կյանքի որակի և առաջընթացի արժեհամակարգում:
12. Ի մի բերել կեցության խնդրի աղերսները մարդկային գոյության իմաստի համատեքստում, նշանաբան ունենալով ոչ միայն ճշմարիտը այլև բարին ու գեղեցիկը:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1 Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները, **ԹԵՄԱ 2** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը, **ԹԵՄԱ 3** Գոյաբանություն, **ԹԵՄԱ 4** Փիլիսոփայական մարդաբանություն /անտրոպոլոգիա/, **ԹԵՄԱ 5** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական - գաղափարական տարասեռ համակարգերում, **ԹԵՄԱ 6** Իմացաբանություն, **ԹԵՄԱ 7** Սոցիալական փիլիսոփայություն:

1.2. Կամընտրական դասընթացներ

1.2.1. Կրոնագիտության հիմունքներ

23/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (2 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, սպրուգարք

Դասընթացի նպատակը.

Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝ կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը,, ոչ ավանդական կրոնների

առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը,

Կկարողանա՝ հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:

Կտիրապետի՝ ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4**. Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դենոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** ՀՀ արդի կրոնական իրավիճակը:

1.2.2. Վիճակագրության ընդհանուր տեսություն

12/Բ26 Վիճակագրության ընդհանուր տեսություն (2 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, սպրուգարք

Դասընթացի նպատակն է զանգվածային պատահական երևույթների և դրանց բնորոշ օրինաչափությունների վերաբերյալ տեսական գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ընդհանրացնող բնութագրիչների որոշման հիման վրա տվյալների գիտական մշակման և վերլուծության հնարքների, եղանակների և մեթոդների կիրառման գործնական հմտությունների ձևավորումը:

«Վիճակագրության ընդհանուր տեսություն» դասընթացը ներառված է «Սերվիս» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրում:

«Վիճակագրության ընդհանուր տեսություն» դասընթացը մշակում է վիճակագրական ընդհանուր հասկացությունները, կատեգորիաներն ու սկզբունքները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական երևույթների քանակական ուսումնասիրության մեթոդները:

«Վիճակագրության ընդհանուր տեսություն» դասընթացը հիմնարար նշանակություն ունի և տեսական ու մեթոդաբանական հիմք է հանդիսանում կիրառական վիճակագրության դասընթացի և բիզնեսի առաջադրած խնդիրները լուծելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Գիտենա՝

- սկզբնական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ձևերը, տեսակները, եղանակները, ռեսպոնդենտների հետ անմիջական շփման սկզբունքները և տեխնիկան,
- տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվական բազան, այդ ցուցանիշների վերլուծության մեթոդիկան,

- տեղեկատվության վիճակագրական մշակման և համակարգման հիմնական մեթոդները և գործիքային միջոցները,
- երևույթների և գործընթացների վիճակագրական չափման և նկարագրման կատեգորիաները, հայեցակարգերը, ցուցանիշների համակարգերը և դրանց կառուցման կանոնները,
- վերլուծական և հետազոտական խնդիրների լուծման համար կիրառվող հիմնական ժամանակակից տեխնիկական միջոցները և տեղեկատվական տեխնոլոգիաները:

Կարողանա

- կազմակերպել և անցկացնել վիճակագրական դիտարկումներ, հավաքագրել և ամփոփել անհրաժեշտ տվյալներ՝ առաջադրված խնդիրները լուծելու համար,
- իրականացնել վիճակագրական տվյալների մշակման գործիքակազմի ընտրություն և հիմնավորում՝ առաջադրված խնդրին համապատասխան,
- օգտագործել և հիմնավորել տվյալների մշակման համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաներ, ամփոփված տվյալները ներկայացնել գրաֆիկական և աղյուսակային տեսքով,
- ընտրել ուսումնասիրվող երևույթը կամ գործընթացը բնութագրող ցուցանիշների համապատասխան համակարգը,
- գնահատել և վերլուծել երևույթների ու գործընթացների դինամիկան, փոխկապվածությունները և զարգացման միտումները, բացահայտել կոնկրետ իրավիճակների ուսումնասիրության հիմնախնդիրները,
- օգտագործել վիճակագրական կիրառական ծրագրերի փաթեթները զանգվածային տվյալների բազաների, երևույթների ու գործընթացների վիճակագրական վերլուծությունում:

Տիրապետի՝

- վիճակագրական հետազոտություն անցկացնելու ընդհանուր սկզբունքներին և հմտություններին,
- զանգվածային տվյալների մշակման համար անհրաժեշտ գործիքակազմին,
- վիճակագրական դիտարկման մեթոդներին ու տեխնոլոգիաներին և տեղեկատվություն հավաքագրելու և մշակելու հմտություններին,
- երևույթներն ու գործընթացները վերլուծելու և կանխատեսելու, ստացված արդյունքները բովանդակալից մեկնաբանելու հմտություններին,
- ժամանակակից ԷՀՄ-երի կիրառական ծրագրային ապահովության ընտրության և օգտագործման հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վիճակագրության ներածությունը: **Թեմա 2.** Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 3.** Վիճակագրական բաշխումներ: **Թեմա 4.** Դինամիկայի շարքեր: **Թեմա 5.** Ինդեքսային մեթոդ:

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

2.1.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ

13/Բ51Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ

Շաբաթական 2 ժամ (10 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը՝

Դասընթացի ուսումնասիրման միջոցով ուսանողները հնարավորություն են ստանում գիտելիքներ ստանալու համակարգիչների կառուցվածքի, Windows օպերացիոն համակարգի և նրանց աշխատանքի հիմնական սկզբունքների մասին:

Ուսումնասիրվում է MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և փաստաթղթերիի ձևավորումը նրա օգնությամբ:

Ուսումնասիրվում է MS Office փաթեթի Power Point ներկայացումների պատրաստման տեխնոլոգիան:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել.

- համակարգիչների մինիմալ կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հետ,
- Windows օպերացիոն համակարգի հետ և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին,
- MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի և նրա աշխատանքի հետ,
- MS Office փաթեթի PowerPoint շնորհանդեսների ստեղծման ծրագրի աշխատանքի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները
2. Համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները,
3. Համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները,
4. MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները,
5. MS Office փաթեթի Power Point - ով շնորհանդեսներ պատրաստել:

Կկարողանա՝

1. աշխատել «Windows»-ի միջավայրում,
2. օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար,
3. օգտագործել MS Office փաթեթի Power Point խմբագրիչը ներկայացումներ պատրաստելու համար:

Կտիրապետի՝

1. համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների,
2. Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ գիտելիների,
3. MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծմանը և ձևավորմանը,

4. MS Office փաթեթի Power Point խմբագրիչի օգտագործմանը ներկայացումներ պատրաստելու համար:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները:

Թեմա 2. Համակարգչի տեխնիկական ապահովումը:

Թեմա 3. Համակարգչի ծրագրային ապահովումը:

Թեմա 4. Windows օպերացիոն համակարգ:

Թեմա 5. MS Office Word տեքստային խմբագրիչ:

Թեմա 6.MS Office Power Point ներկայացումների պատրաստման տեխնոլոգիա:

2.1.2. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր

13/Բ52 Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր (3 **Կրեդիտ)**

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը՝

Դասընթացի նպատակն է "Մարդ - բնական միջավայր'' համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն; հասկանալ թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում կայացնել և իրադրությանը համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝

- Ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները,
- Հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները,
- Նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը,
- Լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում,
- Մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները,

- Ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները,
- Բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները,
- Ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները,
- նկարագրել արտակարգ իրավիճակները,
- վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն,
- արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա

Կկարողանա՝

- Կիրառել ստացած գիտելիքները ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին,
- Իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից,
- Ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները,
- Լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից,
- կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում,
- իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել,
- ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին համապատասխան:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի

Կտիրապետի՝

- Կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին,
- Արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին,
- Անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին,
- Քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին,
- Վտանգված տեղանքում փրկարարական աշխատանքներիռեժիմների,
- կատարել արհեստական շնչառություն,
- կատարել սրտի անուղղակի մերսում,
- կատարել վերքերի և վնասվածքների վիրակապում:

Բովանդակությունը.

ԹԵՄԱ 1. Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **ԹԵՄԱ 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **ԹԵՄԱ 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից: **ԹԵՄԱ 4.**Հակահրդեհային պաշտպանություն: **ԹԵՄԱ 5.**Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից: **ԹԵՄԱ 6.**Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից: **ԹԵՄԱ 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **ԹԵՄԱ 8.**Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **ԹԵՄԱ 9.**Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **ԹԵՄԱ 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **ԹԵՄԱ 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **ԹԵՄԱ 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **ԹԵՄԱ 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **ԹԵՄԱ 14.** Սրտի աշխատանքի

խանգարումներ: **ԹԵՄԱ 15**. Արյունահոսություններ: Վիրակապական նյութեր և վիրակապեր: Փափուկ հյուսվածքների վնասվածքներ: **ԹԵՄԱ 16**. Այրվածքներ: Ջերմային խանգարումներ: **ԹԵՄԱ 17.** Թունավորումներ:

2.2. Կամընտրական դասընթացներ

2.2.1. Կայուն տուրիզմի հիմունքներ

13/Բ5 Կայուն տուրիզմի հիմունքներ (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ընդհանուր պատկերացում տալ կայունության և կայուն զբոսաշրջության մասին և նկարագրել կայուն զբոսաշրջության կառավարման հիմնական սկզբունքները: Այստեղ քննարկվում են նաև կայունություն ապահովելու և կայուն զբոսաշրջություն զարգացնելու գործընթացներին խոչընդոտող գործոնները:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Մեկնաբանել Լուսաբանել Կայունություն զարգացում հասկացությունը՝ որպես քաղաքականության, բիզնեսի և հասարակության գլոբալ զարգացման կարևոր ուղենիշ, մարդկային զարգացման տեսլականը ապագայում:

- Գաղափար կազմել կայուն զարգացման բոլոր ոլորտների վերաբերյալ՝ մասնավոր և հանրային, ինչպես նաև կենսապայմաններին, հանդուրժողականությանը, մարդու իրավունքներին ու կրթությանը:

-Լուսաբանել Կայուն զբոսաշրջության հիմնական սկզբունքները, ցանկացած տիպի զբոսաշրջության սոցիալական, բնապահպանական և տնտեսական ասպեկտները:

- Գնահատել զբոսաշրջության դրական և բացասական ազդեցությունները՝ որպես եկամտի աղբյուր, որը նպաստում է ներդրումների ներհոսքին և ենթակառուցվածքների զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը,

Կկարողանա՝

-Հիմնավորել պատմականորեն ձևավորված «կայուն զարգացում» հասկացությունը է «կայունություն» հասկացության հետ միաժամանակ՝ կապելով բնապահպանական շարժումը համերաշխությունը և արդյունքների հավասար բաշխումը:

Տիրապետել Կայուն զբոսաշրջության զարգացման ուղեցույցներին և կառավարման մեթոդներին, որոնք կիրառելի են զբոսաշրջության բոլոր տեսակների համար բոլոր ուղղություններով՝ ներառյալ մասսայական զբոսաշրջությունը և զբոսաշրջության տարբեր թիրախային սեգմենտները:

Բացահայտել կայուն զբոսաշրջության կառավարմանհամար անհրաժեշտ տարածքային զարգացման ցուցանիշները:

- Բացահայտել զբոսաշրջության ազդեցությունները էկոհամակարգերի վրա, որը կարող է վտանգվել էկոհամակարգերը ճնշում գործադրել կոմունալ ենթակառուցվածքների վրա, վտանգվել համայքների ազգային ավանդական, մշակութային արժեքները:

Կտիրապետի՝

-Կտիրապետել Շրջակա միջավայր վերաբերյալ ՄԱԿ-ի ծրագիրին (ՄԱԿ ՇՄԾ), որտեղ կայուն զարգացումը սահմանում է, որպես մի զարգացում, որն ապահովում է բնական պաշարների և շրջակա միջավայրի օգտագործումն այսօր՝ վտանգի տակ չդնելով ապագայում դրանց օգտագործման հնարավորությունը:

-Սահմանվել կայուն զբոսաշրջությունը որպես զբոսաշրջություն, որը լիովին հաշվի է առնում իր ներկա և ապագա տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունները՝ ուշադրություն դարձնելով այցելուների կարիքներին:

-Գնահատել կայուն զբոսաշրջության տնտեսական ազդեցության՝ ուղղակի, անուղղակի և հավելյալազդեցությունները:

· Գնահատել ենթակառուցվածքների զարգացման և զբոսաշրջային դեստինացիաների փոխժադարձ կապը, որը կարող է լինել կայուն եկամտի աղբյուր, նպաստելով ռեսուրսների՝ հողի և ջրի ռացիոնալ օգտագործմանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կայուն զարգացում հասկացությունը: **Թեմա 2.** Կայուն զարգացումը որպես հասարակության, տնտեսության և շրջակա միջավայրի միջև փոխհարաբերությունների նոր տեսակ: **Թեմա 3.** Կայուն զբոսաշրջության կառավարման սկզբունքները: **Թեմա 4.** Զբոսաշրջության դրական և բացասական ազդեցությունները: **Թեմա 5.** Կայուն տուրիզմը և տնտեսության զարգացումը: **Թեմա 6.** Գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը՝ որպես կայուն զբոսաշրջության գործիք: **Թեմա 7.** Մասնավոր դեպքի ուսումնասիրություն. Հանգստյան տան կայունության գնահատումը:

2.2.2. Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր

13/Բ5 Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները: Դասընթացը հիմնականում հիմնված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/

1. Լուսաբանել բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները,
2. Մեկնաբանել բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում,
3. Բացահայտել տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները:
4. Ճանաչել երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:

5. Նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխպայմանավորվածությունը,
6. Հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը:
7. Բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա
/Կարողություն/

1. Կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնական բնույթի աշխատանքներ կատարելիս,
2. Տարբերակել բնագիտության արդի հիմնախնդիրներն ըստ ոլորտների, նկարագրել դրանց բնորոշ առանձնահատկությունները և նշանակությունը ժամանակակից աշխարհում:
3. Բացահայտել կենսոլորտի ֆունկցիոնալ առանձնահատկությունները. որպես մեկ միասնական ամբողջականություն:
4. վերլուծել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները, կենսոլորտի վրա մարդածին գործոնը մեղմացնելու ուղիները:

Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի
/Հմտություն/.

1. Բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին:
2. Բնություն-կենսոլորտ-մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ժամանակակից բնագիտության կառուցվածքը, գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: **Թեմա 3.**XX դարի բնագիտական և գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհընկալման տիպերի հերթագայումը: **Թեմա 4.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: **Թեմա 5.** Արեգակնային համակարգի առանձնահատկությունները,երկիր մոլորակ, օդային թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլերտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը: **Թեմա 6.** Մատերիայի կենսաբանական կազմակերպվածության մակարդակի բնութագրությունը **Թեմա 7.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլերտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

3.1. Պարտադիր դասընթացներ

3.1.1. Օտար լեզու (անգլերեն)

Նպատակը.

Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների մասնագիտական անգլերենի իմացությունը և հաղորդակցական հմտությունները՝ հնարավորություն տալով նրանց արդյունավետորեն շփվել միջազգային զբոսաշրջիկների հետ, կիրառել զբոսաշրջությանը բնորոշ տերմինաբանություն, ներկայացնել զբոսաշրջային ծառայություններն ու մշակութային արժեքները, ինչպես նաև օգտագործել անգլերենը իրական աշխատանքային իրավիճակներում՝ հյուրանոցային, տուրօպերատորական, զբոսավարական և այլ ոլորտներում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Զբոսաշրջության ոլորտին բնորոշ մասնագիտական անգլերեն տերմինաբանության և հասկացությունների իմացություն:
- Զբոսաշրջային ծառայությունների ներկայացման, հյուրանոցային և տուրօպերատորական ոլորտներում միջազգային հաղորդակցության լեզվական առանձնահատկությունների ծանոթություն:
- Միջմշակութային հաղորդակցության սկզբունքների և զբոսաշրջային ոլորտում դրանք կիրառելու պահանջների գիտակցում:

Կկարողանա՝

- Անգլերենով ներկայացնել զբոսաշրջային ուղղություններ, ծառայություններ, ծրագրեր և մշակութային արժեքներ:
- Կազմել և ներկայացնել տուրիստական փաթեթներ, ուղեցույց-տեքստեր, տեղեկատվական բուկլետներ և այլ մասնագիտական նյութեր:
- Մասնակցել մասնագիտական քննարկումների, բանակցությունների և աշխատանքային հանդիպումների՝ օգտագործելով ոլորտին համապատասխան անգլերեն:

Կտիրապետի՝

- Արդյունավետ և վստահ հաղորդակցվել միջազգային զբոսաշրջիկների, գործընկերների և այցելուների հետ տարբեր մասնագիտական իրավիճակներում:
- Օգտագործել անգլերեն լեզուն գործնական միջավայրում՝ հյուրանոցային սպասարկման, տուրօպերատորական գործունեության, զբոսավարության և հաճախորդների հետ աշխատանքի ընթացքում:
- Լուծել մասնագիտական խնդիրներ՝ կիրառելով համապատասխան լեզվական կառուցվածքներ և հաղորդակցական ռազմավարություններ:

24/Բ30 Օտար լեզու (անգլերեն)-1 (5 Կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (60 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, սպրուգարք

Բովանդակությունը.

Unit 1. What is tourism?

Customer care: 'The customer is always right'
Find out: Facts and statistics on your country
Listening: Three jobs
Reading: Tourism: the biggest business in the world
Speaking: Careers questionnaire, Job skills
Writing: Country fact sheet
Language spot: Describing job skills, Describing job routines
Vocabulary: Adjectives for Job skills, Industry sectors, Personal Learning Dictionaries
Pronunciation: Syllables

Unit 2. World destinations
Customer care: Different destinations – different customs
Find out: Country/region fact sheet, brochure presentation
Listening: Where do tourists go? Favourite places
Reading: Where do tourists come from?
Speaking: The biggest spenders and the biggest earners
Writing: Describing a destination
Language spot: Describing resources and features
Vocabulary: Tourism features and attractions
Pronunciation: Dictionary transcriptions

Unit 3: Tour operators
Customer care: The personal touch
Find out: Tour operators in your country
Listening: Why choose a package holiday? The'Peace in Burma'tour
Reading: The role of tour operators, An inclusive tour
Speaking: Talking to tour operators, Designinga package tours
Writing: A web page for a package tour, Describing local tour operations
Language spot: Asking questions Prepositions oftime
Vocabulary: Tour operation
Pronunciation: Word stress

24/Բ31 Օտար լեզու (անգլերեն)-2 (5 Կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (60 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, քննություն
Բովանդակությունը.
Unit 4: Tourist motivations
Customer care: 'We know what you want..'
Find out: Old and new you tourism
Listening: Reasons for travel and money spent on travel; Passenger survey; Interview with a Kenyan tour operator
Reading: Why do people travel? The changing face of tourism
Speaking: Changes in tourist motivation
Writing: Old and new tourism in your country or region
Language spot: Talking about reason; Describing trends
Vocabulary: Reasons for travel

Pronunciation: /J/,/tf/,/d3

Unit 5: Travel agencies

Customer care: Identifying needs
Find out: Local travel agency evaluation
Listening: All in a day's work; A new customer; Presenting a product
Reading: The sales process; The impact of the Internet
Speaking: Investigating client's needs; Suggesting alternatives and making a recommendation
Writing: A report on a travel agency
Language spot: Open'and Open 'closed'questions Suggestions and advice
Vocabulary: Sales terms
Pronunciation: The alphabet

Unit 6: Transport in tourism

Customer care: Exceeding expectations
Find out: Transport in your country
Listening: Transport systems and cable cars in San Francisco; A cruise ship worker
Reading: San Francisco; transport , timetables and schedules
Speaking: What is most important for tourists when travelling? Timetable information.
Writing: Transport and timetable information
Language spot: Comparing things; Describing a timetable
Vocabulary: Transport words; Adjectives describing transport
Pronunciation: /e/,/i:/,/ex/ /æ/,/a:/,/a1/

24/Բ32 Օտար լեզու (անգլերեն)-3 (5 Կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (60 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Բովանդակությունը.

Unit 7: Accomodation

Customer care: Smile on the phone
Find out: Local accommodation
Listening: A place to stay; Taking a reservation by telephone
Reading: What makes a good hotel? Accommodation in Scotland
Speaking: Giving information about hotels; Unusual accommodation; Taking a telephone booking
Writing: Local accommodation
Language spot: Describing location
Vocabulary: Types o accommodation; Services and facilities; Describing accommodation: adjectives and nouns
Pronunciation: Question stress

Unit 8: Marketing and promotion

Customer care: Learn from your customers
Find out: Local tourism promotions
Listening: Analysing your product; Promotion in tourism
Reading: Whatis marketing? Promotional techniques
Speaking: Do you SWOT? Presenting a campaign

Writing: Adverts; Promotional Campaign news
Language spot: Verb patterns; Superlatives
Vocabulary: Marketing terminology; The language of advertising
Pronunciation: Phonetic transcriptions

Unit 9: The airline industry
Customer care: Questionnaire tactics
Find out: Carbon offset schemes and blacklists
Listening: The ups and downs of flying; Low-cost or traditional?
Reading: Tourism and air travel, Revolution in the skies
Speaking: The air trave route map
Writing: Producing a questionnaire
Language spot: 'likes' or 'dislikes', Asking questions politely
Vocabulary: Air travel Low-cost carriers
Pronunciation: Airport names and codes /t/ and/d/
24/Բ33 Օտար լեզու (անգլերեն)-4 (5 Կրեդիտ)
Շաբաթական 5 ժամ (60 գործնական)
4-րդ կիսամյակ, քննություն
Բովանդակությունը.
Unit 10: Holidays with a difference
Customer care: Ability and suitability
Find out: Cultural tips
Listening: At the trade fair Interview with a mountaineer
Reading: The Karakoram Experience; Cultural differences
Speaking: Have you ever...? Questions on Antarctica
Writing: Tourist types and holiday types
Language spot: Asking and talking about experience; Describing service provision
Vocabulary: Different holiday types; Escape and enlightenment holiday
Pronunciation: /bl,/v/,/wl
Unit 11: Reservations and sales
Customer care: Putting on the pressure
Find out: Cultural tips
Listening: Local use of GDSs
Reading: Taking a booking; The origins of CRSS Handing over tick tickets
Speaking: Holiday bookings, getting the right information; Computer reservation systems; Abbreviations and codes; The small print
Writing: Have you decided where to go? Explaining booking conditions
Language spot: Confirming a booking, 'if'
Vocabulary: Reservation, systems for tour
Pronunciation: /2/,1e1/,/1/,/ax
Unit 12: Airport departure
Customer care: Care or control
Find out: Your nearest airport
Listening: An airport worker; Two airport dialogues; Two more airport dialogues
Reading: Working in airports; Air passengers' rights
Speaking: The check-in and information desks; Incident and action log; Controlling passengers

Writing: Airport factfile
Language spot: Responding politely to questions and requests; Giving orders and stopping people doing something
Vocabulary: Airport facilities and services, Airport language
Pronunciation: Sounding firm but polite

3.1.2.Մասնագիտության ներածություն

13/Բ37 Մասնագիտության ներածություն(4 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել «Սերվիս» մասնագիտության տեսական հիմքերը, զարգացման պատմությունը և արդի միտումները՝ ձևավորելով նրանց մոտ ընդհանուր պատկերացում ծառայությունների ոլորտի կառուցվածքի, նշանակության և գործառույթների մասին: Ուսանողները կսովորեն գնահատել սերվիսային գործունեության դերը տնտեսության և հասարակության զարգացման մեջ, ինչպես նաև կստանան նախնական գիտելիքներ սպասարկման մշակույթի, հաճախորդամետ մտածողության և մասնագիտական էթիկայի վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Սերվիսի մասնագիտության էությունը, հիմնական սկզբունքներն ու գործառույթները:
- Սերվիսային գործունեության պատմական զարգացումը և ժամանակակից միտումները:
- Սերվիսի կազմակերպման կառուցվածքը, տեսակները և ոլորտները:
- Սպասարկման մշակույթի, հաղորդակցման և հաճախորդամետության հիմունքները:
- Սերվիսի մասնագետի մասնագիտական և էթիկական պահանջները:

Կկարողանա՝

- Վերլուծել տարբեր ոլորտներում սերվիսի առանձնահատկությունները և գործառույթները:
- Ներկայացնել սերվիսային գործընթացների հիմնական փուլերն ու կազմակերպման սկզբունքները:
- Կիրառել հաղորդակցման և ծառայության որակի ապահովման հիմնական սկզբունքները:
- Ընտրել համապատասխան մոտեցումներ հաճախորդների սպասարկման և բավարարվածության բարձրացման համար:

Կտիրապետի՝

- Սերվիսային գործունեության հիմնական տերմինաբանությանը և սկզբունքներին:
- Հաղորդակցման և ներկայացման հմտություններին՝ համապատասխան մասնագիտական միջավայրին:
- Սերվիսի ոլորտում կիրառվող վարքականոններին, էթիկային և գործնական վերլուծության մեթոդներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սերվիսի մասնագիտության ծագումն ու զարգացման փուլերը:

Թեմա 2. Սերվիսի էությունը, դերը և նշանակությունը տնտեսության մեջ:
Թեմա 3. Սերվիսային գործունեության կառուցվածքը և հիմնական ոլորտները:
Թեմա 4. Սպասարկման մշակույթ և հաճախորդամետ մոտեցում:
Թեմա 5. Սերվիսի որակի ցուցանիշներ և գնահատման մեթոդներ:
Թեմա 6. Սերվիսի մասնագետի մասնագիտական վարք, էթիկա և հաղորդակցման մշակույթ:
Թեմա 7. Տուրիստական, հյուրանոցային, առողջապահական և կրթական ծառայությունների առանձնահատկությունները:
Թեմա 8. Ժամանակակից միտումներ և նոր տեխնոլոգիաների ազդեցությունը սերվիսային ոլորտի վրա:
Թեմա 9. Գործնական վարժություններ՝ իրավիճակային վերլուծություն և սպասարկման սիմուլյացիա:

3.1.3. Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ

13/Բ5 Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ (4 Կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (24 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

«Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» առարկան նպատակ է հետապնդում բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ ու կուլտուրայով, ծանոթացնել նրան բնական համակարգերի կազմավորման և բնօգտագործման գործունեության հիմունքներին, մարդ-բնություն-հասարակություն փոխհարաբերություններին, էկոլոգիական հիմնահարցերին: «Էկոլոգիա և բնապահպանության հիմունքներ» դասընթացի դասավանդումը կարևորվում է էկոլոգիական գրագիտության ու կուլտուրայի մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերելու առումով:

Դասընթացի ուսումնասիրման ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվելու է բնական համակարգերի կազմավորման և բնօգտագործման գործունեության հիմունքներին, կենսոլորտի կայունությանը, մարդածին էկոլոգիական ճգնաժամերին:

Դասընթացի ուսումնասիրումը ուսանողներին հնարավորություն կտա ծանոթանալու Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Դասընթացի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում բնական պաշարներին և դրանց դասակարգմանը, բնական ռեսուրսների ճգնաժամների վրա:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/

- Լուսաբանել էկոլոգիական հիմնական գործոնների տիպերը, դրանց փոխադարձ ազդեցությունները գոյության պայմանների վրա:

- Մեկնաբանել միջավայրի պայմանների (օդային, ջրային, հողային) ազդեցությունը օրգանիզմների վրա, որոշել օրգանիզմների հարմարողականության բնույթը:

- Բացահայտել կենսացենոզում սնման շղթաները, սնման մի շղթայից մյուսին անցնելիս էներգիայի կորստի օրինաչափությունները:

-Ճանաչել երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ, էկոհամակարգերի կազմավորման հիմնական սկզբունքները:

- Նկարագրել մարդ-բնություն միասնականությունը, հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների ծագումնաբանությունը,դրանց հաղթահարման ուղիները:

- Բացատրել բնական ռեսուրսների դասակարգման, արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները:

<u>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ կկարողանա</u>

<u>/Կարողություն/</u>

-Կիրառել ստասած գիտելիքները միջավայրի էկոլոգիական վիճակը գնահատելու, ինչպես նաև էկոլոգիական մոնիթորինգ իրականացնելու համար:

-Բացահայտել կենսոլորտի ֆունկցիոնալ առանձնահատկությունները. որպես մեկ միասնական ամբողջականություն, կենսոլորտի առանձին բաղադրիչների փոփոխությունը, պայմանավորված կլիմայական պայմանների համընդհանուր փոփոխությամբ:

-վերլուծել բնության վրա մարդու ազդեցության հետևանքները, կենսոլորտի վրա մարդածին գործոնը մեղմացնելու ուղիները:

Հիմնավորել կենսոլորտի վրա համընդհանուր կլիմայական փոփոխության ազդեցությունը բնական և ագրոէկոհամակարգերի վրա, էներգիայի այլընտրանքային ձևերի ներգրավման հնարավորությունները:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը կտիրապետի</u>

<u>/Հմտություն/.</u>

- Էկոլոգիական հիմնական հասկացություններին, Օրգանիզմների վրա միջավայրի գործոնների ազդեցության ընդհանուր օրինաչափությունները (օպտիմումի կանոն, էկոլոգիական տոլերանտություն, գործոնների փոխազդեցություն, սահմանափակող գործոններ):

- Օրգանիզմների էկոլոգիական դասակարգման սկզբունքներին: Օրգանիզմների կենսական ձևերին, նրանց միջև գոյություն ունեցող կապերին:

- Մարդու կենսոլորտի վրա ունեցած ազդեցություններին, Կենսոլորտի կայունություններին, Մարդածին էկոլոգիական ճգնաժամերի Երկրագնդի ազգաբնակչության թվաքանակի աճով պայմանավորված բնական ռեսուրսների ճգնաժամի առանձնահատկություններին:

- Հայաստանի Հանրապետության էկոլոգիական հիմնախնդիրները և բնապահպանական միջոցառումներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Էկոլոգիայի առարկան և բովանդակությունը: Էկոլոգիայի ձևավորումը որպես գիտություն: Էկոլոգիական հիմնական հասկացությունները:

Թեմա 2. Բնակության միջավայր: Էկոլոգիական գործոններ և դրանց բնութագիրը:

Թեմա 3. Օրգանիզմների հարմարվողականությունը բնակության միջավայրի պայմաններին:

Թեմա 4. Պոպուլյացիա: Կենսահամակարգ: Էկոհամակարգ
Թեմա 5. Կենսոլորտ:

Թեմա 6. Սոցիալ-էկոլոգիական սուբյեկտները և նրա նց փոխազդեցությունը:

Թեմա 7. Մարդու փոխազդեցությունը բնության հետ:

Թեմա 8. Մթնոլորտի պահպանություն:

Թեմա 9. Ջրային պաշարների պահպանությունը:

Թեմա 10. Հողային պաշարների պահպանությունը:

Թեմա 11. Կենսաբազմազանության պահպանություն:

Թեմա 12. Հայաստանի Հանրապետության բնապահպանական խնդիրները և դրանց լուծման ուղիները:

3.1.4. Սերվիսագիտության հիմունքներ

13/Բ41. Սերվիսագիտության հիմունքներ (8 Կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ սերվիսագիտության տեսական և գործնական հիմքերի ամբողջական պատկերացում՝ ապահովելով նրանց մասնագիտական պատրաստվածությունը ծառայությունների կառավարման, կազմակերպման և որակի ապահովման ոլորտներում: Դասընթացը ուղղված է այնպիսի գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են ժամանակակից սերվիսային միջավայրում արդյունավետ աշխատելու և հաճախորդամետ ծառայություններ մշակելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Սերվիսագիտության տեսական հիմունքները, կառուցվածքն ու հիմնական սկզբունքները:
- Սերվիսային գործունեության տեսակները և կազմակերպման մոդելները տարբեր ոլորտներում:
- Սերվիսային ծառայությունների որակի ապահովման և կառավարման մեթոդները:
- Հաճախորդամետության, հաղորդակցման և սպասարկման մշակույթի հիմունքները:
- Սերվիսային կառավարման համակարգերի, բրենդավորման և մարքեթինգի սկզբունքները:
- Տնտեսության մեջ սերվիսային գործունեության դերը և ազդեցությունը:

Կկարողանա՝

- Վերլուծել և գնահատել տարբեր ոլորտների սերվիսային համակարգերի արդյունավետությունը:
- Մշակել և իրականացնել սերվիսային ծառայությունների բարելավման և որակի բարձրացման ծրագրեր:

- Կիրառել հաղորդակցման, հաճախորդների հետ աշխատանքի և թիմային համագործակցության հմտություններ:
- Գնահատել հաճախորդների բավարարվածությունը և առաջարկել նորարարական լուծումներ:
- Կազմակերպել և ներկայացնել սերվիսային նախագծեր կամ մոդելներ:

Կտիրապետի՝

- Սերվիսագիտության տերմինաբանությանը և գործնական կիրառության գործիքներին:
- Ծառայությունների որակի կառավարման, հաճախորդների հետ շփման և վերլուծության մեթոդներին:
- Մասնագիտական հաղորդակցման և ներկայացման հմտություններին:
- Սերվիսային կազմակերպության կառուցվածքային և վարքականոնային մշակույթին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սերվիսագիտության առարկան, խնդիրներն ու հետազոտման մեթոդները:
Թեմա 2. Սերվիսի որպես սոցիալ-տնտեսական համակարգի բնութագրերը:
Թեմա 3. Սերվիսային գործունեության կառուցվածքը, տեսակներն ու ոլորտները:
Թեմա 4. Սերվիսի կազմակերպման ձևեր և կառավարման մոդելներ:
Թեմա 5. Սերվիսի որակի հասկացությունը, չափման և կառավարման մեթոդներ:
Թեմա 6. Սպասարկման մշակույթ և հաճախորդամետ մոտեցում:
Թեմա 7. Սերվիսային հաղորդակցություն և մասնագիտական էթիկա:
Թեմա 8. Սերվիսային ծառայությունների մարքեթինգ և բրենդավորում:
Թեմա 9. Սերվիսի մարդկային ռեսուրսների կառավարում:
Թեմա 10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և թվայնացման դերը սերվիսային ոլորտում:
Թեմա 11. Սերվիսային նորարարություններ և ծառայությունների դիզայն:
Թեմա 12. Հաճախորդների բավարարվածության գնահատում և հետադարձ կապի համակարգեր:
Թեմա 13. Սերվիսային կառավարման միջազգային փորձ և ստանդարտներ (ISO, Quality Management):
Թեմա 14. Սերվիսի կազմակերպությունների սոցիալական պատասխանատվությունը և կայուն զարգացումը:
Թեմա 15. Գործնական աշխատանքներ՝ իրավիճակային վերլուծություններ, թիմային նախագծեր:

3.1.5. Սերվիսի աշխարհագրություն

13/Բ40 Սերվիսի աշխարհագրություն (2 Կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

«Սերվիսի աշխարհագրություն» դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ գիտելիքներ աշխարհագրական միջավայրի և տարածական գործոնների ազդեցության վերաբերյալ՝ սերվիսային ոլորտների զարգացման, տեղաբաշխման և կազմակերպման վրա: Դասընթացը հնարավորություն է տալիս հասկանալ բնական, տնտեսական, մշակութային և սոցիալ-աշխարհագրական առանձնահատկությունները, որոնք որոշիչ են զբոսաշրջության, հյուրասիրության, տրանսպորտային և այլ սերվիսային համակարգերի արդյունավետ գործունեության համար:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- սերվիսային ոլորտների աշխարհագրական դասավորության և զարգացման հիմնական օրինաչափությունները,
- համաշխարհային և տարածաշրջանային սերվիսային կենտրոնների ձևավորման գործոնները,
- բնական, մշակութային և սոցիալ-տնտեսական ռեսուրսների տարածական բաշխվածությունը և դրանց ազդեցությունը ծառայությունների շուկայի վրա,
- գլոբալիզացիայի և տարածաշրջանային ինտեգրացիայի ազդեցությունը սերվիսային տարածքների ձևավորման վրա:

Կկարողանա՝

- վերլուծել սերվիսային ծառայությունների տարածական կառուցվածքը և զարգացման միտումները տարբեր երկրներում,
- գնահատել տարածաշրջանի աշխարհագրական ներուժը՝ սերվիսային գործունեության տեսակների զարգացման տեսանկյունից,
- կատարել քարտեզագրական և վիճակագրական վերլուծություններ՝ օգտագործելով աշխարհագրական տվյալներ,
- հիմնավորել սերվիսային օբյեկտների տեղակայման ընտրությունը աշխարհագրական և տնտեսական գործոնների հիման վրա:

Կտիրապետի՝

- սերվիսային աշխարհագրական հետազոտության մեթոդաբանությանը,
- քարտեզների, գեոինֆորմացիոն համակարգերի (GIS) և տարածական տվյալների կիրառմանը սերվիսային պլանավորման գործընթացում,
- տարածաշրջանային և համաշխարհային մակարդակով սերվիսային ծառայությունների զարգացման համեմատական վերլուծության գործիքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Սերվիսային գործունեություն և սպասարկման ոլորտ:

Թեմա 2. Սպասարկման ոլորտը որպես միջճյուղային գիտական հետազոտությունների ոլորտ:

Թեմա 3. Սպասարկման ոլորտի աշխարհագրական ուսումնասիրությունների հիմնական ուղղությունները և ցուցանիշները:

Թեմա 4. Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումը և տարածքային համակարգերը:

Թեմա 5. Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության օբյեկտը, առարկան, խնդիրները: Կառուցվածքը, կապն այլ գիտությունների հետ:

Թեմա 6. Սերվիսի աշխարհագրության ուսումնասիրության մեթոդները:

Թեմա 7. Զբոսաշրջային և սանատոր- առողջարանային ծառայությունների աշխարհագրությունը:

Թեմա 8. Հյուրանոցային ինդուստրիայի և ծառայությունների աշխարհագրություն:

Թեմա 9. Ուղևորատրանսպորտային, գիտակրթական և հոգևոր – մշակութային ծառայությունների աշխարհագրությունը:

3.1.6. Զբոսաշրջային ծառայություններ

13/Բ62 Զբոսաշրջային ծառայություններ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, քննություն

Նպատակը.

Սույն դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի առանձնահատկություններին և հիմնախնդիրներին՝ մասնավորապես հյուրանոցներում մատուցվող զբոսաշրջային ծառայություններին: Տալ գիտելիքներ հյուրանոցում գործող բոլոր ծառայությունների տեսակների, աշխատանքային կարգի, աշխատակազմում գոյություն ունեցող պաշտոնների տեսակների վերաբերյալ:

Զբոսաշրջությունը որպես գիտություն տալիս է անհրաժեշտ գիտելիքներ գործնական աշխատանքներում կիրառելու ուղղությամբ:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը</u>

Կիմանա՝

1. տարբերակել և ներկայացնել զբոսաշրջության ժամանակակից տեսակները,
2. բացահայտել հյուրանոցային ծառայությունները և նրանց գործունեության առանձնահատկությունները,
3. տարբերակել հյուրանոցային տաբեր ծառայությունների աշխատանքային կարգը,
4. գիտականորեն ճանաչել հոյուրանոցային տնտեսության անձնակազմի աշխատանքի պաշտպանության ձևը,
5. դասակարգել համարային ֆոնդի սպասարկման ծառայության ֆունկցիաները և աշխատանքի կարգը:

Կկարողանա՝

1. կողմնորոշվել, արտահայտվել զբոսաշրջության ոլորտին վերաբերվող հարաբերությունների ժամանակակից տեսական քննարկումներում,
2. վերլուծել, մեկնաբանել, հյուրանոցային ծառայությունները,
3. մեկնաբանել, բնութագրել հյուրանոցային ծառայությունների անձնակազմի պաշտպանությունը՝ պահելով շուկայական մրցակցությունը,
4. վերհանել, պարզաբանել պետության կողմից հյուրանոցային ոլորտին վերաբերող մոտեցումները,
5. մեկնաբանել, պարզաբանել զբոսաշրջային օրենքի պահանջները,
6. ներկայացնել, տարբերակել անձնակազմի աշխատանքի կազմակերպման հիմնական դրույթները:

Կտիրապետի՝

1. Տիրապետի զբոսաշրջային ոլորտի համեմատական վերլուծությանը,
2. հյուրանոցային ծառայությունների առանձնահատկություններին,
3. պատկերավոր ներկայացնի անձնակազմի հանգստի կազմակերպման հնարավորությունները,
4. գործնականում կիրառել ինժեներական և անվտանգության ծառայության աշխատանքները:

Բովանդակությունը.

Թեմա 1. Զբոսաշրջության ծառայությունները.
Թեմա 2. Զբոսաշրջության տեսակները.

Թեմա 3. ՀՀ-ում կիրառվող զբոսաշրջության տեսակները և դրանց առանձնահատկությունը.
Թեմա 4. ՀՀ օրենքը զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության վերաբերյալ.
Թեմա 5. Զբոսաշրջության դերը տնտեսության ճյուղերի կառուցվածքում.
Թեմա 6. Հիմնական և լրացուցիչ ծառայություններ.
Թեմա 7. Ինովացիաների ներդրումը հյուրանոցային և զբոսաշրջային ոլորտում.
Թեմա 8. Հյուրանոցային ծառայությունները և նրանց գործունեության առանձնահատկությունները.
Թեմա 9. Վարչակառավարչական ծառայություն.
Թեմա 10. Ընդունելության և տեղավորման ծառայություն.
Թեմա 11. Համարների սպասարկման ծառայություն.
Թեմա 12. Հասարակական սննդի ծառայություն.
Թեմա 13. Կոմերցիոն /առևտրային/ ծառայություն.
Թեմա 14. Ինժեներատեխնիկական ծառայություն.
Թեմա 15. Օժանդակ և հավելյալ ծառայություններ.
Թեմա 16. Հյուրանոցային տնտեսության աշխատակազմին ներկայացվող պահանջները
Թեմա 17. Հյուրանոցային տնտեսության անձնակազմի աշխատանքի կազմակերպումը.
Թեմա 18. Հյուրանոցային տնտեսության անձնակազմի աշխատանքի կազմակերպման հիմնական դրույթները.
Թեմա 19. Ընդունման և տեղավորման ծառայության աշխատանքի կարգը.
Թեմա 20. Համարների ֆոնդի սպասարկման ծառայության ֆունկցիաները և աշխատանքի կարգը.
Թեմա 21. Ինժեներական ծառայության աշխատանքի կազմակերպումը.
Թեմա 22. Անվտանգության ծառայության աշխատանքի կազմակերպումը.
Թեմա 23. Հյուրանոցային տնտեսության անձնակազմի աշխատանքի պաշտպանությունը.
Թեմա 24. Հյուրանոցային կազմակերպության անձնակազմի հանգստի կազմակերպում.
Թեմա 25. Սենյակների սպասարկում.
Թեմա 26. Հյուրանոցների գնահատման կարգը.
Թեմա 27. Որոշում հյուրանոցային կարգերի մասին.
Թեմա 28. Զբոսաշրջային և հյուրանոցային նախապատմությունը.
Թեմա 29. Տուրիստական ֆիրմայի ղեկավարման ոճը.
Թեմա 30. Կառավարման ոճերի բնութագիր:

3.1.7. Հայ եկեղեցու պատմություն

23/Բ16 Հայ եկեղեցու պատմություն (2 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 դասախոսություն, 10 սեմինար)
3-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը.

Ուսումնասիրել Հայ առաքելական եկեղեցու ծագումը ձևավորումը և զարգացումը, ուսանողներին ծանոթացնել հայոց եկեղեցու դավանաբանական, ծիսապաշտամունքային հիմնական օրինաչափություններին ու առանձնահատկություններին, տոնածիսական համակարգին ու պատմության կարևորագույն իրադարձություններին:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայ առաքելական եկեղեցու ձևավորումը, զարգացումը,
2. Հայոց եկեղեցու դավանաբանական առանձնահատկութունները,
3. Հայոց եկեղեցու ծիսապաշտամունքային համակարգը,
4. Քրիստոնեության տարածումը Հայաստանում, Հայոց եկեղեցու պատմությունը IV դարում,
5. Հայոց եկեղեցին V-Xդդ.,
6. Հայ առաքելական եկեղեցու պատմութունը XI-XIX դարերում,

7. Հայ առաքելական եկեղեցին XX դարում:

Կկարողանա՝

1. սահմանել Հայ առաքելական եկեղեցու դավանաբանությունը,
2. վերլուծել Հայոց եկեղեցու տոնածիսական համակարգը:
3. խմբավորել Հայոց եկեղեցու տոները,
4. իրականացնել Հայոց եկեղեցու պատմության տարբեր շրջանների վերլուծութուն և քննական արժևորում,
5. բացահայտել Հայոց եկեղեցու պատմության տարբեր փուլերի հիմնական առանձնահատկություններն ու բնորոշ գծերը:

Կտիրապետի՝

1. Հայ առաքելական եկեղեցու դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, Հայոց եկեղեցու ուսումնասիրության մեթոդներին ու սկզբունքերին,

2. Հայ առաքելական եկեղեցու պատմությանը, կարող է վերլուծել և մեկնաբանել Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունները, Հայոց գործունեությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1. «Հայ եկեղեցու պատմություն» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա3.** Հայ եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 4.** Հայ եկեղեցին X – XIV դարերում: **Թեմա 5.** Հայ եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 6.** Հայ եկեղեցին XIX-XX դարերում:

<u>3.1.8. Տուրիստական երկրագրություն</u>

<u>13/Բ47 Տուրիստական երկրագրություն (6 կրեդիտ)</u>

Շաբաթական 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

1. Ուսանողներին ծանոթացնել տուրիստական երկրագրության հետ:

2. Ներկայացնել երկրագնդի հայտնի տուրիստական վայրերն՝ ըստ մայրցամաքների:

3. Խթանել ուսանողների երկրագնդի մասին ունեցած պատկերացումների և գիտելիքների զարգացմանն ու խորացմանը:

4. Օժտել մայրցամաքների և նրանց զբոսաշրջային ներուժի վերաբերյալ հետագայում դատողություններ անելու հմտություններով:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. Տուրիստական երկրագրության մասին:

2. Մայրցամաքներն առանձին-առանձին, նրանց ռելիեֆը, կլիման, ջրգրությունը, հողաբուսական ծածկը և կենդանական աշխարհը,

3. Զբոսաշրջային գրավչությունները

4. Հայտնի զբոսաշրջային վայրերը:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա՝

/Կարողություն/

1. Ներկայացնել մայրցամաքները ճիշտ հերթականությամբ:
2. Բացատրել մայրցամաքների վրա ձևավորված կլիմայական գոտիները և բնական զոնաները:
3. Վեր հանել մայրցամաքների զբոսաշրջային ողջ ներուժն ու գրավչությունը:
4. Մայրցամաքներն ու նրանց զբոսաշրջային հայտնի վայրերը քարտեզի վրա:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի՝

/Հմտություն/

Մայրցամաքների զբոսաշրջային վայրերը գրավիչ ներկայացնելու հմտություններին:

Բովանդակությունը.

Ներածություն:

Ընդհանուր տեղեկություններ Երկրագնդի մասին:

Մայրցամաքներ.

Աֆրիկա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, ներքին ջրերը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը: Աֆրիկայի զբոսաշրջային ներուժը: Աֆրիկայի հայտնի զբոսաշրջային վայրերը:

Ավստրալիա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, ներքին ջրերը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, զբոսաշրջային ներուժը: Ավստրալիայի հայտնի զբոսաշրջային վայրերը:

Անտարկտիդա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, Հարավային բևեռի նվաճումը, Անտարկտիդայի երկրաբանությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը: Անտարկտիդան որպես գիտական և էկզոտիկ տուրիզմի զարգացման կենտրոն:

Հարավային Ամերիկա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, ներքին ջրերը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, Հարավային Ամերիկայի զբոսաշրջային ներուժը: Հարավային Ամերիկայի հայտնի զբոսաշրջային վայրերը:

Հյուսիսային Ամերիկա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, ներքին ջրերը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, Հյուսիսային Ամերիկայի զբոսաշրջային ներուժը: Հյուսիսային Ամերիկայի հայտնի զբոսաշրջային վայրերը:

Եվրասիա, դիրքը, սահմանները, հայտնագործման պատմությունը, օգտակար հանածոները, ռելիեֆը, կլիման, ներքին ջրերը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, Եվրասիայի զբոսաշրջային ներուժը: Եվրասիայի հայտնի զբոսաշրջային վայրերը:

13/Բ48 Տուրիստական երկրագրություն (1 կրեդիտ)
Կուրսային աշխատանքի կատարման արդյունքում ուսանողը.

Գիտելիք՝

Գիտի-պրպտել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը համացանցային անծայրածիր դաշտում:

Բացահայտում է նոր վայրեր, որոնք կարող են հետաքրքիր լինել շատերին:

Կարողություն՝

Կարողանում է գտնել հետաքրքիր տեղեկատվություն և մատուցել հետաքրքիր տեսասահիկների ձևով, որոնք հետաքրքիր են լինելու ոչ միայն իրենց, այլև այլ լսարանների համար:

Հմտություն՝

Ձեռք է բերում հետաքրքիր նյութեր գտնելու, տեսասահիկներ կազմելու և ներկայացնելու հմտություններ:

Կուրսային աշխատանքի թեմաներ

1. Անոմալ աշխարհագրական երևույթներ
2. Առեղծվածային լճեր
3. Զարմանահրաշ գետեր:
4. Աշխարհի բարձրաբերձ գանաթները:
5. Երկրագնդի ամենաչորային հատվածները:
6. Արկրագնդի ամենախոնավ շրջանները:
7. Զբոսաշրջային հայտնի վայրեր:
8. Ուսանողների առաջարկությամբ…

3.1.9. Մասնագիտական էթիկա և էթիկետ

13/Բ36 Մասնագիտական էթիկա և էթիկետ (4 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ մասնագիտական վարքի, աշխատանքային հարաբերությունների, հաղորդակցական մշակույթի, էթիկայի և էթիկետի հիմնարար սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացը ուղղված է պատասխանատվության, թիմային աշխատանքի, մասնագիտական ազնվության, ծառայողական հաղորդակցության, գործնական էթիկետի ու պրոֆեսիոնալ վարքագծի ձևավորմանը՝ տարբեր ոլորտներում արդյունավետ ու հարգալից մասնագիտական միջավայր ապահովելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողը.

Կիմանա՝

- Մասնագիտական էթիկայի հիմնական հասկացությունները, սկզբունքները և արժեքները:

- Աշխատանքային միջավայրում ընդունված վարքագծի նորմերը և էթիկետային կանոնները:
- Մասնագիտական պատասխանատվության, ազնվության, գաղտնիության և անաչառության հիմնադրույթները:
- Բիզնես-հաղորդակցության էթիկայի կանոնները՝ բանավոր և գրավոր հաղորդակցության մշակույթը:
- Հաճախորդների, գործընկերների, ղեկավարության հետ հարաբերությունների էթիկական իրողությունները:
- Վեճերի լուծման, բանակցությունների և թիմային համագործակցության էթիկական մոտեցումները:
- Մասնագիտական ոլորտներում գործող միջազգային էթիկական նորմերի ընդհանուր շրջանակը:

Կկարողանա՝

- Վերլուծել և գնահատել մասնագիտական իրավիճակները էթիկական տեսանկյունից:
- Ընտրել էթիկորեն ճիշտ վարքագիծ տարբեր մասնագիտական համատեքստերում:
- Իրականացնել արդյունավետ, հարգալից և պրոֆեսիոնալ հաղորդակցություն:
- Կիրառել բիզնես-էթիկետի կանոնները պաշտոնական հանդիպումների, բանակցությունների և գրավոր հաղորդակցության ժամանակ:
- Կառավարել կոնֆլիկտները՝ պահպանելով մասնագիտական էթիկան և համագործակցային մոտեցումը:
- Ներդնել թիմային աշխատանքի, գործընկերային հարաբերությունների և ծառայողական մշակույթի առողջ մոդելներ:

Կտիրապետի՝

- Մասնագիտական վարքի և հաղորդակցման մշակույթի հմտություններին:
- Անձնական և մասնագիտական ինքնադրսևորման էթիկական սկզբունքներին:
- Հաճախորդամետ, գործընկերամետ և կազմակերպական էթիկայի կիրառման գործիքակազմին:
- Մասնագիտական էթիկայի նորմերին համապատասխան որոշումների ընդունման մեթոդաբանությանը:
- Էթիկետի կիրառման տեխնիկային՝ արտաքին տեսք, կեցվածք, խոսքի ձևակերպում, պաշտոնական արարողակարգ, ձեռնարկներ և հանդիպումների վարում:
- Թիմում, կազմակերպությունում և հաճախորդների հետ փոխհարաբերություններում հարգալից, վստահելի ու արդյունավետ միջավայր ձևավորելու կարողությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մասնագիտական էթիկայի հիմունքներ

1. **Էթիկայի և մասնագիտական էթիկայի հասկացությունները**
    - Էթիկայի պատմական զարգացում
    - Մասնագիտական էթիկայի դերակատարությունը մասնագետի գործունեությունում
2. **Արժեքներ, նորմեր և գործնական վարքագիծ**
    - Արժեհամակարգ և պրոֆեսիոնալ արժեքներ
    - Մասնագիտական հատկանիշներ և վարքագծի մոդելներ
3. **Մասնագիտական պատասխանատվություն և ազնվություն**
    - Պարտականություններ և պատասխանատվության սահմաններ
    - Գաղտնիության պահպանում, անաչառություն, վստահություն

Թեմա 2. Հաղորդակցություն և էթիկա մասնագիտական միջավայրում

1. **Բանավոր հաղորդակցություն և վարքագծային էթիկա**
    - Լսելու կարողություն, տոնայնություն, արտահայտման մշակույթ
    - Աշխատավայրում միջանձնային հարաբերությունների էթիկա
2. **Գրավոր հաղորդակցության էթիկա**
    - Էլ. նամակների, պաշտոնական նամակագրության կանոններ
    - Բիզնես հաղորդագրությունների ձևավորում
3. **Թիմային աշխատանք և համագործակցություն**
    - Գործընկերային հարաբերությունների մշակույթ
    - Տվյալների փոխանակում, օգնություն, աջակցություն

Թեմա 3. Բիզնես էթիկետ և պրոֆեսիոնալ վարքագիծ

1. **Բիզնես-էթիկետ. արտաքին տեսք և ներկայացում**
    - Dress code (պաշտոնական, գործնական, casual)
    - Արտաքին տեսքի և վարքագծի հաղորդագրությունը
2. **Օրակարգ և պաշտոնական հանդիպումների էթիկետ**
    - Հանդիպումների կազմակերպում և վարում
    - Ծանոթացում, ներկայացում, նստեցման կանոններ
3. **Հեռախոսային և առցանց հաղորդակցման էթիկետ**
    - Հեռախոսային զրույցի կանոններ
    - Առցանց հանդիպումների և Zoom/Teams էթիկա

Թեմա 4. Հաճախորդամետ վարքագիծ և ծառայողական էթիկա

1. **Հաճախորդների հետ աշխատանքի էթիկա**
    - Հաճախորդամետ մոտեցում
    - Դժվար և դժգոհ հաճախորդների հետ շփման տեխնիկա
2. **Կոնֆլիկտների լուծում և բանակցությունների էթիկա**
    - Խնդիրների խաղաղ կարգավորում
    - Հարգալից բանակցության կանոններ

Թեմա 5. Միջազգային էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն

1. **Միջմշակութային առանձնահատկություններ**
    - Տարբեր մշակույթների հաղորդակցական նորմեր
    - Միջազգային միջավայրում վարքագծի կանոններ
2. **Միջազգային բիզնես-արարողակարգ**
    - Պաշտոնական այցերի, ընդունելությունների, ընդունելությունների էթիկա
    - Նվերների, այցեքարտերի, դիմավորելու և ճանապարհելու ձևեր

Թեմա 6. Էթիկական խնդիրներ և գործնական իրավիճակներ

1. **Էթիկական դիլեմաներ մասնագիտական ոլորտում**
    - Կոռուպցիոն ռիսկեր
    - Հակասությունների լուծման մեթոդաբանություն
2. **Գործնական սեմինարներ և սիմուլյացիաներ**
    - Ռոլային խաղեր
    - Իրատեսական իրավիճակների վերլուծություն

3.1.10.Կայուն զարգացման հիմունքներ

13/Բ20 (5 Կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ընդհանուր պատկերացում տալ կայուն զարգացման մասին և նկարագրել կայուն զարգացման հիմնական սկզբունքները: Այստեղ քննարկվում են նաև կայունություն ապահովելու և կայուն զարգացման գործընթացներին խոչընդոտող գործոնները:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Մեկնաբանել Կայունություն զարգացում հասկացությունը՝ որպես քաղաքականության, բիզնեսի և հասարակության գլոբալ զարգացման կարևոր ուղենիշ, մարդկային զարգացման տեսլականը ապագայում:

- Գաղափար կազմել կայուն զարգացման բոլոր ոլորտների վերաբերյալ՝ մասնավոր և հանրային, ինչպես նաև կենսապայմաններին, հանդուրժողականությանը, մարդու իրավունքներին ու կրթությանը:

-Լուսաբանել Կայուն զբոսաշրջության հիմնական սկզբունքները, ցանկացած տիպի զբոսաշրջության սոցիալական, բնապահպանական և տնտեսական ասպեկտները:

- Գնահատել զբոսաշրջության դրական և բացասական ազդեցությունները՝ որպես եկամտի աղբյուր, որը նպաստում է ներդրումների ներհոսքին և ենթակառուցվածքների զարգացմանը, մշակութային ժառանգության պահպանմանը և զարգացմանը:

Կկարողանա՝

Հիմնավորել պատմականորեն ձևավորված «կայուն զարգացում» հասկացությունը է «կայունություն» հասկացության հետ միաժամանակ՝ կապելով բնապահպանական շարժումը համերաշխությունը և արդյունքների հավասար բաշխումը:

Կտիրապետի՝

Կտիրապետել Շրջակա միջավայր վերաբերյալ ՄԱԿ-ի ծրագիրին (ՄԱԿ ՇՄԾ), որտեղ կայուն զարգացումը սահմանում է, որպես մի զարգացում, որն ապահովում է բնական պաշարների և շրջակա միջավայրի օգտագործումն այսօր՝ վտանգի տակ չդնելով ապագայում դրանց օգտագործման հնարավորությունը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Մարդկային զարգացման նոր հայեցակարգի անհրաժեշտությունը:

Թեմա 2. Գլոբալ համագործակցությունը կայուն զարգացման ոլորտում՝ ՄԱԿ:

Թեմա 3. Մարդկային զարգացումը և ժամանակակից գլոբալ հիմնախնդիրները:

Թեմա 4. Կայուն զարգացման հայեցակարգի էկոլոգիական ասպեկտը:

Թեմա 5. Բնական ռեսուրսներով մարդկության ապահովվածությունը և ռացիոնալ բնօգտագործումը, որպես մարդկության զարգացման պայման:

Թեմա 6. Երկրի կլիմայի փոփոխությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա:

Թեմա 7. Կայուն զարգացման հայեցակարգի սոցիալ-տնտեսական ասպեկտը:

Թեմա 8. Կայուն զարգացման հայեցակարգի կրթական և հոգևոր-մշակութային ասպեկտները:

Թեմա 9.Կայուն զարգացման հայեցակարգի քաղաքական և ժողովրդագրական ասպեկտները:

3.1.11. <u>Տուրիզմի հիմունքներ</u>

<u>13/Բ49 Տուրիզմի հիմունքներ (5 Կրեդիտ)</u>

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ տուրիզմի ոլորտի վերաբերյալ համապարփակ գիտելիքներ՝ որպես սոցիալ-տնտեսական համակարգի, ծառայությունների շուկայի և մշակութային փոխազդեցությունների դաշտ: Ուսանողները կծանոթանան տուրիզմի պատմական զարգացումների, տեսակների, կազմակերպման սկզբունքների, կառավարման և մարքեթինգային առանձնահատկությունների հետ՝ ձևավորելով տեսական և գործնական հմտություններ ոլորտում արդյունավետ գործունեության համար:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը.</u>

Կիմանա՝

- տուրիզմի էությունը, նպատակը և հիմնական գործառույթները,
- տուրիզմի տեսակները և դրանց առանձնահատկությունները,
- տուրիստական շուկայի կառուցվածքը և գործունեության հիմնական սկզբունքները,
- զբոսաշրջային կազմակերպությունների և կառույցների դերակատարությունը,
- տուրիզմի իրավական և էթիկական հիմքերը,
- կայուն (sustainable) տուրիզմի գաղափարներն ու կիրառությունները:

Կկարողանա՝

- վերլուծել տուրիստական շուկայի պահանջարկն ու առաջարկը,
- մշակել և ներկայացնել տուրիստական արտադրանք կամ երթուղի,
- կիրառել տուրիզմի կառավարման և մարքեթինգի հիմնական մեթոդները,
- կազմակերպել տուրիստական ծառայությունների մատուցման գործընթացը,
- գնահատել տուրիզմի սոցիալ-տնտեսական ազդեցությունը տարածաշրջանի զարգացման վրա:

Կտիրապետի՝

- տուրիստական գործունեության կազմակերպման և պլանավորման գործիքներին,
- զբոսաշրջային տեղեկատվության հավաքման և մշակման մեթոդներին,
- մասնագիտական հաղորդակցության և սպասարկման մշակույթին,
- թիմային աշխատանքի և հաճախորդների հետ արդյունավետ շփման հմտություններին:

Բովանդակությունը.

1. Տուրիստիկան որպես համալիր գիտություն տուրիզմի մասին:
2. Տուրիստիկայի հայեցակարգը:
3. Տուրիստիկայի իմացաբանական հիմունքները:
4. Տուրիստիկայի առանցքային հասկացությունները:

4.1.Տուրիզմ:
4.2.Տուրիստ:
4.3.Տուրօպերատոր:
4.4.Տուրիստական ինդուստրիա:
4.5. Տուրիստական շրջանառություն:
4.6. Տուրիստական պահանջմունքներ:
4.7. Տուրիստական ծառայություններ:

4.8. Տուրիստական արտադրանք:
4.9. Տուրիստական շուկա:
4.9. Տուրիստական պահանջարկ:

5. Տուրիստիկա հասկացության քանկական տիպաբանությունը:
6. Տուրիստիկայի գործառույթները:
7. Տուրիզմը որպես ռեկրեացիայի միջոց:
8. Սոցիալական մոտեցում տուրիստիկային:

3.1.12. Տուրիզմի հատուկ տեսակներ

13/Բ50 Տուրիզմի հատուկ տեսակներ (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, սպրուգարք

Նպատակը.

1. Ուսանողներին ծանոթացնել տուրիզմի հատուկ տեսակների հետ:
2. Ներկայացնել տուրիզմ հասկացությունը, տուրիզմի տեսակները:
3. Խթանել ուսանողների տուրիզմի մասին գիտելիքների ավելացմանը և նորարարական գաղափարների զարգացմանը:
4. Օժտել տուրիզմի նոր տեսակների զարգացման հմտություններով:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

- ✓ Տուրիզմ հասկացությունը:
- ✓ Տուրիզմի զարգացման պատմությունը:
- ✓ Տուրիզմի դերը տնտեսության մեջ:
- ✓ Տուրինդուստրիա հասկացությունը:
- ✓ Տուրիզմի դրական և բացասական կողմերը:
- ✓ Տուրիզմի բացասական ազդեցությունը բնական միջավայրի վրա:
- ✓ Տուրիզմի տեսակները:
- ✓ Տուրիզմի զարգացման հեռանկարները:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա՝

/Կարողություն/

- ✓ Ներկայացնել տուրիզմ հասկացությունը:
- ✓ Բացատրել տուրինդուստրիա հասկացությունը, ներկայացնել տուրիզմի ժողովրդականացման ուղիները:
- ✓ Ներկայացնել տուրիզմի տեսակները:
- ✓ Ներկայացնել տուրիզմի զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի՝

/Հմտություն/

- ✓ Տուրիզմի տեսակների ներկայացման հմտություններին:
- ✓ Բացատրել Գեղարքունիքի մարզում դրանց զարգացման հեռանկարները:

Բովանդակությունը.

Թեմա 1.Ներածություն: Տուրիզմ հասկացությունը: **Թեմա 2.** Տուրիզմի զարգացման պատմությունը: **Թեմա 3.** Տուրինդուստրիա: **Թեմա 4.** Տուրիզմի զարգացման տնտեսական գործոնները: **Թեմա 5.** Տուրիզմի դերը ժամանակակից տնտեսության մեջ տուրիզմի վտանգները: **Թեմա 6.** Տուրիզմի ժողովրդականացումը: **Թեմա 7.** Տուրիզմի զարգացման հիմնախնդիրները: **Թեմա 8.** Տուրիզմի ազդեցությունը բնական միջավայրի վրա: **Թեմա 9.** Տուրիզմի հիմնական տեսակները: **Թեմա 10.** Ռեկրեացիոն տուրիզմ: **Թեմա 11.**Կրոնական տուրիզմ: **Թեմա 12.** Բուժա-վերականգնողական տուրիզմ: **Թեմա 13.** Ագրոտուրիզմ: **Թեմա 14.** Էկոլոգիական տուրիզմ: **Թեմա 15.** Սպորտային տուրիզմ: **Թեմա 16.** Էքստրեմալ տուրիզմ: **Թեմա 17.** Ֆոտոտուրիզմ: **Թեմա 18.** Ընտանեկան տուրիզմը որպես ազատ ժամանակի կազմակերպման ձև: **Թեմա 19.** Տուրիզմի զարգացման հեռանկարները:

3.1.12. Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ռեսուրսներ

13/Բ38 Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ռեսուրսներ (3 Կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ համալիր պատկերացում Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ռեսուրսների բազմազանության, տարածքային բաշխվածության և դրանց արդյունավետ օգտագործման հնարավորությունների մասին: Ուսանողները պետք է հասկանան բնական, պատմամշակութային, սոցիալ-տնտեսական և հոգևոր ռեսուրսների փոխկապակցվածությունը և դրանց դերը երկրի զբոսաշրջային ներուժի ձևավորման գործում:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- «Զբոսաշրջային ռեսուրսներ» հասկացությունը, դասակարգումը:
- Բնական և մարդածին զբոսաշրջային ռեսուրսները:
- ՀՀ զբոսաշրջային ռեսուրսները:
- ՀՀ նյութական և ոչ նյութական զբոսաշրջային ռեսուրսները:
- ՀՀ տնտեսական և սոցիալ-մշակութային զբոսաշրջային ռեսուրսները:
- Զբոսաշրջային ենթակառուցվածքներն ու ծառայությունները:
- ՀՀ զբոսաշրջային ռեսուրսների զարգացումը և միջազգային ինտեգրացիան:

Կկարողանա՝

- Վերլուծել և դասակարգել Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսները ըստ բնույթի և նշանակության,
- Գնահատել տարածաշրջանների զբոսաշրջային ներուժը և զարգացման հնարավոր ուղղությունները,
- Մշակել զբոսաշրջային երթուղիներ՝ հիմնվելով ռեսուրսային բազայի վրա,
- Կիրառել գիտելիքները զբոսաշրջային ծրագրերի նախագծման և տարածքային պլանավորման գործընթացներում,

- Ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները մասնագիտական և հանրային լսարանների առաջ:

Կտիրապետի՝

- ՀՀ զբոսաշրջային ռեսուրսների վերլուծության և քարտեզագրման հմտություններին,
- Տարածքային տվյալների գնահատման և համակարգային վերլուծության մեթոդներին,
- Տեղեկատվական աղբյուրների (քարտեզներ, վիճակագրական տվյալներ, դաշտային ուսումնասիրություններ) արդյունավետ օգտագործման կարողություններին,
- Զբոսաշրջային պոտենցիալի ներկայացման և մարքեթինգային վերլուծության գործիքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Զբոսաշրջային ռեսուրսների տեսությունը և դասակարգումը: **Թեմա 2.** Հայաստանի բնական ռեսուրսները որպես զբոսաշրջային ներուժ: **Թեմա 3.** Լանդշաֆտային և կլիմայական ռեսուրսներ: **Թեմա 4.** Հանքային ջրեր և առողջարանային ռեսուրսներ: **Թեմա 5.** Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը և հուշարձանային ֆոնդը: **Թեմա 6.** Քաղաքային և գյուղական միջավայրի զբոսաշրջային գրավչությունները: **Թեմա 7.** Ազգային պարկեր, արգելոցներ և էկոտուրիզմի հնարավորություններ: **Թեմա 8.** Զբոսաշրջային ենթակառուցվածքներ և տրանսպորտային ռեսուրսներ: **Թեմա 9.** Տարածքային զբոսաշրջային համալիրների ձևավորում (Տավուշ, Գեղարքունիք, Վայոց ձոր, Սյունիք և այլն): **Թեմա 10.** Հայաստանի հոգևոր և մշակութային տուրիզմի ռեսուրսներ: **Թեմա 11.** Ժամանակակից տուրիզմի նոր ուղղություններ Հայաստանում (գաստրո-, էթնո-, էկո-, արկածային տուրիզմ): **Թեմա 12.** Զբոսաշրջային ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման հիմնախնդիրներ: **Թեմա 13.** ՀՀ զբոսաշրջային քաղաքականությունը և ռազմավարական ծրագրերը: **Թեմա 14.** Զբոսաշրջային ռեսուրսների մարքեթինգ և բրենդավորում: **Թեմա 15.** Եզրափակիչ քննարկում. Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսների զարգացման հեռանկարները:

3.1.14. Հյուրընկալության հիմունքներ

13/Բ31 Հյուրընկալության հիմունքներ (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

1. Ուսանողներին ծանոթացնել հյուրընկալության հիմունքներին:
2. Ներկայացնել «հյուրընկալություն» հասկացությունը, հյուրընկալության զարգացման պատմությունը:
3. Խթանել հաճախորդների սպասարկման մասին գիտելիքների ավելացմանը և նորարարական գաղափարների զարգացմանը:
4. Օժտել հյուրընկալության ոլորտի զարգացման հմտություններով:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

1. «Հյուրընկալություն» հասկացությունը:
2. Հյուրընկալության զարգացման պատմությունը:
3. Հյուրընկալության զարգացման պատմությունը: Հյուրընկալության ինդուստրիա

4. Ի՞նչ է հաճախորդի սպասարկումը:
5. Մարդը հյուրընկալության ոլորտում:
6. Հաճախորդների սպասարկման կարևորությունը զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում:
7. Հաճախորդների սպասարկման որակի չափանիշները հյուրընկալության ոլորտում:
8. Սպասարկման որակի ազդեցությունը հաճախորդի վարքագծի վրա:
9. Սպասարկման փուլերը:
10. Հյուրընկալության ոլորտի կառուցվածքը:
11. Հյուրատանը ներկայացվող պահանջները:
12. Հյուրանոցին ներկայացվող պահանջները:
13. Հյուրանոցի կառուցվածքը:
14. Հյուրանոցների տեսակները և դասակարգումը:
15. Ռեստորանային արտադրության յուրահատկությունը:
16. Ռեստորանների դասակարգումը:
17. Ռեստորանների տեսակները:
18. Տրանսպորտային ծառայությունները հյուրընկալության ոլորտում:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա՝

/Կարողություն/

Ներկայացնել սպասարկման ոլորտի առանձնահատկությունները:

Բացատրել հյուրատնային և հյուրանոցային ոլորտների առանձնահակտությունները:

Ներկայացնել հյուրընկալության տեսակները:

Ներկայացնել հյուրընկալության զարգացման հեռանկարները ՀՀ-ում:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի՝

/Հմտություն/

Հյուրաընկալության ոլորտների ներկայացման հմտություններին:

Բացատրել ՀՀ-ում հյուրանոցային և հյուրատնային բիզնեսի զարգացման հեռանկարները:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: «Հյուրընկալություն» հասկացությունը: **Թեմա 2.** Հյուրընկալության զարգացման պատմությունը: Հյուրընկալության ինդուստրիա: **Թեմա 3.** Ի՞նչ է հաճախորդի սպասարկումը: **Թեմա 4.** Մարդը հյուրընկալության ոլորտում: **Թեմա 5.** Հաճախորդների սպասարկման կարևորությունը զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտում: **Թեմա 6.** Հաճախորդների սպասարկման որակի չափանիշները հյուրընկալության ոլորտում: **Թեմա 7.** Սպասարկման որակի ազդեցությունը հաճախորդի վարքագծի վրա**Թեմա 8.** Սպասարկման

փուլերը: **Թեմա 9.** Հյուրընկալության ոլորտի կառուցվածքը: **Թեմա 10.** Հյուրատանը ներկայացվող պահանջները: **Թեմա 11.** Հյուրանոցին ներկայացվող պահանջները: **Թեմա 12.** Հյուրանոցի կառուցվածքը: **Թեմա 13.** Հյուրանոցների տեսակները և դասակարգումը: **Թեմա 14.** Ռեստորանային արտադրության յուրահատկությունը: **Թեմա 15.** Ռեստորանների դասակարգումը: **Թեմա 16.** Ռեստորանների տեսակները: **Թեմա 17.** Տրանսպորտային ծառայությունները հյուրընկալության ոլորտում: **Թեմա 18.** Հյուրընկալության զարգացման հեռանկարները ՀՀ-ում: **Թեմա 19.** Հյուրընկալության զարգացման հեռանկարները Գեղարքունիքի մարզում: **Թեմա 20.** Մարքեթինգային ռազմավարության մշակում:

3.1.15. Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն

13/Բ28 Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն (8 Կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

1. Ուսանողներին ծանոթացնել Հայկական լեռնաշխարհի և ՀՀ մակերևույթի ձևածագումնաբանական տարրերին և բնակլիմայական պայմաններին:
2. Հնարավորություն ստեղծել գտնելու տարածքի բնակլիմայական պայմանների և ռելիեֆի, ջրագրական ցանցի, երկրաբանական կառուցվածքի միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը:
3. Խթանել ուսանողների ՀՀ տարածքը ճանաչելու հմտություններին:
4. Օժտել քարտեզին տիրապետելու կարողություններով:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Կիմանա Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ընդհանուր բնութագիրը:
- Հայկական լեռնաշխարհի և ՀՀ կլիման ձևավորող գործոնները:
- Վերլուծել ՀՀ բնական ներուժը:
- Բացատրել ՀՀ տարածքի երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոների տեղաբաշխումը, կլիմայի, ջրային պաշարների, հողաբուսական ծածկույթի, կենդանական աշխարհի առանձնահատկությունները և առանձին տարածաշրջանների աշխարհագրական ընդհանուր բնութագրերը:
- Ցույց տալ Հայկական լեռնաշխարհի ռելիեֆը, ջրագրությունը քարտեզի վրա:
- Վերլուծել ջրագրական ցանցի առանձնահատկությունները:
- Բացահայտել հողային ծածկույթի, բուսական ու կենդանական աշխարհի առանձնահատկությունները:
- Ներկայացնել վերընթաց լանդշաֆտային գոտիները:

Կկարողանա՝

- Կկարողանա ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարել, բացահայտել ֆիզիկաաշխարհագրական գործոնների փոխադարձ կապը, ներծին և արտաքին պրոցեսների արդյունքում ստեղծված ռելիեֆի ձևերը:
- Տարբերել ծալքավոր, ծալքաբեկորավոր, հրաբխային կառույցները, միջլեռնային գոգավորությունները, ընդարձակ սարավանդները, դրանց առաջացման նախադրյալները:
- Կկարողանա սովորածը ցույց տալ Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ֆիզիկական քարտեզների վրա:
- Ուրվագծային քարտեզների վրա կանցկացնի Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ռելիեֆը, ջրագրական ցանցը, վերընթաց գոտիները, հողերը, բուսական ու կենդանական աշխարհը:

Կտիրապետի՝

- Հայաստանի բնական պայմաններին, նրանց առանձնահատկություններին:
- Կճանաչի իրեն շրջապատող աշխարհը:

- Կտիրապետի ուրվագծային քարտեզների հետ աշխատելու հմտություններին:

Բովանդակությունը.
Թեմա 1. Հայկական լեռնաշխարհի ընդհանուր բնութագիրը: **Թեմա** 2.Հայկական լեռնաշխարհի ռելիեֆը և երկրաբանությունը: **Թեմա** 3. Հայկական լեռնաշխարհի օգտակար հանածոները: **Թեմա** 4. Հայկական լեռնաշխարհի կլիման, ջրագրությունը: **Թեմա** 5. Հայկական լեռնաշխարհի հողաբուսական ծածկը և կենդանական աշխարհը: **Թեմա** 6. Հայկական լեռնաշխարհի վերընթաց լանդշաֆտային գոտիները: **Թեմա** 7. ՀՀ ընդհանուր բնութագիրը: **Թեմա** 8. ՀՀ ռելիեֆի ընդհանուր բնութագիրը: **Թեմա** 9. ՀՀ օգտակար հանածոները: **Թեմա** 10. ՀՀ կլիման, ջրագրությունը: **Թեմա** 11. ՀՀ հողաբուսական ծածկը և կենդանական աշխարհը: **Թեմա** 12. ՀՀ վերընթաց լանդշաֆտային գոտիները:

13/Բ29 Հայաստանի ֆիզիկական աշխարհագրություն (1 կրեդիտ)

Կուրսային աշխատանքի կատարման արդյունքում ուսանողը.
Գիտենա- Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության առանձին բաղադրիչների տարածական բաշխման օրինաչափությունները:
Կարողանա- բացահայտել առանձին բաղադրիչների փոխկապակցված օրինաչափությունները:
Տիրապետի- փոխկապակցված օրինաչափությունների հնարավոր լուծման միջոցներին:

Կուրսային աշխատանքի թեմաներ

1. Արարատյան ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
2. Շիրակի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
3. Աշոցքի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
4. Արագածի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
5. Լոռի-Փամբակ ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
6. Աղստև-Տավուշի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
7. Ծաղկունյաց ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
8. Սևանի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
9. Գեղամա-Վարդենիս ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
10. Վայքի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
11. Սյունիքի (Ղարաբաղի) ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
12. Զանգեզուրի ֆիզիկաաշխարհագրական շրջանի ընդհանուր բնութագիրը:
13. Լեռնատափաստանային լանդշաֆտային գոտու ընդհանուր բնութագիրը:
14. Սևանի հիմնախնդիրը:

3.1.16. Հայկական սփյուռքի աշխարհագրություն

13/Բ27 Հայկական սփյուռքի աշխարհագրություն (8 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (70 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ հայ սփյուռքի ձևավորման պատմության, ներկայիս տեղաբաշխման և գործունեության վերաբերյալ: Ուսումնասիրել արտագաղթերը՝ որպես հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասնիկ, դրանց դրդապատճառները, ժամանակաշրջանները: Ցույց տալ սփյուռքում գործող հայ ազգային հաստատությունների, կազմակերպությունների գործունեությունը: Ներկայացնել սփյուռքի

հայկական հուշարձանները և դրանց պահպանման հիմնախնդիրները: Բացահայտել հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման կարևորությունը:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

- ✓ սփյուռքի ձևավորման պատմությունը,
- ✓ խոշոր գաղութներում հայապահպանական գործընթացների ձևերը,
- ✓ հայ մշակույթի և ազգային ինքնուրույնության պահպանումը,
- ✓ սփյուռքի հայկական հուշարձանները և դրանց պահպանման հիմնախնդիրները,
- ✓ սփյուռք-հայրենիք կապը:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա՝

/Կարողություն/

- ✓ փաստական նյութեր հավաքել հայ գաղութների վերաբերյալ,
- ✓ ցույց տալ դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները,
- ✓ ներկայացնել սփյուռքի հայկական հուշարձանները,
- ✓ իրականացնել հետազոտություն սփյուռքահայերի շրջանում, ներկայացնել հետազոտության արդյունքները:
- ✓ Կկարողանա ճիշտ գնահատել սփյուռք-հայրենիք կապի ամրապնդումը:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի՝

/Հմտություն/

սփյուռքի վերաբերյալ վիճակագրական նյութերի մշակման, հացումների անցկացման, վերլուծման հմտություններին:

Բովանդակություն

Ներածություն: Հայկական սփյուռքի ձևավորման նախադրյալները: Սփյուռքահայ համայնքների գործունեությունը: Սփյուռքահայ համայնքների կազմակերպման կառուցվածքը: Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Սփյուռքի հայ համայնքները՝ Արևմտյան համայնք: Հայկական համայնքները Հյուսիսային Եվրոպայի երկրներում: Հայկական համայնքները Արևմտյան Եվրոպայի երկրներում: Հայկական համայնքները Արևելյան Եվրոպայի երկրներում: Հայկական համայնքները: Հարավային Եվրոպայի երկրներում: Հայկական համայնքները Հյուսիսային Ամերիկայում: Կանադայի հայկական համայնքը: ԱՄՆ-ի հայկական համայնքը: Հայկական համայնքները Լատինական Ամերիկայում (Մեքսիկա, Կուբա, Վենեսուելա, Չիլի, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ): Հայկական համայնքները նախկին ԽՍՀՄ երկրներում՝ Հայկական համայնքները Ռուսաստանի Դաշնությունում: Վրաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բելեռուսի, Մոլդովայի հայկական համայնքերը: Հայկական համայնքները Կենտրոնական Ասիայում:
Արևելյան համայնք: Հայկական համայնքները Թուրքիայում, Իրանում, Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Հորդանանում, Իսրայելում, ԱՄԷ-ում, Քաթարում, Քուվեյթում: Հայկական համայնքն Արևելյան, Հարավային, հարավ-Արևելյան Ասիայում: Ճապոնիա, Չինաստան: Հնդկաստանի, Թաիլանդի, Ինդոնեզիայի, Սինգապուրի հայկական համայնքները: Հայկական համայնքը

Աֆրիկական երկրներում: Եգիպտոսի, Եթովպիայի, ՀԱՀ-ի, Սուդանի, ԿԱՀ-ի հայկական համայնքները: Հայկական համայնքն Ավստրալիայում և Նոր Զելանդիայում:

3.1.17. Տուրիզմի սոցիոլոգիա

13/Բ37 Տուրիզմի սոցիոլոգիա (5 Կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին տուրիզմի սոցիոլոգիական ուսումնասիրության հիմունքներին, վերլուծել տուրիզմը որպես սոցիալական երևույթ, հասկանալ դրա ազդեցությունը հասարակության, մշակույթի և միջանձնային հարաբերությունների վրա, ինչպես նաև ձևավորել քննադատական մտածողություն՝ տուրիզմի սոցիալ-մշակութային հետևանքների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- Տուրիզմի սոցիոլոգիայի տեսական հիմքերը և զարգացումը:
- Տուրիզմի դերը ժամանակակից հասարակության մեջ:
- Սոցիալական դինամիկան՝ կապված զբոսաշրջային շարժերի, մշակույթների փոխազդեցության և գլոբալացման հետ:
- Զբոսաշրջիկի և հյուրընկալող համայնքի հարաբերությունների սոցիոլոգիական առանձնահատկությունները:

Կկարողանա՝

- Վերլուծել զբոսաշրջային երևույթները սոցիոլոգիական տեսանկյունից:
- Տարբերակել և գնահատել տուրիզմի ազդեցությունը սոցիալական կառուցվածքների, մշակութային ինքնության և համայնքային կյանքի վրա:
- Կիրառել սոցիոլոգիական մոտեցումներ՝ տուրիզմի հետ կապված պրակտիկ խնդիրների ուսումնասիրման համար:

Կտիրապետի՝

- Սոցիոլոգիական վերլուծության հմտություններին զբոսաշրջության ոլորտում:
- Տվյալների հավաքման և վերլուծության մեթոդներին՝ սոցիոլոգիական հետազոտությունների շրջանակում:
- Քննական և համակարգային մտածողությանը՝ տուրիզմի սոցիալական ազդեցությունների գնահատման հարցում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Տուրիզմի սոցիոլոգիայի ներածություն: **Թեմա** 2. Տուրիզմը որպես սոցիալական ինստիտուտ: **Թեմա** 3. Մշակույթ և տուրիզմ: **Թեմա** 4. Տուրիզմ և գլոբալացում: **Թեմա** 5. Զբոսաշրջության սոցիալական ազդեցությունները: **Թեմա** 6. Զբոսաշրջիկի և հյուրընկալողի հարաբերությունները: **Թեմա** 7.Զբոսաշրջության սեռային (gender) և սոցիալ-տնտեսական ասպեկտները: **Թեմա** 8.Զբոսաշրջության սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ: **Թեմա** 9. Քաղաքականություն, պլանավորում և հասարակության մասնակցություն տուրիզմում: **Թեմա** 10. Տուրիզմի ապագան սոցիոլոգիական տեսանկյունից:

3.1.18. Զբոսավարության հիմունքներ

13/Բ12 Զբոսավարության հիմունքներ (4 Կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, սպրուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ զբոսավարի մասնագիտական գործունեության հիմունքների վերաբերյալ համապարփակ գիտելիքներ, ձևավորել զբոսաշրջային խմբերի ղեկավարում, ներկայացում, հաղորդակցություն և ծառայությունների կազմակերպում իրականացնելու համար անհրաժեշտ հմտություններ: Դասընթացը նպատակ ունի զարգացնել զբոսավարի մշակութային, հաղորդակցական, ծառայողական և գնահատողական կարողությունները՝ ապահովելով զբոսաշրջիկների բարձրակարգ սպասարկում և արդյունավետ աշխատանքային վարքագիծ:

Դասընթացի ավարտին ուսանողը.

Կիմանա՝

- զբոսավարության էությունը, գործառույթները և մասնագիտական պահանջները,
- զբոսավարի դերակատարությունն ու պատասխանատվությունը զբոսաշրջային գործընթացում,
- էքսկուրսիայի կառուցվածքը, տեսակները և կազմակերպման սկզբունքները,
- տեղեկատվության ընտրության, ներկայացման և մեկնաբանման մեթոդները,
- էթիկայի, հաղորդակցման և վարքագծի կանոնները զբոսավարի աշխատանքի ընթացքում,
- Հայաստանի մշակութային, պատմական և զբոսաշրջային օբյեկտների ներկայացման սկզբունքները:

Կկարողանա՝

- կազմել ու ներկայացնել զբոսաշրջային էքսկուրսիայի սցենար,
- արդյունավետ հաղորդակցվել զբոսաշրջիկների հետ տարբեր իրավիճակներում,
- ղեկավարել զբոսաշրջային խումբն ու ապահովել երթուղու անվտանգ անցկացում,
- օգտագործել ներկայացման տարբեր մեթոդներ՝ հստակ, հետաքրքիր և ճշգրիտ տեղեկատվություն փոխանցելու համար,
- լուծել կոմունիկացիոն, կազմակերպչական և անհատական խնդիրներ,
- իրականացնել զբոսավարական ծառայությունների որակի գնահատում:

Կտիրապետի՝

- էքսկուրսիայի կառուցման, պլանավորման և կազմակերպման գործնական հմտություններին,
- խոսքի տեխնիկային, սահուն ներկայացման և հրապարակային խոսքի կանոններին,
- զբոսաշրջիկների սպասարկման, առաջնորդման և խմբի կառավարման տեխնիկաներին,
- ժամանակի կառավարման, հուզմունքի վերահսկման և դրական հաղորդակցության միջոցներին,
- տեղեկատվական ռեսուրսների օգտագործման և զբոսավարական քարտեզների, նյութերի կազմման գործիքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Զբոսավարության հասկացությունը, նպատակները և նշանակությունը: **Թեմա 2.** Զբոսավարի մասնագիտական դերակատարությունն ու պահանջները: **Թեմա 3.** Զբոսավարության պատմություն և զարգացման փուլեր: **Թեմա 4.** Էքսկուրսիան որպես զբոսավարական գործունեության հիմնական ձև: **Թեմա 5.** Էքսկուրսիայի տեսակները և դրանց առանձնահատկությունները: **Թեմա 6.** Էքսկուրսիայի սցենարի կազմման մեթոդներ: **Թեմա 7.** Զբոսավարի խոսքի տեխնիկա, ներկայացման ձևեր և միջոցներ: **Թեմա 8.** Հաղորդակցություն զբոսաշրջային խմբի հետ, միջմշակութային հաղորդակցություն: **Թեմա 9.** Խմբի կառավարում և կազմակերպչական գործընթացներ: **Թեմա 10.** Անվտանգության կանոններ և արտակարգ իրավիճակների կառավարում: **Թեմա 11.** Զբոսավարի էթիկա և մասնագիտական վարքագիծ: **Թեմա 12.** Տեղեկատվության աղբյուրներ և դրանց ճիշտ օգտագործում: **Թեմա 13.** Հայաստանի պատմական-մշակութային տեսարժան վայրեր և դրանց ներկայացման սկզբունքներ: **Թեմա 14.** Զբոսավարական ծառայությունների որակի ապահովում:

3.1.19. Ագրոտուրիզմ

13/Բ1 Ագրոտուրիզմ (5 Կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, սպրուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել մասնագիտական գիտելիքներ և հմտություններ գյուղատնտեսության և զբոսաշրջության համադրման ոլորտում՝ պատրաստելով մասնագետներ, որոնք կկարողանան զարգացնել ագրոտուրիստական ծառայություններ, իրականացնել գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական առաջընթացի ծրագրեր և նպաստել կայուն զարգացման նպատակների իրականացմանը: Ուսանողը կծանոթանա ագրոտուրիզմի տեսական հիմունքներին, կազմակերպչական առանձնահատկություններին և կիրառական մոտեցումներին՝ ստանալով գիտելիք ինչպես միջազգային փորձից, այնպես էլ տեղական իրականությունից:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

- ագրոտուրիզմի էությունը, զարգացման պատմական և տեսական հիմունքները,
- գյուղատնտեսության և զբոսաշրջության փոխազդեցության հիմնական ուղղությունները,
- ագրոտուրիստական բիզնեսի կազմակերպման սկզբունքները, իրավական և տնտեսական կարգավորումները,
- կայուն գյուղական զարգացման և համայնքային զարգացման խնդիրները,
- միջազգային փորձը և տեղական առանձնահատկությունները ագրոտուրիզմի ոլորտում:

Կկարողանա՝

- վերլուծել և գնահատել ագրոտուրիզմի զարգացման ներուժը կոնկրետ տարածաշրջանում,
- մշակել ագրոտուրիստական ծառայությունների փաթեթներ,
- կազմակերպել և իրականացնել զբոսաշրջային միջոցառումներ գյուղատնտեսական միջավայրում,
- կիրառել մարքեթինգային գործիքներ ագրոտուրիստական արտադրանքի ու ծառայությունների առաջմղման համար,
- համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների հետ ագրոտուրիզմի զարգացման նպատակով:

Կտիրապետի՝

- ագրոտուրիստական ծրագրերի մշակման և կառավարման տեխնոլոգիաներին,
- այցելուների սպասարկման և որակի ապահովման ժամանակակից մեթոդներին,
- գյուղատնտեսական ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային միջավայր ձևավորելու հմտություններին,
- միջազգային ստանդարտներին համապատասխան ագրոտուրիստական ծառայությունների մատուցման սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Ագրոտուրիզմի էությունը և նշանակությունը: **Թեմա 2.** Գյուղատնտեսության և զբոսաշրջության փոխկապակցվածությունը: **Թեմա 3.** Ագրոտուրիզմի կազմակերպման հիմնական մոդելները: **Թեմա 4.** Ագրոտուրիզմի տնտեսական և իրավական հիմունքները: **Թեմա 5.** Ագրոտուրիզմի մարքեթինգ և բրենդավորում: **Թեմա 6**. Կայուն գյուղական զարգացում և համայնքային ներգրավվածություն: **Թեմա 7.** Միջազգային փորձ և տեղական առանձնահատկություններ: **Թեմա 8.** Ուսանողների նախագծային աշխատանքների ներկայացում:

3.1.20. Հայաստանի տնտեսական աշխարհագրություն

13/Բ63 Հայաստանի տնտեսական աշխարհագրություն (6 Կրեդիտ)

Շաբաթական 8 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տեսական ու գործնական գիտելիքներ տալ Հայաստանի Հանրապետության բնական պայմանների, ռեսուրսների, բնակչության, տնտեսության / արտադրական և ոչ արտադրական ոլորտների / տարածքային կազմակերպման և կառավարման վերաբերյալ:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝ ՀՀ բնական պայմանների և ռեսուրսների բովանդակությունը:

Կկարողանա՝ վերլուծել և գնահատել տնտեսության տարածքային կազմակերպման նախադրյալները և կանխատեսել նպատակային ուղիները:

Կտիրապետի՝ բացահայտել հանրապետության տնտեսության զարգացման նպատակային ուղիները:

Բովանդակությունը.

ԲԱԺԻՆ 1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսաաշխարհագրական ընդհանուր բնութագիրը: **ԲԱԺԻՆ 2.** Պատմաաշխարհագրական ակնարկ: **ԲԱԺԻՆ 3.** Զարգացման բնական նախադրյալները: Աշխարհագրական դիրքը, սահմանները, կլիման, կլիմայական ռեսուրսները, հողային, ջրային, բուսական ռեսուրսները, ռեկրացիոն ռեսուրսները և բնապահպանության հիմնախնդիրները: **ԲԱԺԻՆ 4.** Բնակչությունը: **ԲԱԺԻՆ 5.** Տնտեսությունը: **ԲԱԺԻՆ 6.** Տրանսպորտ: **ԲԱԺԻՆ 7.** Սպասարկման ոլորտ: **ԲԱԺԻՆ 8.** Տնտեսության տարածքային կառուցվածքը, զարգացման հեռանկարները և հիմնախնդիրները:

3.1.21. Գեոէկոլոգիայի հիմունքներ

13/Բ6 Գեոէկոլոգիայի հիմունքներ (7 Կրեդիտ)

Շաբաթական 8 ժամ (60 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել երկրագնդի գեոէկոլոգիական իրավիճակը վերլուծելու տեսական գիտելիքներ / աշխարհագրական թաղանթի ոլորտների/, գեոէկոլոգիական մոնիթորինգի և փորձաքննության անցկացման կարողություններ:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը</u>

Կիմանա՝ գեոէկոլոգիական հիմնական հասկացությունները, օրենքները:
Կկարողանա՝ գաղափար կազմել Երկրագնդի գեոէկոլոգիական իրավիճակը ձևավորող բնական և հասարակական գործոնների մասին:
Կտիրապետի՝ աշխարհագրական թաղանթի ոլորտների գեոէկոլոգիական հիմնախնդիրների լուծման ուղիներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գեոէկոլոգիայի հիմնական հասկացությունները: **Թեմա 2.** Էկոսֆերայի և հասարակության փոխկապվածությունը, էկոսֆերայի բնական գործոնները, գեոսֆերան և էկոսֆերան: **Թեմա 2.** Երկիրը որպես մոլորակ, գեոէկոլոգիական հետևանքները: **Թեմա 3.** Էկոսֆերայի էներգետիկ և նյութական առանձնակատկությունները, էկոսֆերայի ջերմային բալանսը: **Թեմա 4.** Նյութերի գլոբալ ցիկլերը, էկոսֆերայի գործունեության մեջ բիոտայի դերը: **Թեմա 5.** Լանդշաֆտների աշխարհագրական զոնայականություն և նրա էվյուցիան: **Թեմա 6.** Աշխարհի բնակչությունը որպես գեոէկոլոգիական գործիք, ուրբանիզացիայի գեոէկոլոգիական ասպեկտները: **Թեմա 7.** Բնական ռեսուրսների և գեոէկոլոգիական ծառայությունների սպառումը: Տեխնիկական առաջընթացի գեոէկոլոգիական դերը: **Թեմա 8.** Կայուն զարգացումը և գեոէկոլոգիական վիճակի ինդիկատորները: **Թեմա 9.** Երկրի գեոսֆերաները և մարդու գործունեության ազդեցությունները մթնոլորտի և կլիմայի վրա: **Թեմա 10.** Կլիմայի անթրոպոգեն փոփոխությունը և նրա հետևանքները: Օզոնային շերտի քայքայումը: **Թեմա 11.** Էկոսֆերայի ասիդիֆիկացիան և թթվային անձրևներ: Օդի տեղական աղտոտումը: **Թեմա 12.** Ջրոլորտի հիմնական առանձնահատկությունները, ջրային տնտեսության գեոէկոլոգիական ասպեկտները, ցամաքի ջրի վատթարացումը և դեֆիցիտը: **Թեմա 13.** Հողային ռեսուրսների օգտագործման գեոէկոլոգիական հետևանքները: **Թեմա 14.** Պարարտանյութերի և պեստիցիդների օգտագործման գեոէկոլոգիական հետևանքները:

<u>3.1.22. Օտար լեզու (գերմաներեն)</u>

Նպատակը.

1. **նպաստել** անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, որը միտված է սովորողի հաղորդկակցվելու և համագործակցելու կարողությունների ընդլայնման, նոր լեզվական գիտելիքների ձեռքբերմանը,
2. **զարգացնել** թեմաների շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրում, ընթերցանություն, մենախոսություն, գրավոր խոսք, փոխներգործություն):

Սովորողներին ներկայացվող պահանջները (գիտելիք, կարողություն և հմտություն) համապատասխանում է ԼԻԵՇ-ի A1+, A2 մակարդակներին:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը</u>

Կիմանա՝

1. լեզվի հիմնական գործառույթները, դրանց համակարգային դրսևորումները և փոխկապակցման շարահյուսական առանձնահատկությունները,
2. բառապաշար,

2. քերականություն,

3. ինչյունագրության/արտասանական կանոններ,
4. մենախոսության և երկխոսության տեքստերի կազմակերպման առանձնահատկություններ,
5. ուսումնասիրվող լեզվի ժողովրդի մշակույթին բնորոշ հաղորդակցման ոչ լեզվական միջոցներ,
6. հաղորդակցման, բարեկիրթ խոսքի կաղապարները և վարքի նորմեր:

Կկարողանա՝

1. կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (բառապաշար, քերականություն, ուղղագրություն, արտասանություն):
2. Կարդալ, ընկալել, վերարտադրել ինչպես ընդհանուր հաղորդակցական նշանակության, այնպես էլ մասնագիտական բնույթի պարզ տեքստեր:
3. Վարել երկխոսություններ, կատարել համապատասխան տեքստերի վերարտադրություն:
4. Ունկնդրել և հասկանալ, խոսել, վարել մենախոսություն և երկխոսություն, ընթերցել, հասկանալ և առանձնացնել կոնկրետ, կանխագուշակելի կամ պահանջվող տեղեկությունները:
5. Կիրառել գործնականում գերմաներենի ձևաբանական և քերականական այն կառույցները, որոնք ուսումնասիրվում են այս փուլում:

Կտիրապետի՝

1. Տիրապետի համապատասխան թեմատիկ բառապաշարին, որը վերաբերում է առօրյա և մասնագիտական ոլորտին:
2. Համեմատի և համադրի տարբեր աղբյուրներից քաղված փաստերն ու տեղեկությունները:
3. Կառուցի մտքերը տրամաբանական կուռ կառուցվածքով:
4. Բացատրի տարբեր իրավիճաների շուրջ, այդ թվում նաև սեփական որոշումների հիմքերը:
5. Տիրապետի փոխհատուցման կարողությունների, որոնք օտարալեզու տեղեկատվություն ստանալու և հաղորդելու ժամանակ լեզվական գիտելիքների և միջոցների սղության պայմաններում թույլ են տալիս ելք գտնել դրությունից:

<u>24/Բ34 Օտար լեզու (գերմաներեն)-1 (4 Կրեդիտ)</u>

Շաբաթական 3 ժամ (36 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, սպուգարք

Բովանդակությունը.

Erste Kontakte am Arbeitsplatz

- Gespräche mit Kollegen.
- Die Büroeinrichtung und die Abteilungen beschreiben.
- Nach Preisen fragen.
- Über Freizeitaktivitäten sprechen.
- Gegenstände im Büro: Abteilungen: Preisangaben. Hobbys. Zeitangaben: Tage

Unterwegs in München

- Ein Hotelzimmer reservieren.
- Sich im Hotel anmelden.
- Probleme im Hotelzimmer benennen. Sich in einer Stadt orientieren.
- Informationen über Museen erfragen (Öffnungszeiten/Eintrittspreise)

- Hotel, Stadtplan, Sehenswürdigkeiten.
- Die beliebtesten deutschen Städte/ München.
- Zeitangaben: Uhrzeit, Tageszeit.

Essen und Trinken

- Essen und Trinken bestellen. Nahrungsmittel einkaufen.
- Einfache Rezepte lesen.
- Informationen über Essgewohnheiten geben und erfragen.
- Frühstück. Lebensmittel. Verpackungen und Maße.
- Anweisungen zum Kochen.
- Essgewohnheiten. Essen im Restaurant.

Alltag

- Tagesablauf beschreiben. Arbeitstätigkeiten und Computerfunktionen benennen.
- Über Vergangenes berichten. Termine vereinbaren und absagen.
- Tagesablauf.
- Tätigkeiten am Arbeitsplatz. Arbeit am Computer.
- Terminvereinbarung, Zeitangaben: Datum und Uhrzeit. Anrede und Grüße in Briefen.

24/Բ35 Օտար լեզու (գերմաներեն)-2 (7 Կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (90 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Բովանդակությունը.

Reisen

- Das Wetter beschreiben.
- Über Reiseziele sprechen. Gründe angeben.
- Sachen für den Urlaub benennen. Kleidung einkaufen.
- Sich nach Fahrkarten
- erkundigen.
- Über Urlaubserlebnisse berichten.
- Wetter, Jahreszeiten, Monate, Reiseziele
- Kleidung
- Farben
- Verkehrsmittel

Wohnen

- Eine Wohnung und die Wohnlage beschreiben.
- Wohnungsanzeigen lesen.
- Gespräche mit einem Makler führen.
- Über Möbel und die Wohnungseinrichtung sprechen.
- Den Weg beschreiben.
- Die Hausordnung lessen.
- Wohnung
- Wohnlage
- Umgebung der Wohnung
- Möbel

- Hausordnung

Begegnungen und Ereignisse

- Gute Wünsche formulieren.
- Eine Einladung annehmen/absagen.
- Die wichtigsten Körperteile nennen.
- Einen Termin beim Arzt vereinbaren.
- Ratschläge zum Thema Gesundheit geben.
- Wünsche.
- Einladung.
- Körperteile.
- Einfache Nachrichtensprache.
- Freie Tage in der EU.
- Die beliebteste Feier in Deutschland: die Weihnachtsfeier.

3.1.23. Զբոսաշրջային ընկերությունների ռազմավարական կառավարում

13/Բ13 Զբոսաշրջային ընկերությունների ռազմավարական կառավարում (3 Կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ գիտելիքներ զբոսաշրջային ընկերությունների ընդհանուր ռազմավարական կառավարման, զբոսաշրջային գործունեության առանձնահատկությունների և ոլորտում նորագույն տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

Զբոսաշրջային ընկերության ռազմավարական կառավարման հասկացությունը և նշանակությունը:

Կկարողանա՝

Ելնելով ընկերության տեսակից, գործունեության վայրից և ժամանակահատվածից՝ կիրառել անհրաժեշտ ռազմավարությունը:

Կտիրապետի՝

Զբոսաշրջային ընկերությունների կառավարման ռազմավարությունների առանձնահատկություններին, կիրառման միջոցներին, զբոսաշրջության արժեշղթային, զբոսաշրջության զարգացման միտումներին և ուղիներին Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում:

Բովանդակությունը.

Թեմա 1. Զբոսաշրջային ընկերության ռազմավարական կառավարման առանձնահատկությունները: **Թեմա** 2. Զբոսաշրջությունը որպես համաշխարհային տնտեսության առաջատար ճյուղ: **Թեմա** 3. Ժամանակակից զբոսաշրջային արդյունաբերության արդի

միտումները: **Թեմա** 4. Համաշխարհային զբոսաշրջության զարգացման տեմպերը Համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության /ՀԶԿ/ կողմից առանձնացված զբոսաշրջային տարածաշրջաններում: **Թեմա 5.** Զբոսաշրջության հիմնական սահմանումները, տեսակներն ու կատեգորիաները: **Թեմա 6.** Զբոսաշրջության ձևերի տարանջատումը՝ ըստ զբոսաշրջիկների տարիքի և քանակի: **Թեմա 7.** Զբոսաշրջության ձևերի տարբերակումը՝ ըստ փոխադրման միջոցների, տևողության և սեզոնի: **Թեմա** 8. Տրանսպորտային միջոցները տուրիզմում: **Թեմա 9.** Զբոսաշրջային փաթեթ և զբոսաշրջային ծառայություններ: **Թեմա** 10. Մարքետինգի կիրառությունը տուրիզմում: **Թեմա 11.** Զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի գործունեությունը և մատուցած ծառայությունները: **Թեմա 12.** Հյուրանոցային տնտեսության օբյեկտների ռազմավարական կառավարումը:

3.1.24. Էկոլոգիական տուրիզմ

13/Բ25 Էկոլոգիական տուրիզմ (8 Կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (50 ժամ դասախոսություն, 40 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին ուսուցանել տուրիզմի, մասնավորապես էկոլոգիական տուրիզմի սկզբունքներին, աշխարհագրությանը, կազմակերպման և անցկացման աշխատանքներին: Նպատակն է ներկայացնել «էկոտուրիզմ» հասկացությունը և դրա դերը կայուն զբոսաշրջության կառավարման գործում, ընդգծել զբոսաշրջության «էկո» և «կայուն» ձևերի տարբերությունը:

Ուսուցման արդյունքները. ուսանողները կիմանան էկոտուրիզմի սահմանումը, վերջինիս բացասական ազդեցությունը տեղի բնակչության և շրջական միջավայրի վրա, «կանաչեցման» նպատակները:

Էկոտուրիզմ - բնության և մշակութային տեսարժան վայրերի ուսումնասիրության և ըմբոշխնելու նպատակով շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ ճանապարհորդություն կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, շրջակա միջավայրի վրա ունենում է 'մեղմ' ազդեցություն, ապահովում է տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությունը և նրանց կողմից այդ գործունեությունից առավելությունների ստացումը: Բնության պահպանության միջազգային միություն: Էկոտուրիզմ - դեպի բնական տարածքներ պատասխանատու ճանապարհորդություն, որը նպաստում է բնության պահպանությանն ու բարելավում տեղացի բնակչության բարօրությունը: Էկոտուրիզմ - զբոսաշրջություն, որը իր մեջ ներառում է համեմատաբար անխախտ բնություն ունեցող վայրեր ճանապարհորդություններ տվյալ տարածքի բնական և մշակութա-էթնիկական առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով, որը չի խախտում էկոհամակարգի ամբողջականությունը և ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնց ներքո բնության ու բնական ռեսուրսների պաշտպանությունը արդյունավետ է դառնում տեղացի բնակչության համար:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը</u>

Կիմանա՝

-Լուսաբանել էկոտուրիզմի հասկացությունը, գործառության հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները:

-Օգտագործել զբոսաշրջային ոլորտը որպես գործիք ազգային և տարածաշրջանային մեղմացնող ռազմավարության համար:

-Բացահայտելտել էկոտուրիզմի իրավասությունը և էկոտուրիզմ և հարմարվողականությունը, բնական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման, շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով:

- Ճանաչել բնական միջավայրի կենսաբազմազմազանությունը, շրջապատում հանդիպող բույսերին և կենդանի օրգանիզմներին:

-Գնահատել ագրոէկոհամակարգերի և ազգային պարկերի հիմնական գործառույթները, որը կարող է կանխել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները:

Կկարողանա՝

- Լուսաբանել կենսաբազմազանության և մշակութային բազմազանության պահպանում

էկոհամակարգի պահպանման միջոցով,

-Իրականացնել կենսաբազմազանության օգտագործման կայուն գործընթաց, տեղական համայքների հետ սոցիալ-տնտեսական շահերի բաշխում՝ նախապես համաձայնեցնելով և համագործակցելով:

- Գնահատել և խթանել ներքին կամ տարածաշրջանային զբոսաշրջության զարգացումը՝ հատկապես հեռավոր սահմանային շրջաններում:

-Հիմնավորել վերընթաց գոտիականության համակարգում ագրոտուրիզմի զարգացման առավելությունները էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության գործում:

Կտիրապետի՝

-Ազգային, տարածաշրջանային և տեղական զարգացումն ապահովող մարքեթինգային ծրագրերին՝ ուղղելով՝ բնապահպանական և մշակութային գիտելիքների տարածմանը:

-Մարքեթինգային գործունեության ակտիվացում՝դեպի ավելի քիչ ծախսատարշուկաներ, առավելապես բարձր լեռնային գյուղական համայնքներ:

-Բնապահպանական նկատառումներից ելնելով՝ թափոնների կառավարման հմտություններին, ելնելով էկոտուրիզմի և էգոտուրիզմի չափանիշներից:

-Կայուն զարգացում ապահովելու նպատակով տուրիստական և բնապահպանական կազմակերպությունների ներդաշնակ գործողությունների հիմնական սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կայունություն և կայուն զարգացում հասկացությունները:

Թեմա 2. Կայունության էկոլոգիական, սոցիալական և տնտեսական հետաքրքրությունների ներդաշնակությունը:
Թեմա 3. Կայուն զբոսաշրջություն հասկացությունը:
Թեմա 4. Զբոսաշրջության ոլորտի միջազգային կազմակերպությունները:
Թեմա 5. Էկոլոգիական տուրիզմ հասկացությունը, հիմնական սկզբունքները:
Թեմա 6. Էկոլոգիական տուրիզմը որպես կայուն զբոսաշրջության հիմք:
Թեմա 7. Էկոտուրիզմ և էգոտուրիզմ:
Թեմա 8. Ազգային պարկեր, գործունեության սկզբունքները, շրջակա միջավայրի բացասական ազդեցությունները:
Թեմա 9. Կայունությանը միտված որոշումներ:
Թեմա 10. Էկոտուրիզմի իրավասությունները:
Թեմա 11. Էկոտուրիզմ և հարմարվողականություն:
Թեմա 12. Անկլավ զբոսաշրջություն Տեղի բնակչության տնտեսական կախվածությունը զբոսաշրջությունից:
Թեմա 13. Էկոլոգիական թողունակություն:

3.1.25. ՀՀ բնական և պատմաճարտարապետական հուշարձանները

13/Բ25 ՀՀ բնական և պատմաճարտարապետական հուշարձանները (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (44 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար)
7-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը.

1. Ուսանողներին գիտելիքներ տալ Հայաստանի և հայ ժողովրդի բազմադարյա պատմաճարտարապետական մշակույթի մասին:
2. Ներկայացնել ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի հայկական պատմաճրտարապետական հուշարձանները, նրանց պահպանման հիմնախնդիրները:
3. Խթանել ուսանողների տուրիստական երթուղիներ կազմելու, ինչպես նաև ուրվագծային քարտեզների հետ աշխատելու հմտություններին:
4. Օժտել արդյունավետ երթուղիներ կազմելու և զբոսաշրջիկներին տուրիստական վայրերը ճիշտ ներկայացնելու կարողություններով:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կիմանա՝

Գիտելիք. Կիմանա ՀՀ մարզերի ընդհանուր բնութագիրը: Կկարողանա տալ բնական և պատմաճարտարապետական հուշարձանների սահմանումները, միմյանցից տարբերել բնական և պատմաճարտարապետական հուշարձանները:

ՀՀ բնական և պատմաճարտարապետական հուշարձանների աշխարհագրությունը: Կկարողանա նկարագրել մարզերում առկա հուշարձանները, դրանց կառուցվածքային և ճարտարապետական առանձնահատկությունները:

Վերլուծել մարզերի զբոսաշրջային ներուժը:

Ցույց տալ հուշարձանների տեղադիրքը քարտեզի վրա:

Ներկայացնել հուշարձանների հետ կապված ավանդազրույցներն ու լեգենդները:

Ներկայացնել սփյուռքի հայկական հուշարձանները, դրանց հետ կապված ավանդազրույցները և հուշարձանների պահպանման հիմնախնդիրները:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա՝

Կարողություն.Կկարողանա գնահատել բնական և պատմաճարտարապետական հուշարձանների դերը տուրիզմի զարգացման գործում:

Անցկացնել բնական և պատմաճարտարապետական հուշարձաններն ուրվագծային քարտեզի վրա:

Բացահայտել երթուղիների կազմման օրինաչափությունները:

Կազմել ճիշտ տուրիստական երթուղիներ:

Ճիշտ պլանավորել ժամանակը:

Վեր հանել ՀՀ-ում և սփյուռքում գտնվող հայկական պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման խնդիրները:

Առաջարկել լուծման ուղիներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի՝

Հմտություն. Կարժևորի պատմաճարտարապետական հուշարձարձանները՝ որպես անցյալի ժառանգություն:

Կկարողանա ստացած գիտելիքը ճիշտ ներկայացնել զբոսաշրջիկներին:

Կկազմել օպտիմալ երթուղիներ և ճիշտ կկառավարի ժամանակը:

Կտիրապետի ուրվագծային քարտեզների հետ աշխատելու և օպտիմալ երթուղիներ կազմելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: Դասընթացի բովանդակությունը, նպատակը, խնդիրները:

Թեմա 2. Բնական և պատմաճարտարապետական հուշարձանները որպես տուրիզմի զարգացման բազա: Բնական հուշարձանները՝ երիտասարդ հրաբխային կոներ ու խառնարաններ, խառնարանային լճեր, «քարային ծովեր», լավատակ աղբյուրներ, բազալտային սյունաձև առանձնացումներ, ժայռաբուրգեր, կարստային քարայրեր, էրոզիոն կանիոներ ու գեղատեսիլ կիրճեր, ջրվեժներ դարավոր ծառեր, արգելոցներ, արգելավայրեր

Պատմական և պատմաճարտարապետական հուշարձաններ՝ տաճարներ, վանքեր, եկեղեցիներ, բերդ-ամրոցներ, կամուրջներ, խաչքարեր:

Թեմա 3. Բնական և պատմաճարտարապետական հուշարձանները ըստ մարզերի: Մարզի բնական պայմանների և տնտեսության բնորոշ կողմերի համառոտ ակնարկ: Բնական հուշարձանները, պատմամշակույթային հուշարձաններ: Տուրիստական երթուղիների մշակումը:

Թեմա 4. Տուրիզմի զարգացման հեռանկարները Հայաստանում:

Թեմա 5. Սփյուռքի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները: Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի, Վենետիկի, Վիեննայի, Կրակովի, Յալթայի, Օդեսայի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, ԱՄՆ-ի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները:

11/Բ2 Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը սերվիսում (6 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ու դրանց սերվիսում օգտագործման մասին տեսական ու կիրառական գիտելիքներ:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ գեոինֆորմացիոն համակարգերի գործառական կառուցվածքի տեսական հիմքերը,

Կկարողանա՝ կհասկանալ ԱՏՀ-ում տվյալների կառավարման մեխանիզմը,

Կտիրապետի՝ ինքնուրույն կերպով ստեղծել ԱՏՀ տվյալների հենք սերվիսի կազմակերպման նպատակով:

Բովանդակությունը.

Թեմա 1. Գեոինֆորմատիկայի ընդհանուր դրույթները: **Թեմա 2.** Տվյալների գրանցումը, մուտքագրումը և պահպանումը: **Թեմա 3.** Տարածական տվյալների կառուցումը: **Թեմա 4.** Տվյալների վերլուծությունը և մոդելավորումը: **Թեմա 5.** Տվյալների բազաների կառավարման համակարգերը: **Թեմա 6.** Հասկացություն ինտեգրացիոն համակարգերի մասին: **Թեմա 7.** Մեքենայական գրաֆիկայի տեխնիկական միջոցները, տվյալների տեսանելիացման մեթոդները և միջոցները: **Թեմա 8.**Գեոինֆորմատիկայի կիրառումը սերվիսում:

3.1.27. Հոգեբանություն

23/Բ33 Հոգեբանություն (5 Կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 դասախոսություն, 10 գործնական)

8-րդ կիսամյակ, սպուգարք

Նպատակը.

Ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ հոգեբանության տեսական ընդհանուր հիմունքների գիտական սկզբունքների, հասկացությունների վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝ Հոգեկանի էությունը, կառուցվածքը, գործընթացները, առանձնահատկությունները, հուզակամային ոլորտը, հոգեկանի վիճակները:

Կկարողանա՝ զանազանել կոգնիտիվ, հուզական, վարքային ոլորտների առանձնահատկությունները և դրանց առաջացման, դրևսորման, ազդեցության շրջանակները:

Կտիրապետի՝ Ճանաչողական գործընթացների առանձնահատկություններին, հոգեբանության ոլորտի հետազոտական մեթոդներին ու սկզբունքներին, մանկավարժական ոլորտում կիրառվող հոգեբանական թեստերի անցկացման հմտություններին:

Բովանդակությունը.

1. Հոգեբանությունը՝ որպես գիտություն:
2. Հոգեբանության մեթոդները:
3. Հոգեկանի հասկացությունը:
4. Զգայություններ. հիմնական բնութագիրը, տեսակները, հիմնական հատկանիշները:
5. Ընկալում. հիմնական բնութագիրը, տեսակները, հիմնական հատկությունները:

6. Հիշողություն. հիմնական բնութագիրը, տեսակները, գործընթացները:
7. Ուշադրություն: Մտածողություն. բնութագիրը, տեսակները, գործընթացները:
8. Խոսք, Երևակայություն գործընթացների բնութագիրը, տեսակները:
9. Պահանջմունքներ, դրդապատճառներ:
10. Հույզեր, զգացմունքներ, ապրումներ:

<u>3.1.28. Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգ</u>
<u>12/Բ14 (7 Կրեդիտ)</u>
Շաբաթական 6 ժամ (60 դասախոսություն, 30 սեմինար)
8-րդ կիսամյակ, քննություն
Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ հյուրանոցային և ռեստորանային ոլորտի մարքեթինգի տեսական հիմնահարցերի ու գործնական գործիքների վերաբերյալ համալիր գիտելիքներ, զարգացնել ոլորտային շուկայի վերլուծության, ռազմավարական պլանավորման, ծառայությունների փաթեթավորման, գնագոյացման, փոխհարաբերությունների մարքեթինգի, վաճառքի խթանման և հաճախորդամետ կառավարման հմտություններ՝ ապահովելով ուսանողների պատրաստվածությունը հանրային սննդի և հյուրանոցային բիզնեսում արդյունավետ մարքեթինգային գործառույթներ իրականացնելու համար:

<u>Դասընթացի ավարտին ուսանողը.</u>

Կիմանա՝

- Հյուրանոցային և ռեստորանային ոլորտների առանձնահատկությունները և դրանցում մարքեթինգի դերը:
- Շուկայի բաժանման, թիրախավորման և դիրքավորման սկզբունքները՝ ծառայությունների ոլորտի առանձնահատկություններով:
- Մարքեթինգային միջավայրի հիմնական գործոնները և մրցակցային վերլուծության գործիքները:
- Ապրանք/ծառայություն քաղաքականության, գնագոյացման, դիստրիբուցիայի և խթանման ռազմավարությունների կիրառման հիմնադրույթները:
- Սերվիս-մարքեթինգի 7P մոդելի կիրառման առանձնահատկությունները հյուրանոցային և ռեստորանային ոլորտում:
- Հաճախորդի վարքագծի ազդեցությունը մարքեթինգային որոշումների վրա:
- Թվային մարքեթինգի և սոցիալական մեդիայի կիրառման հիմունքները HoReCa հատվածում:

Կկարողանա՝

- Վերլուծել հյուրանոցային կամ ռեստորանային կազմակերպությունների շուկան, հիմնվելով մրցակիցների, հաճախորդների և միջավայրի ուսումնասիրության վրա:
- Մշակել մարքեթինգային ռազմավարություն՝ հիմնված ոլորտի պահանջների և կազմակերպության նպատակների վրա:
- Կազմել ծառայությունների մարքեթինգային փաթեթ (ծառայությունների ձևավորում, ներգրավող առաջարկների մշակում):
- Կիրառել գնագոյացման արդյունավետ մեթոդներ՝ հաշվի առնելով ծախսերը, շուկան և մրցակցությունը:
- Մշակել և իրականացնել վաճառքի խթանման ծրագրեր:

- Կազմել և իրականացնել թվային մարքեթինգային արշավ հյուրանոցային կամ ռեստորանային բիզնեսի համար:
- Կիրառել հաճախորդամետ սպասարկման մեթոդներ և կազմակերպել feedback management:

Կտիրապետի՝

- Հյուրանոցային և ռեստորանային մարքեթինգի համապարփակ գործիքակազմին:
- Շուկայի և ծառայությունների պահանջարկի գնահատման մեթոդներին:
- Մարքեթինգային պլանի կազմման, իրականացման և գնահատման տեխնոլոգիաներին:
- Մրցակցային դիրքավորման և բրենդինգի գործնական մեթոդաբանությանը:
- Սպասարկման որակի կառավարման և հաճախորդների հավատարմության ձևավորման սկզբունքներին:
- Թվային մարքեթինգային հարթակների (social media, Google tools, OTA platforms) կիրառությանը՝ HoReCa ոլորտում տեսանելիության և վաճառքների աճի համար:

Բովանդակությունը.
Թեմա 1. Հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի նախապատմություն: **Թեմա 2.** Հյուրընկալող օբյեկտների սահմանումն ու նկարագրությունն ըստ ՀՀ զբոսաշրջության օրենքի: **Թեմա 3.** Ռեստորանային սպասարկում: **Թեմա 4.** Մարքեթինգի պլանավորում և դիրքավորում հյուրընկալություն իրականացնող օբյեկտներում: **Թեմա 5.** ՀՀ-ում կիրառվող զբոսաշրջության տեսակները և դրանց առանձնահատկությունները: **Թեմա 6.** Զբոսաշրջության ծառայությունները: **Թեմա 7.** Զբոսաշրջության տնտեսական արդյունավետությունը: **Թեմա 8.** Տուրիստական ֆիրմայի ղեկավարման ոճը:

3.1.29. Ռեկրեացիոն աշխարհագրություն
13/Բ39 Ռեկրեացիոն աշխարհագրություն (6 կրեդիտ)
Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
8-րդ կիսամյակ, քննություն
Նպատակը.
Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին գաղափար տալ ռեկրեացիոն ոլորտի սոցիալական նշանակության մասին: Ցույց տալ այն մեծ դերը, որ ռեկրեացիոն տնտեսությունը ունի առանձին երկրների ժողովրդատնտեսական համակարգի մեջ: Հմտություններ ձեռք բերել գնահատելու տարածքի ռեկրեացիոն կարողությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը կիմանա

/Գիտելիք/.

Գիտի այն մեծ դերն ու նշանակությունը, որ ունի ռեկրեացիան բնակչության առողջության վերականգնման, հանգստի կազմակերպման գործում: Միաժամանակ կհասկանա ռեկրեացիոն տնտեսության և բնական միջավայրի փոխկապակցությունները:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կկարողանա

/Կարողություն/

բացահայտել և գնահատել բնական միջավայրի, նրա առանձին բաղադրիչների նշանակությունը մարդկանց սոցիալական կարիքների գնահատման գործում:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը կտիրապետի

/Հմտություն/

բնական միջավայրի առանձին բաղադրիչների սոցիալական բովանդակության բացահայտման արվեստին:

Բովանդակություն

Թեմա 1. Ռեկրացիոն աշխարհագրության առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Ռեկրեացիոն աշխարհագրության կապը մյուս գիտությունների հետ: **Թեմա 3.** Ռեկրեացիան որպես սոցիալ-տնտեսական երևույթ: **Թեմա 4.** Ռեկրեացիոն գործունեության առանձնահատկությունները: **Թեմա 5.** Ռեկրեացիոն գործունեության դասակարգումը: **Թեմա 6.** Ռեկրեացիոն ոլորտը, ռեկրեացիայի տարածքային կազմակերպման և զարգացման պայմանները և գործոնները: **Թեմա 7.** Ռեկրեացիոն տարածքի տարողության որոշման խնդիրները: **Թեմա 8.**Բնական համալիրների վրա ռեկրեացիոն ծանրաբեռնվածության որոշումը: **Թեմա 9.** Պատմամշակութային ռեկրեացիոն ռեսուրսներ: **Թեմա 10.** Ռեկրեացիոն շրջանացում: **Թեմա 11.** Միջազգային տուրիստական հոսքերի առանձնահատկությունները, դրանց բնութագիրը: Տուրիստական հոսքերի և ռեկրեացիոն շրջանների զարգացման կապը: Աշխարհի ռեկրեացիոն շրջանների և երկրների համառոտ բնութագիրը: **Թեմա 12.** ՀՀ-ն միջազգային ռեկրեացիոն համակարգում: **Թեմա 13.** Էկոլոգիական տուրիզմի էությունը, զարգացման միտումները: Էկոլոգիական տուրիզմի տարածումը:

4. ***Այլ կրթական մոդուլներ***

<u>4.1. Ուսումնական պրակտիկա</u>
<u>0201/Բ61 Ուսումնական պրակտիկա (4 կրեդիտ)</u>
4-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.
Ուսումնական պրակտիկայի նպատակն է ձևավորել ուսանողների մոտ սերվիսային ոլորտին բնորոշ սկզբունքների, տեխնոլոգիաների և աշխատանքային գործընթացների կիրառական ըմբռնում, զարգացնել մասնագիտական հմտություններն ու կարողությունները՝ իրական աշխատավայրում դիտարկումների, վերլուծությունների և գործնական աշխատանքի միջոցով: Պրակտիկան ուղղված է ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, աշխատանքային միջավայրում ադապտացման կարողության ամրապնդմանը և սպասարկման մշակույթի պահանջներին համապատասխան գործնական փորձառության ձեռքբերմանը:
Պրակտիկայի ավարտից հետո ուսանողը.

Կիմանա՝

- Սերվիսային ոլորտի հիմնարար սկզբունքները, ծառայությունների կազմակերպման մեթոդներն ու փուլերը:
- Հաճախորդների սպասարկման ստանդարտները, հաղորդակցության էթիկան և վարքագծային նորմերը:
- Սերվիսային կազմակերպության կառուցվածքը, բաժինների գործառույթները և ներքին ընթացակարգերը:
- Սպասարկման որակի գնահատման ցուցանիշները և արդյունավետության չափման մեթոդները:

Կկարողանա՝

- Իրականացնել հաճախորդների սպասարկման հիմնական գործողությունները՝ դիմավորում, խորհրդատվություն, տեղեկատվության տրամադրում:
- Կիրառել մասնագիտական հաղորդակցություն՝ բանավոր և գրավոր, ներառյալ բողոքների և խնդիրների մշակումը:
- Կատարել կազմակերպության ներքին օպերացիոն առաջադրանքներ՝ փաստաթղթաշրջանառություն, տվյալների գրանցում, տեղեկատվության փոխանցում:
- Վերլուծել ծառայությունների մատուցման գործընթացները և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման համար:
- Աշխատել թիմում՝ պահպանելով մասնագիտական էթիկան և ընկերության աշխատակարգը:

Կտիրապետի՝

- Սպասարկման մշակույթի կիրառական հմտություններին՝ հաճախորդին ուղղված վարքագիծ, փոխգործակցության արդյունավետ ձևեր:

- Ժամանակի կառավարման, խնդիրների լուծման և գործառույթների առաջնահերթության հմտություններին:
- Սերվիսային կազմակերպության գործնական աշխատանքին՝ համապատասխանեցված ոլորտի պահանջներին և իրական միջավայրում ձևավորված փորձին:
- Սպառողների պահանջների վերլուծության, հաղորդակցական տեխնիկաների և ծառայությունների որակի բարելավման գործիքներին:

4.2. Արտադրական պրակտիկա

0201/Բ62 Արտադրական պրակտիկա (6 կրեդիտ)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Արտադրական պրակտիկայի նպատակն է ապահովել ուսանողների մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների խորացումը՝ իրական արտադրական (սերվիսային) միջավայրում ինքնուրույն աշխատանքի միջոցով: Պրակտիկան ուղղված է ուսանողների պատրաստմանը՝ որպես ծառայությունների մատուցման գործընթացում մասնակցող ինքնուրույն մասնագետներ, հնարավորություն տալով նրանց գործնականում կիրառել համալսարանում ձեռք բերած տեսական գիտելիքները, կատարել իրական աշխատանքային առաջադրանքներ և գնահատել սեփական մասնագիտական ունակությունները:

Պրակտիկայի ավարտից հետո ուսանողը.

Կիմանա՝

- Սերվիսային կազմակերպությունների գործունեության կառուցվածքն ու գործառույթները:
- Ծառայությունների մատուցման ամբողջական տեխնոլոգիական շղթան՝ հաճախորդի դիմումից մինչև հետադարձ կապ:
- Աշխատանքային միջավայրի անվտանգության, հիգիենայի և մասնագիտական էթիկայի պահանջները:
- Օպերացիոն կառավարաման, հաճախորդների սպասարկման և որակի վերահսկման հիմնական սկզբունքները:
- Կազմակերպության քաղաքականությունները, ներքին կանոնակարգը և ծառայությունների մատուցման ստանդարտները:

Կկարողանա՝

- Իրականացնել մասնագիտական պարտականություններ՝ ծառայությունների մատուցման, հաճախորդների սպասարկման, տեղեկատվության տրամադրման և գործընթացների կազմակերպման ոլորտներում:
- Իրականացնել հաճախորդների կարիքների գնահատում, առաջարկել օպտիմալ լուծումներ և ապահովել բարձրորակ սպասարկում:
- Կատարել կազմակերպության օպերացիոն գործընթացները՝ պատվերների ընդունում, գրանցում, տվյալների մշակում, փաստաթղթավորում:

- Աշխատել իրական թիմում, համագործակցել տարբեր բաժինների աշխատակիցների հետ և լուծել աշխատանքային խնդիրներ:
- Օգտագործել ժամանակակից առկա գործիքներ և ծրագրեր (օր.՝ բուքինգ, CRM համակարգեր, ներբաժնային ծրագրեր):
- Վերլուծել կազմակերպության ծառայությունների արդյունավետությունը և ներկայացնել մասնագիտական առաջարկություններ դրանց բարելավման համար:

Կտիրապետի՝

- Սերվիսային միջավայրում ինքնուրույն մասնագիտական գործունեություն վարելու հմտություններին:
- Հաճախորդամետ մոտեցման գործնական մեթոդներին և արդյունավետ հաղորդակցման տեխնիկային:
- Սերվիսային ծառայությունների որակի կառավարման գործիքներին:
- Իրական աշխատանքային գործընթացներում առաջացող խնդիրների արագ և հիմնավորված լուծման մոտեցումներին:
- Արդյունավետ թիմային համագործակցության, պատասխանատվության և կազմակերպչական հմտություններին:

4.3. Նախաավատական պրակտիկա

0201/Բ18 Նախաավատական պրակտիկա (4 Կրեդիտ)

8-րդ կիսամյակ, քննություն

Նախաավարտական պրակտիկայի արդյունքում ուսանողը.

Կիմանա՝

1. ավարտական աշխատանքի համար լրացուցիչ մասնագիտական գրականություն և նյութեր որոնելու և պատրաստելու միջոցները,
2. ավարտական աշխատանքի ձևավորման և ներկայացման եղանակները,

Կկարողանա՝

խմբագրել և ներկայացվելի տեսքի բերել ավարտական աշխատանքը,

Կտիրապետի՝

կատարված աշխատանքը ներկայացնելու սերվիսի բակալավրին հատուկ ունակություն:

4.4. Ամփոփիչ ատեստավորում

0201/Բ63 Ամփոփիչ ատեստավորում (8 Կրեդիտ)

8-րդ Կիսամյակ, քննություն

Ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո ուսանողը պետք է.

Գիտենա՝

ավարտական աշխատանքի հիմնական նպատակը և խնդիրները, կատարած աշխատանքը ներկայացնելու հմտությունները, գլխավորը երկրորդականից տարբերելեւ հմտությունները:

Կարողանա՝

շարունակել աշխատանքը ավարտական աշխատանքի թեմատիկայով: Օգտագործել ստացած գիտելիքները աշխատանքի և/կամ մագիստրատուրայում սովորելու ընթացքում:

Տիրապետի՝

- Գիտական և մասնագիտական հաղորդակցության մշակույթին՝ բանավոր և գրավոր ներկայացման տեխնիկաներին:

- Իր գիտական աշխատանքի անկախ կազմակերպման, պլանավորման և իրականացնելու հմտություններին:
- Հետազոտության արդյունքների կիրառման գործնական եղանակներին՝ սերվիսային ոլորտի իրական խնդիրների լուծման համատեքստում:
- Տվյալների վերլուծության, արդյունքների համակարգման և հիմնավորված որոշումների կայացման կարողություններին:
- Մասնագիտական ինքնաարժևորումին, քննադատական մտածողության մեթոդներին և հետազոտական գործունեության շարունակականության կարևորությանը: